


30

q u s u t r i t t u

U b d h u q b s f u u h




ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾԻՆ ՊԵՏՈՒԹՅ

ԿՈՅԱՐ ԱՄԵՆԱՅՆ ԹՈՒՍԱՑ

Աշխատասիրեաց Ռազմայէլ Պատկանեան




1863

Ա. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Печатать позволяетъ съ тѣмъ, чтобы по отпечатаніи  
представлено было въ Цензурный Комитетъ установлен-  
ное число экземпляровъ. С. Петербургъ. 27 Августа  
1861 года.


Управляющій должность Цензора С. Загибенинъ.



Цензор  
128

Санкт-Петербургъ Губернаторъ Адмиралтейство:





ՆԱՐԻՆ ԿԱՅՍԵՐ ԱԿԱՆ

ԸԱԼ ԶԲՈՒԹԵԱՆ

ԿԱՅՍԵՐՈՒԹԻԱՑ ԵՏ ԳԵՎԵՔ ԵՌԵՄԴԻ

ՆԻԿԱԼԱՅ Ա. Է. Ք Ս Ա. Ն Դ Բ Ա Վ Հ Ի Ն

ամենահպատակաբար նուիրում է

Ուսպայէլ Պատկանեալ.



համար պէտք էին տասնեակ դարեր և շատ  
քանքարաւոր մարդոց քրտնաջան և անդուլ  
վաստակք:

Պետրոսի մանկութեան օրերումն Ռուսաս-  
տանը քարրարոսական աշխարհ էր. լուսաւորու-  
թիւնը, գիտութիւնը՝ ինչպէս վարակիչ ցառք,  
ինչպէս չար տղանդք չարաչար հալածում էին  
քսահինդ միլիոնեայ ժողովրդէն, այն ինչ զրացի  
Եւրոպան կատարելագործութեան վերնագոյն  
սատիճանին էր հասած:

Հերոսական ուսերու վերաց շալակած իւր  
ժողովուրդը՝ Անձն Պ'տրոսը հսկայի քայլերով  
վաղեց այդ լուսաւոր ժողովարդներու ետևէն  
և . . . հասաւ: Դաբայներ, արուեստատուններ,  
գործարաններ, նոուարաններ, ջրանցքներ և հա-  
զար ու բիւր ուրիշ միջոցներ աղքային լուսա-  
ւորութեան, ինչպէս կախարդական գաւազանի  
զօրութեանով, յերեւան եկան Ռուսաստանի մ.ջ,  
որ երբեմն ծածկած էր լայնատարած դաշտանա-  
բնակ անտառներով, ամայի վայրերով և դար-  
շաշունչ մօրատներով:

## ՅԱՌԱՋԱՔԱՆՈՒԹԻՒՆ

ՄԵԾՆ ՊԵՏՐՈՍԸ միշտ մնալու է սկասովութեան մէջ ինչպէս մի չքնաղ նախագաղափար աշխարհաշէն, ազգասէր և այն ամենայն առաքինութենով զարդարած թագաւորի, որ ինչպէս կենդանի օրինակ պիտի լինի աշխարհիս ամեն հզօրների առաջն: Նորա վարքը պիտի մնայ ինչպէս հետախուզելի առարկայ ամեն վիճակի և կոչման մարդոց համար՝ ամենաբարձրից բռնած մինչև ամենաստորը:

ՊԵՏՐՈՍ ՄԵԾԸ, իւր շահատակութիւններովիս, համեմատվում է այն դիւցաղներուն, որոնց որ նախնի մարդկութիւնը, մարդուն տկար արարած կարծելով, չի համարձակել նոյն մարդ կոչելու, ուստի նոյն անունը դիբ կամ չաստուածք է դրել: Աներկբայելի է, որ Յոյնի վառերեակայութիւնը սորա յիշատակը գիշերուայ անամս երկնակամարի վրայ աստղերով կ'արձանագրէր, եթէ ՊԵՏՐՈՍ ՄԵԾԸ կեցած լինէր նոյն մէջ, մեղանից երեք հազար տարի առաջ:

ՄԻԱՅՆ Հանձարի, միմիայն կիսաստուածի գործ էր քառորդ գարումը կատարել այն, ինչու

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Մանկութիւնը : — Դրաստիարակութիւնը : — Սորելէցների առլուս-  
տամբութիւնը : — Առփիայի զաւերը : — Կարա պատուհանը : — Թիա-  
բոսի միասպեսութիւնը :



# ՊԱՏՄԱՆ ԹՎԵԿԵ

Մ Ե Ծ Ի Ն Պ Ե Տ Ր Ո Ս Ի

Գ Լ Ո Ւ Խ Ը Ր Ա Զ Ի Ն

Մանկութիւնը : — Դաստիարակութիւնը : — Առբէլէցների ապօստամբութիւնը : — Սօվիայի դաւերը : — Նորա պատուհասը : — Գիւղասի միապետութիւնը :

Եթին Պետրոսի հայրը Ալեքս արքան երկու անգամ էր ամուսնացած . առաջին ամուսնութիւնից ունէր երկու որդի՝ Թէոդոր և Խլան և մի զուստր Սօվիա անունով : Երկրորդ անգամ պսակուեցաւ նա Նաթալիա օրիորդի հետ , որ Նառիշկինի տոհմէն էր և 1672ին Ս. Խաչակ Պալմադացիի տօնի օրը ժնաւ Պետրոսը :

Կորա անունը Պետրոս կոչուելու պատճառը  
այն չէր, որ նորա ծնողքը այդպէս էին կամեցել,  
նմանապէս ոչ ՚ի պատիւ որպէս և իցէ արքայ-  
ազն տոհմի . այլ մի սրբակրօն արեղայ՝ անունը  
Սիմեոն , Պետրոսի ծնելէն առաջ մարգարէացել  
էր, ասելով . , „Նորածնունդ արքայորդին Պետրոս  
պիտի կոչուի և նորավառքը լուսանանէ սատղի  
նման պիտի բարձրանայ և աշխարհ արարած պիտի  
լուսաւորէ“ :


Պետրոսի ծնունդը անսրամմելի ուրախու-  
թեամբ լցուց թէ նորա հօր և թէ բոլոր Ռու-  
սերի սիրով, ինչու որ՝ նորա երկու եղբարքը  
թուլամորթ և հիւանդու էին , իսկ ինքը Ա-  
լեքարարդէն տարիքը առած էր, որով շատ դիւ-  
րին էր որ ծերացած արքայի մեռնելէն յետոյ Ռուս-  
սիոյ գահը կամ գատարկ մնար և կամ մերձակայ աղգերի աշխարհակալութեան խաղալիկ լինէր :  
Յունիսի 29ին Ս. առաքելոց Պետրոսի և Պաղոսի  
տօնի օրը կատարուեցաւ մանուկ արքայազնի մը-  
կըստութեան ծէսը Զուգով մենաստանի մէջ ,  
Կնքահայրը Թէօդօր արքայորդին էր , իսկ կնքա-  
մայրը՝ Խրինէ դշխոն :

Վանուկ արքայորդին օրօրոցի մէջ ական  
տեսանելի աճում և զարգանում էր , և ինչպէս  
ժամանակակից տարեցիրն է ասում . , Աստուծոյ  
շնորհը նորա վերայ էր“ : Նորա հօր սրտի ու-  
րախութիւնը ոչ չափ ուներ , ոչ չափ ման , երբ

տեսնում էր նորա օրէ օր ծաղկի պէս փթթելը  
և փայլուն յոյսերը Ռուսսիոյ ապագայ բարօրու-  
թեան մասին վերանորոգւում էին Ալեքսի Հոգ-  
ւոյ մէջ : Խոր որդւոց մէջ ամենից առաւել Պետ-  
րոսին էր սիրում նա, և խոր բոլոր Տիգը և մը-  
տադրութիւնը նորա վերայ էր դարձած, որպէս  
զի յապահով լինէր նորա անգին կեանքը :

Վա գեռ ևս երեխայական հասակի մէջ էր,  
երբ արդէն սկսել էր ցոյց տալու խոր զգօնու-  
թիւնը և պատերազմասէր ոգին : Նորա տօնի օրը  
զանազան ընծաների հետ միասին տուել էին  
նորան նաև մի թուր : Անմեկնելի էր երեխայի  
ուրախութիւնը այդ պարգևի համար . ուրախ  
ուրախ գնաց հօրը մօտ և խնդրեց, որ նա խոր  
ձեռքով նորա մէջքին կապէ այդ թուրը, և այ-  
նուհետև ոչ գիշեր և ոչ ցերեկ ձեռքէն բաց  
չէր թողնում, և շատ անգամ քնելիս հետն էր  
առնում անկողնի մէջ :

Վորա պատերազմասէր ոգին առաւել աճե-  
ցընելու խորհրդով՝ Ալեքս արքան հրամացեց,  
որ աւագանւոյ որդւոցը ժողովին, զինւորական  
նշանազգեստ հագցնեն և նոցա հետ միասին Պետ-  
րոսին զինւորական վարժքով զբօսեցնեն : Մի ժա-  
մանակայդ մանկահասակ զինւորներից շատ խում-  
բեր և վաշտեր կազմուեցան և Պօտէ շնորհ  
(զբօսեցուցիչ) անուն ստացան : Հուսկ յետոյ նո-



բանից երկու թիկնապահ՝ գունդ բաղկացան՝ մինը  
Պաէօրոօմէնսկի և Ժրալը՝ Սիմիօնօվսկի :

1676ի Յունուարի 30ին վախճանեցաւ Ալէքս  
արքան և եռամեայ Պետրախն յանձնեց Կիրիլ  
Նառիշկինի և այլ հաւատարիմ բոյարների խը-  
նամքին, ալատուիրելով նոցու, որ իւր սիրական  
որդուն իւրեանց աշքի լուսի պէս սրահպանեն :

Խուսափոյ գահը ժառանգեց Ալէքսի երեց որ-  
դին Թիօդորը: Մենք լուսութեամբ կ'անցնենք այն  
գէտքերովն, որոնք սյդ միջոցին հանդիպեցան,  
ըստ որում նոքա ամենին յարակցութիւն չու-  
նին մեր պատմութեան հետ. այնքան միայն կ'ա-  
սենք, որ Միլուսավսկի բայարների (Ալէքսի ա-  
ռաջին ամուսինը Միլուսավսկի տոհմեն էր) նենդ  
հնարներով և բանսարկութենովն հալածուեցան  
կամ աքսորուեցան Նութալիս դշխոյի շատ աղ-  
գականները և մոերիմ բարեկամները: Բայց Թի-  
օդոր աքքան շատ սիրում էր Պ'արտախն և ոչ  
միայն խոջընդուան եղաւ նորա օդտաւետ պատե-  
րազմական զբօսանքին, այլ ընդհակառակն՝ Նա-  
թալիոյ հետ միասին մեծ մասդրութեամբ ըլ-  
րազեցաւ նորա գաստիարակութեան մասին:

Երբ որ Պ'արտաը իւր հնդամեայ հասակը  
մտաւ՝ նորա դասոիսիարակիչ կարդեցաւ գբագետ  
Գօթօվլը, որ իմէն ինքը շատ խորին գիտութեան  
տէր Հէր, բայց իւր իմացածը աննախանձաբար  
հաղորդեց իւր արքայակն սանին, եւ այդ կերպով

Առուսաստանի ապագայ լուսաւորիչը սովորեցաւ  
նորանից կարդալ գրել և Առուսախոյ պատմու-  
թեան գլխաւոր անցքերին թիւթեան ծանօթու-  
թիւն ստացաւ, բայց երբ որ Պ'տրոսը իւր վար-  
ժապետի բոլոր իմացածը բամեց և սպառեցուց,  
այն ժամանակնորան յանձնեցին Շելյացարացի Ալ-  
ֆօրթին, որ վերջի ժամանակները Պ'տրոսի սըս-  
տակից բարեկամը դարձաւ: Այս խելացի օտար-  
ազդին շուտ հարկացաւ իւր արքայազն սանի  
հանձարեղ ընդունակութիւնը. իմացաւ և այն,  
թէ ինչ ու ինչ պէտք էր սովորեցնելու, ու սկսաւ  
նորան գաղափար տալու տէրութեան կառավա-  
րութեան, թագաւորի պարտաւորութեան և պա-  
տերազմական կանոններու մասին: Բայց յայդմանէ  
Պ'տրոսը ժրաշանութեամբ պարապում էր այլ-  
ազդի լեզուներով:

Ալքսա ալքայի մահէն յետ՝ Պ'տրոսը և նո-  
րա մայրը բնակում էին արքունեաց մեջ և նոր-  
ընակիր Թօոգոր արքայի յօժարութեամբ իւրեանց  
առանձին արքանեակները, սպասաւորները և  
պաշտօնականները ունեին: Բոյար Նողիկովը, որ  
պալուաի հաղարապեալ և գլխաւոր կառավա-  
րին էր, պատճառ բերելով բնակարանի նե-  
զառածքը, առաջարկեց Նախալիա գշխոյին, որ  
առնու հետը որպուն և երթայ մի ուրիշ տան  
մեջ բնակի: Հնդամեայ Պ'տրոսը խակոյն հասկա-  
ցաւ հաղարապետի խարդախութիւնը. սիրտը

Խոր խոցուած՝ իսկոյն զնաց իւր եղբօր մօտ և  
իւր գժկամակութիւնը յայտնելով նորան, այսպէս  
վերջացուց խօսքը . . , Մի՛թէ ես Ալէքս արքայի  
որդին չեմ, որ իմ հայրական տան մէջ մի փոք-  
րիկ խորշ չունիմ բնակելու“ :

Այս արգարացի բողոքի հետեանքն այն ե-  
ղաւ, որ յանդուգն Եաղիկովին արքունական պա-  
լատէն հնուացուցին : Կորա մանկական հասակի  
պատմութիւնը լի է այսպիսի արիասիրտ և հա-  
մարձակ խօսքերով և գործերով :

Կըրբ որ Թէօդոր արքան ևս վախճանեցաւ,  
(1682ի Ապրիլի 27ին) Յովակիմ պատրիարքը  
հրամայեց ամեն աստիճանի և կոչման մարդոց  
ժողովելու պալատի մէջ և երկու արքայորդոցմէ,  
մէկին արքայ ընտրելու՝ կամ Եաննին կամ Պատ-  
րոսին : Ա. Անքը միաբներան Պատրոսին ընտրե-  
ցին : Այս ընտրութիւնը առանց սիրաը մնալու  
հաստատեց նաև ինքը արքայորդի Եօաննը, իրեն  
անընդունակ համարելով թագաւորելու . և այս  
կերպով Պատրոսը իւր տասնամեաց հասակի մէջ  
նստաւ Բուռսիոյ գահը այն պայմանաւ, որ մին-  
չև նորա չափահաս տարիքը՝ տէրութեան սահ-  
մերը սկիսի լինէին Կաթալիա թագուհւոյ ձեռքը :

Այս անցքը շատ անախործ էր թէ՛ Սօվիա  
դշխոյին և թէ նորա համախոչ բոյարներուն :  
Կա իրօք կարծում էր որ՝ եթէ Եօաննը ընտրուէր  
արքայ՝ տէրութեան կառավարութիւնը իրեն կը

յանձնէր. և տրդաքեւ Աօփիա դշխան զգօն, Խորագէտ և փառասէր կին զոլով՝ զուրկ չէր վարչութեան ընդունակութինէն։ Այնուհետեւ օր ու գիշեր նա մոտածում էր, թէ ի՞նչ հնարքով իւր փառասէր զիտաւորութեանը հասնէ. և այդ չար վախճանին նա ապստամբեցուց Ստրելցներին, որոնց գլխաւոր հրամանատարը Աօփիայի հաւատարիմ համախոհ Խօվանսկի իշխանն էր։

Ոտրելցները պահանջեցին, որ Եօանը ևս գահ նստի, ըստ որում Ալէքս արքայի երեց որդին զոլով՝ անժխտելի իրաւունք ունէր նորաժառանգը լինելու։ Այդ Խոռովութեան ժամանակ շատ աւագորեալք զոհ եղան ապստամբներու կատաղութեանը, որոնց մէջ էր նաև առողջինի Մաթվէյ բոյարը՝ Նախալիա դշխոյի ազգականը և գաստիարակիչը։ Այս կերպով Աօփիան իւր ըղձին հասաւ։ Նորէն ընտրութիւն արաւ ժողովուրդը. արքայական գահի վերայնատան Եօաննը և Պետրոսը և նոցա անուամբ կառավարողը Աօփիան ընտրուեցաւ։

Թագաւորութեան ծէոը մէկ ամսէն ետեւ, այսինքն Յունիաի 25ին կատարուեցաւ։ Աօփիան առաստ ձեռքով վարձատրեց Ստրելցների եռուանգը, շատ պարզեներ տուաւ նոցա, շատ արտօնութիւններ և իրաւունքներ շնորհեց և վերջապէս, ՚ի յիշատակ նոցա հաւատարիմ ծառայութեանը, Կար միր Հրապարակի մէջ մի ար-

ձան կոնկնեցաւ ց՚ի պատիւ նոցա : Այսու հետեւ  
Ստրէլէյները աշնավիս լրբացան , այնավիսի ասլեւ-  
րասան կամք առացան տէրութիւնն մէջ , որ հր-  
նար չի կար նոցա կարգի ու կանոնի թերելու և  
օրինաց առջեւ ակնածութիւն ունենալու . միայն  
Պետրոսի հզօր ձեռքն էր , որ յետ ժամանակաց  
կտրողացաւ հնադանդեցնել և բնաջինջ անելնո-  
ցաւ մոլեղին և խռովացոյզ խռովմբերը , որոնք  
շատ վնասներ հասուցել էին քուսաստանին :

Ճ սկզբան իւր թագաւորութեան , տակաւին  
մանկական հասակի մէջ գոլսվ , Պետրոսը ցոյց  
տուաւ իւր հոգւոյ արիութիւնը և սրտի քա-  
ջութիւնը , որոյ նմանը հաղիւ թէ ուր և իցէ  
կարելի է գտնել :

Ա լէրս արքայի թագաւորութեան ժամանակ ,  
Նիկոն պատրիարքը նկատելով , որ ձեռարձիք  
սբազան մատեանների մէջ , օրինակի չներու ան-  
դդատառութեամբը , շատ վրխականներ էին սպրդել ,  
սկսաւ այդ վրխականները ուղղել և հետզետէ  
տակագրել . իսկ աղջատած ձեռագիրները հրա-  
մայեց եկեղեցիներէն ժողովել և նոցա տեղ տր-  
պածները դնելու Այս պարագան , որ բատ ինքեան  
բարի խորհրդով էր կատարած , շատ մոլեռանդ  
քահանանների և աշխարհականների կասկածելի  
թուեցաւ , և նոքա կարծելով թէ իւրեանց հա-  
ւատի մաքրութիւնը դորանով կարող է եղծուե-  
լու , սաստիկ ընդդիմացան այդ վերանորոգու-

թերան. տէրութեան առջև բողոքեցին և խընդ-  
րեցին, որ եկեղեցեաց մէջ մատեանները անփո-  
փոխ մնան : Բայց երբ որ Ալէքս արքան նոցա  
գանգատը և պահանջմունքը անիրաւ գտաւ և  
նոցա խնդիրքը մերժեց, այն ժամանակ վերոյի-  
շեալ մոլեռանդները հեռացան Ռուսաց եկեղեց-  
ւոյ ծոցէն, և այնուհետեւ նոցա անունը մնաց Հը-  
նահաւատք կամ հերձուածողք :

Աչա այդ կրօնական վէճն էր, որ երկրորդ  
անգամ նորոգուեցաւ. բայց այս նուագ հեր-  
ձուածողները ուստի էին հանել Ստրէլցներուն,   
որոնց մեծ մասը հնահաւատ էր : Թէև ապլո-  
տամբները մեծաւ մասամբ կոյր եռանդով էին  
վարակուած և այդ վրզովմունքը նոցա երեւում  
էր մի աստուածահանոյ գործ, բայց նոցա առաջ-  
նորդողքը կրօնական յստակութիւնը խւրեանց  
փառափրութեան յասլահով գործի էին համա-  
րում, և այդ աղմլալից ժամանակ կամենում էին  
խաժամուժ ամբոխի գործակցութենովն մեծա-  
մեծ փառքի ու պատուի հասնել : Այդպիսի գա-  
ւաճաններէն էին աչա Խօվանսկի և Միլոսլավսկի  
իշխանները : Նոցա մէջ ամենէն ժիր և արին էր  
Խվան Միլոսլավսկի ներնդ և խորամանկ բոյարը,  
որ Սօփիա դշխոյի անունով մեծամեծ պարզեներ  
և արտօնութիւններ խոստանալով՝ Ստրէլցների  
գլխաւորներից շատերին խը կողմը գարձուց,  
ինչպէս՝ Ցիբլէռին, Պղեռովին, Գէռմանովին ևայլ

շատերին : Խոկ հնահաւատների գլխաւոր քառզիչը և աղանդապետն էր մի աննշան քահանայ սուտ-սրբակրօն յորջորջմունքով :

Դօաննին և Պետրոսին համոզեցին թոյլտալ հնահաւատներին արքունեաց մէջ, պատրիարքի և եկեղեցականաց հետ, բոյարների և տէրութեան ամեն մեծամեծներու առաջ հրապարակաւ հաւատոյ մասին վիճաբանել : Առաջին խօսքերէն սրբութ և յայտնի երիեցաւ հերձուածողների և մանաւանդ նոցա Նիկիտա քարող չի սովորողիտութիւնը, որոնք ամօթով խայտառակուած՝ մինչև ցայն աստիճան կատաղեցան, որ ձեռքերը բարձրացուցին պատրիարքի և եկեղեցականաց վերայ և տերինիտերի կամենում էին սուանելնոցաւ :

Դօաննը և նորա հետ շատ բոյարներ հնար չի գտնելով այդ խոռվութիւնը հանդարտեցնելու, շուտով գուրս գնացին պալատէն. բայց տասնամեւաց Պետրոսը՝ նստած գաշէն ուրբի կանգնեցաւ, մի կարծ, բայց աղջու ձառ կարգաց բազմութեանը, և դառնալով դէպի խը ուղեկիցները, ասաց. „Ինչէ՞ն զարհութեցաք, դնացէ՞ք թշնամեաց դէմ” : Մանկահասակ արքայի օրինակին խրախուսած, նորայարձակեցան հերձուածողներու վերայ ու պալատէն որտաքսեցին, և այդ կերպով խաղաղութիւնը նորից հաստատեցաւ : Եւ երբ որ այդ վէճը և վիճողներուն քըննութեան և դատաստանի տուին, Նիկիտան եւ

նորա գլխաւոր համախոհները յանցաւոր համարուեցան և մտչու դատավճիռ կարդացուեցաւ նոցա վերայ. թէ և ապստամբները հնազանդեցան, բայց չհամոզուեցան, և նոցա սրտերու մէջ մնաց գժկանակութեան իրայծը, որ յետին ժամանակները բոլնկեցաւ:

Եշրը որ հերձուածողները սանձահարուեցան, Աօփինան վարչութեան զեկը իւր ձեռքը առաւ. խակ Պ'տրոսը գնաց բնակեցաւ Կոլոմնա, ուր գիւղական անդորրութեան մէջ աղաս և հանգիստ յարատեում էր իւր կրթութիւնը և զրօնում էր իւր մանկահասակ զինուորներովն. Պետրոսի բարեկամ և դաստիարակիչ Նը-Փօրթը նորա մանկական զրօնանքին օդտաւէտ ուղղութիւն տուաւ՝ նոցա խաղերը, անզգալի կերպով, դէպի կանոնաւոր Եւրոպական զօրավարժք դարձնելով.

Ուսումնատենչ և հետախոյդ Պ'տրոսը իւր պաշտօնը սկսաւ զինուորի ամենաստոր աստիճաննեն, նախ հասարակ զինուոր, յետոյ թմբկահար և այլն ըստ կարգին, և ստացած խրատներէն չխոտարուելով՝ խստութեամբ կատարում էր իւր պարտաւորութիւնը, անձամբ օրինակ տալով իւր ընկերակիցներին, և այդ կերպով նախապատրաստում էր նոցա իւր ապագայ փառքին և հռչակին օդնական և հազորդակից լինելու:

Պիսէօրուամինսկ աւանի և նորա շրջակայ տե-

ղերումը շինում էին բերդեր և պարապում էին  
նոցա մեջ ազգի ազգի պատերազմական կրթու-  
թիւններով : Ամեն կողմից գալիս մտնում էին  
այդ խումբերու մեջ զանազան կոչման մարդոց  
որդիք, և վերջապէս Պետրոսի ընկերակիցներու-  
թիւը այնքան բազմացաւ, որ պէտք եղաւ նոցա  
երկու մասն բաժանել, որոց մեկը տեղափոխ-  
ւեցաւ Սիմեօնով աւանը : Փոքր ինչ ժամանակ  
անցնելից յետոյ, Պետրոսին պէտք եղաւ աշխար-  
հագրութեան և բերդաշինութեան վարժապետ,  
և այդ վախճանին ընտրեց նա օտարազգի Տիմ-  
մերմանին, որ Ռուսաց զինուորական պաշտօնումն  
էր ծառայում :

Լը-փօրթը և Տիմմերմանը — այս երկու ան-  
մահ անձինքը Ռուսաց տարեգրութեան մեջ, իւր-  
եանց արքայազն աշակերտին կատարելապէս տե-  
ղեկացուցին Արևմտքի լուսաւորութեան, և նորա  
մեջ սերմանեցին այն մեծ խորհուրդը, թէ պէտք  
էր Ռուսաստանը վերակազմել ըստ օրինակի Եւ-  
րոպիոյ պետութեանց : Այսպէս անում և զար-  
գանում էր մատաղահաս Պետրոսը ուսումնական  
և զինուորական զբազմունքների մեջ, բոլորովին  
սնտեղեակ գոլով այն փոթորկին, որ սպասում  
էր նորան և բոլոր արքայազն տոհմին :

Խօվանակի իշխաննը, որ Ստրէլէցների գլո-  
խաւոր հրամանատարն և Սօփիա դշխայի մտե-  
րիմի էր, ջերմուանդ հնահաւաս գոլով, շատ

դմկամակած էր, որ իւր համախոհքը այնպէս չարաչար սպատուհասուել էին և մանաւանդ Նիկիտայի խայտառակ մահը նորա հոգին անդազարդ կավի վրէժինդրութիւն էր դրդում։ Ուստի՝ օրու գիշեր միտք էր անում թէ ի՞նչ հնարով՝ ի կատար հասցնէր իւր չար խորհուրդը։ Թէև նա ատելով արքայական տունը՝ վրդովեց Ստրէլցներին և նոցա օդնութեամբ Սօփիա դշխոյին բարձր աստիճանի հասցուց, բայց յետին ժամանակները Սօփիային ևս սրտի մէջ ատեց և այնուահետև յաջողակ դիմուած էր որոնում նորան ևս գլորել դահէն և կորսնել։ Քարձեալ իւր դաւաճանութեան դործի դարձուց Ստրէլցներուն, սկսաւ զանազան խորամանկ հնարներով նոցա վրդովել, ապստամբեցնել դահակալներու դէմ, և ցայն աստիճան հասցուց նոցա, որ յանդուգն Ստրէլցները թէև առատաձեռն վարձատրած էին իւրեանց յուղմանց համար, բայց չէին դադարում խօվանսկիի միջնորդութեամբ նորանոր արտօնութիւններ եւ իրաւոնեք պահանջելու իւրեանց համար։ Կոցա պահանջմանները օրէ օր սաստկանալով, Սօփիան ևս ուրիշ հնար չէր դըտնում նոցա ձեռքից ազատուելու, բայց եթէ կեղծաւորութեան դիմակը երեսէն հանած, հաստատապէս եւ վճռաբար մերժել նոցա տմէն խընդիրքն ու պահանջմունքը։

Այն ժամանակ զայրացած խօվանսկին թոյլ

տուաւ նոցա իւրեանց ապերասան կամքին, ու  
Ստրէլցները իւրեանց չարագործութիւնը մին-  
չև այն աստիճան հասուցին, որ Սօփիան երկ-  
մտութեան մէջ ընկառ՝ թէ Խօվանսկին չունի  
արդեօք մի չար դիտաւորութիւն։ Այսպէս վա-  
րանաց մէջ տատանելով և վերահաս վտանգէն  
երկիւղ կրելով, յանկարծ որոշեց նա բոլոր ար-  
քունիքովն Կօլօմնա աւանը տեղափոխուելու, ուր  
նորա կասկածանքը շուտով ստուգեցան։ Առանց  
ստորագրութեան նամակը նորան երազեկ արաւ,  
որ Խօվանսկին ապստամբութիւն է յարուցանում  
նորա գէմե հաստատ դիտաւորութիւն ունի կո-  
տորել արքայական գերդաստանը, որ ինքը կա-  
րողանայ բուսսիոյ գահը նատելու։

**Ա**յս դաւաճանութիւնը իմանալով՝ Սօփիան  
առնենին չայլայլեցաւ ու չի հատեցաւ, այլ անյա-  
սաղ իւր կողմնակիցներուն հետը առած գնաց  
ու բնակեցաւ Զիլենիդօրօդի մենաստանը և այն-  
տեղ գտառվ հրաւիրեց Խօվանսկին՝ իբր թէ իւր  
տօնախմբութիւնը միասին կատարելու համար։  
Խօվանսկին իւր գլխուն գալու վորձանքը չնա-  
խազգալով՝ երկու որդիքը և մի Ստրէլցների  
խումբ հետը առած, միամիտ գնաց Սօփիայի  
մօտ։ Այն ժամանակ Սօփիան հրամայեց իւր  
հաւատարիմ սպասաւորներուն, որ խալոյն ձեռք  
ձգեն Խօվանսկին և նորա կուսակիցներուն և  
անխնայաբար մորթին, որ և այնսկէս եղաւ։ Խօ-

վանսկին, նորա համախոչ Ստրէլցները և մի որդին դահճի սրի տակ կեսանքերը վերջացուցին: Խոկ նորա միւս որդին պրծաւ վերահաս վտանգէն, շտաբով Պօսկուա գնաց և Ստրէլցներին պատմեց իւր հօր եւ նոցա մեծաւորի մահը: Խոկ Սօփիան այս կոտորածէն յետ՝ գնաց եւ ամրացաւ Ա. Սարգսի-Լօրայի մէջ եւ հրաման հանեց, որ մերձակայ տեղերից գուգազ գումարուին: և իրօք որ կարճ միջոցումն նորա չորս կողմը երեսուն հազար սպառազինած մարդիկ ժողովուեցան:

Խոկ Ստրէլցները երթ որ իմացան խրեանց առաջնորդի և բարեբարի ազէտալի մահը, ևս և միտքերը բերելով որ Սօփիան մեւ ժամանակ նոցա խնդիրքը մերժելէր՝ սաստիկ կատաղեցան, բոլոր քաղաքը ոտքի հանեցին, վակեցին Պօսկուաի գաները, ոչ զ զրաից ներս էին թողնում մարդոց եւ ոչ ներաից գուրս. կողոպտում, հըռդէհում էին բոյաբների աները, և ով որ նոցա եղեննագործութեան մասնակից չէր՝ անողորմ սպանում էին և շատ զորա նման սոսկալի անկարգութիւններ էին անում, ևս և մասդիր էին երթաւ Ա. Սարգսի-Լօրան և Խօվանսկիի մահուան վրէժը առնելու համար՝ սպառնանում էին ամերն բոյաբներուն կոտորելու: Եւ իրօք որ սպառազինած զօրքերը չհասած նոցա մի մասը բոնարար մտաւ Ա. Սարգսի-Լօրան և սկսաւ

Պ'տրոսին վնասուելու՝ որ մեռցնէ. և ապստամբաներէն մ.կը արքայ մանուկին տեսնելով սեղանի մօտ՝ մերկացուցած սուրը ձեռին վազեց նորա վերայ. բայց քաջասիրտ արքայորդին այս վտանգէն ամենեին չզարհութեցաւ ու չվհատեցաւ, այլ մասով ցոյց տալով Տիրամօր պատկերը սուրբ սեղանի առաջև, „Եթէ կ'համարձակիս՝ սպանէ՛՛ ասաց նա քարասիրտ սրիկային, որ այս սպառնալի խօսքերը լսելով՝ ընկաւ նորա ոտերին և ողորմութիւն խնդրեց :

Վինչ այս մինչ այն, զօրքերը ամեն կողմից սկսան գումարուելու, և Սարկէցները տեսնելով որ, եթէ երկար յամառին և դիմադարձութիւն անեն՝ պիտի չարաչար պատժուին, իսկոյն հնագանդեցան և ողորմութիւն խնդրեցին, և պատրիարքի միջնորդութենովն թողութիւն ըստացան. բայց առաջուայ ունեցած արտօնութիւններէն շատերէն զրկուեցան, նոցա գունդերէն քանիսը այլւայլ հեռաւոր քաղաքներ տեղափոխուեցան, և այն արձանը, որ ՚ի պատիւ նոցա կառուցած էր Կարմիր-Հրապարակի մլ.ջ՝ կործանուեցաւ։ Երկու արքան և Սօվիան այն ակներեւ վտանգէն աղատուած՝ Մօսկուա դարձան։

Երբ որ մայրաքաղաքումն ևս խաղաղութիւն հաւտառուեցաւ, Սօվիան եւ նորա միւս մտերիմ Գօլիցին իշխաննը սկսան տէրութեան ներքին եւ արտաքին գործերը կարգի և կանոնի բերելու,

դեռապաններ ուղարկեցին Եւրոպիոյ տէրութեանց  
թագաւորներուն, դաշինք (առաջին անգամ) կա-  
պեցին ձենաստանի հետ, և առչասարակ զգօ-  
նութեամբ կառավարեցին Ռուսաստանը։ Թէ և  
Սօվիխա դշխոյի մտերիմ Գօլիցինը երկու անգամ՝  
անփառունակ արշաւանք մղեց Ղրիմի վերայ, ո-  
րով իւր դշխոյի փառքը և Ռուսաց զօրքի զէնքը  
նաւելացուց, բայց այդ մասին մենք լսութեամբ  
կ'անցնենք, ինչու որ՝ այդ պարագան ոչինչ յա-  
րաբերութիւն չունի Մեծին Պետրոսի պատմու-  
թեան հետ։

Գրեթէ եօթը տարի միահեծան իշխեց Սօ-  
վիխան Ռուսաստանին։ Եօանն արքան՝ ի բնէ տը-  
կար և յաւագար էր և տէրութեան գործերովն  
սպարապելու անընդունակ և իւր աննշան օրերը  
կրօնական բարեպաշտութեանց նուիրած՝ իւր իշ-  
խանութիւնը բոլորովին յանձնել էր Սօվիխա քը-  
րոջը. իսկ Պետրոսը՝ Պոէօբռամէնսկ աւանումն  
բնակուած, բոլոր մտադրութիւնը դարձուցած  
իւր կրթութեան և ընկերուց զինւորական մարզի  
վերայ, առաջին տարիները ամեննեին ուշչէր դար-  
ձնում քրոջ գործերին և ոչինչ կերպով խա-  
փանարար չէր լինում նորան։ Բաց՝ ի Լը-Փոր-  
թէն և Տիմիլըմանէն՝ իւր մօտ հրաւիրեց այլազգի  
Գօրդօնին և սկսաւ նորամեն գաղղիական և հոլ-  
լանգական լեզուները սովորելու։ Սօվիխան լսե-  
լով իւր եղբօր պարապմունքը՝ սրտի մէջ շատ

ուրախ էր, կարծելով որ այդ տնօգուտ զբօսանքը  
նորան իսպառ մոռանալ կուտայ իւր արքայա-  
կան քարձր տատիճանը և կոչումնը, և ամեն կեր-  
պով աշխատում էր, որ նա չ' շտապէր տէրու-  
թեան գործերու մեջ ձեռնամուխ լինելու, որ  
առաւել և առաւել հաստատվում էր իւր ձեռ-  
քումն, բայց Պետրոսը խելքն ու միտքը ճոխա-  
ցուցած ուսուցիչներու հրահանգներով՝ սկսաւ  
փոքր առ փոքր հասկանալու, որ տէրութեան  
գործերը այնպէս չեն յառաջանում, ինչպէս որ  
հարկն էր. այնուհետև սկսաւ նա Արքայական  
Խորհրդարանի մեջ ևս ելումնուտ անելու և այն-  
տեղ գտնուող աւագանիին, նաև Սօվիային խոր  
հանձարեղ խելքովն ու արգարացի դատմուն-  
քովը հիացնելու։ Անզգալի կերպով սկսաւ նա  
տէրութեան ամեն մանր ու մունք գործերի մեջ  
խառնուելու և ամեն տեղ անկարգութիւն և  
զանցառութիւն էր գտնում։ բայց բացարձակ  
իշխանութիւն չունենալով նրան անուանելի էր  
թվում աղջեցութիւնը քրոջ, որ իւր հայրենեաց  
մեծամեծ երախտիք ցոյց տալով՝ այնքան հզօ-  
րացել էր, որ մինչեւ անգամ իշխանութիւնը  
սկսուանուն էր ստացել իւր հպատակներէն։  
Փառասէր Սօվիան գուն գործում էր ամեն տեղ  
և ամեն պարագայի մեջ եղբարց առաջեւ իւր  
նախամեծարութիւնը երևցնելու. ուստի Պետրոսի  
միջամուխ լինելը տէրութեան գործերուն շատ

անտանելի էր նորա համար։ Նորա դժկամակութիւնը ևս առաւել սաստկացաւ, երբ որ Պետրոսը տասնեօթնամեայ հասակի մէջ, առանց քրոջ հաւանութեան և միայն մօր կամքին հնազանգելով, Եւդոկիա Լուպուխին օրիորդի հետ պսակւեցաւ 1698 ի Յունուար ամսի մէջ։

Այս ազատակամ՝ ընթացքովը նա հասկացուց քրոջը, որ արդէն ժամանակը հասել էր, երբ նորա ձեռքը պիտի անցնէին տէրութեան սահնձերը։ Կոցա փոխազարձատելութիւնը դնալով աճում և սաստկանում էր և մնում էր միայն մի շարժառիթ, որ այդ ծածուկ ատելութիւնը դէպի յայտնի թշնամութիւն փոխուէր. և այդ շարժառիթը շուտով վրայ եկաւ։ Ինչպէս ասացինք, Սօփիան աշխատում էր ամեն տեղ նախամեծար երեխլ իւր եղբայրներու առաջև։ Մի օր, եկեղեցական մեծահանգէս թափօրի ժամանակ, Սօփիան արհամարհելով հնուց սահմանած կանոնը, որով արդելած էր կանանց սեռին այդպիսի ծէսերին մասնակից լինելու, ոչ միայն ներկայացաւ այդ թափօրի մէջ, այլև և նախապատիւ տեղը ընտրեց և կանգնեցաւ, ուր օրէնքով պիտի կանգնէին երկու եղբարբը՝ Եօաննը և Պետրոսը Պետրոսը հարեանցի ակնարկեց նորա ասլօրինի ընթացքը. Սօփիան չ'լսելու դրաւ եղբօր խօսքը և շարունակեց առաջ գնալու խալուառի և պատկերների ետևէն։ Այս անհնա-

զանդութիւնը խոր խոցեց Պետրոսի սիրտը. առանց մեկ խօսք ասելու՝ թողուց նա թափօրը և գնաց Պոէօրուաժէնսկ աւանը: Սօվիան նախազգաց գլխուն գալու փորձանքը և եղբօր բարկութենէն աչ կրելով՝ մտքի մէջ մի սոսկալի խորհուրդ խորհեցաւ, — Պետրոսի կեանքը վրանդի մէջ ձգել և բոլորովին տիրել Ռուսսիոյ գահին: Հրաւիրեց Շարլօվիթին, որ Ստրէլցների մեծաւորն էր և նորա հետ միասին եղբօր գէմ գաղտնի գաւաճանութեան դաշնիք կապեց: Այսու ևս չշատացաւ. նորէն ապստամբեցուց Ստրէլցներին, հաւատացնելով նոցա, երբ թէ Պետրոսը չար գիտաւորութիւն ունի նոցա գունդերը բնաջինջ անելու, Ռուսաստանի մէջ վնասակար նորաձևութիւններ մուծանելու, և այլ շատ վատ բաներ պատմեց նորա մասին, և մեծամեծ պարզեներ և արտօնութիւններ խոստացաւ նոցա՝ եթէ Ստրէլցները Պետրոսին սպանելով՝ իրեն գահ կ'ամբառնան, և այդպէս ցոյց կուտան իւրեանց ջերմեռանդութիւնը:

Ապստամբները ուրախութեամբ յանձնառու եղան նորա առաջարկութեան: Սօվիայի խորհրդով Շարլօվիթը պիտի երթար Պոէօրուաժէնսկ աւանը և Պետրոսին պիտի բռնէր ու բերէր կամ կենդանւոյն, կամ մեռուցած: Բայց անհնարին է նորա զարմանքը մեկնելու, երբ որ եկաւ ու չկտաւ այնաեղ Պետրոսին: Քրոջ դաւաճա-

նութիւնը երկու հաւատարիմ Ստրէլէցէ իմաս-  
նալով՝ նա իւր մօրը և ուղեկիցներին հետը ա-  
ռած, աճապարելով գնացել էր Ա. Սարգսի-Լո-  
րայի պարսպի մէջ, ուր նորա հետևից անյա-  
պազ եկել էին նորա զբօսական վաշտքը և ու-  
րիշ դօքքեր, որոնք հաւատարիմ էին մնացել  
իւրեանց տուած երդմանը:

Երբ որ Շաբլօվիթը դատարկաձեռն յետ  
դարձաւ՝ Սօփիան տեսաւ որ իւր գաղտնի մե-  
քենաները անպտուղ մնացին, փրկութեան ուրիշ  
Հնար չի գտաւ, բայց եթէ թողութիւն խնդրել  
եղբօրէն և հնազանդել: Այդ վախճանին դրկեց  
Պետրոսի մօտ իւր քուրերուն և Պատրիարքին:  
Բայց Պետրոսը խստութեամբ պատասխանեց,  
որ նա իրազեկ է Սօփիայի ամեն չար խորհու-  
ներին և թէ այսուհետև չի խաբուիլ նորա երկ-  
դիմի վարմունքէն և իւր մեղադրութիւնը շատ  
փաստերով հաստատեց: Երբ այս հնարն ևս ա-  
ռանց բարի հետևանքի մնաց՝ Սօփիան խոնար-  
հարար թոյլտուութիւն խնդրեց, որ անձամբ  
ներկայանայ Պետրոսին և իւր գլուխը արդա-  
րացնէ: Բայց Պետրոսը չհամաձայնեցաւ, այլ  
հրամայեց Մոսկուա երթալու և այնտեղ իւր  
դատավճիռը սպասելու: Հրամայեց, որ եղեռ-  
նագործ Շաբլօվիթին բռնեն և կտտամաչ անեն,  
միւս ապստամբներու գլխաւորներին գլխատեն  
և ամեն յանցաւորներին իւրեանց յանցանքի ար-

Ժանի պատուհասը տան։ Իսկ Սօփիային Հրամայեց կուսանաց (Նոր-Կուսանաց) մենաստանը՝ ի գիպահոջ դնել և Ռումաղանովսկի բոյարին սղատուիրեց, որ նորա վրայ արթուն հսկողութիւն ունենայ:

1689ի Սեպտեմբերի 10ին Պ'տորոսը իւր ամուսնոյ և բոլոր կուսակիցների և բոյարների հետ մայրաքաղաք (Մոսկովա) մտաւ։ Այդ ուղևորութեան ժամանակ Սարելցները ճանանապարհի երկու կողմանը ծունը զրած, վիղերին կոճղ և սղարան ձգած, (որով կամենում էին ցոյց տալու, թէ արժանի էին գլխատուելու և խեղդամահ լինելու) լաց ու արտասունքով ողորմութիւն և թողութիւն էին պաղատում։

Նշրբ որ Պ'տորոսը Մոսկովա մտաւ, դեռ ևս ապարանք չմտած, շխտակ գնաց դէպի մայր եկեղեցին և Աստուծոյ առաջև բերեց իւր մաղթանքը և գոչութիւնը՝ իւր Հրաշշալի փրկութեան համար։ Բարեսիրատ Եսամննը վազեց նորա հանդէս, եղբայրաբար գրկեց և համբուրեց նորան, և բոլորովին նորա ձեռքը աւանդեց իւր ժառանգական իրաւունքը։

Աչա այս կերպով ստացաւ Պ'տորոսը իւր միասկատական իշխանութիւնը բոլոր Ռուսսիոյ վրայ։

---

ԵՐԿՐՈՒԹՅՈՒՆ ԳԼՈՒԽ

Զօրքի կրթութիւնը: — Քաղաքական նորաձեռնութիւնը: —  
Ակիզը ևաւային զօրութեան: — Ազովի նուաճնը: — Առաջին ճա-  
նապարհորդութիւնը Եւրոպայի մէջ: — Ասրէլէցների ազտամբու-  
թիւնը և պատուհասը նոցա: — Առաջին զօրաժողովը: — Նոր տու-  
մար և քաղաքական ամութեայքը: — Շվեդացւոց չետ պատե-  
րազմը: — Ա. Պետրոսուրի հիմարկութիւնը:



Զաքի կրթութիւնը: — Քաղաքական նորաձեռութիւնքը: —  
Ակիզը եաւային զօրութևան: — Ազովի նուաննը: — Առաջին ճա-  
նապարհորդութիւնը Եւրոպայի մէջ: — Սորելեցների ասլտամբու-  
թիւնը և պատոհասը նոյնա: — Առաջին զօրացողովը: — Կոր տու-  
մարը և քաղաքական աշխաթայքը: — Շվեդացւոց հետ պատե-  
րազմը: — Ա. Պետերբուրգի հիմնարկութիւնը:



Ետրոս Մեծը իւր կենաց տառնեռութ-  
տարեկան հասակումը ստացաւ լիա-  
կատար իշխանութիւն մի այնպիսի լայնածաւալ  
աշխարհի, ինչպէս որ Ռուսաստանն է, որոյ եր-  
կիրները բռնում են Եւրոպիոյ մեծ մասին և  
Ասիոյ հիւսիսակողմին: Բայց այդ աշխարհի  
բնակիչները անկիրթ, կարելի է ասել ևս, որ կի-  
սավայրենի էին. այդ ազգը (Ռուսերը) անհա-  
ղորդ էր Եւրոպական երկիրների քաղաքական  
կենցաղին, և խորասուղուած գոլով իւր սոսկ  
տղիտութեան մէջ՝ միմիայն անունով յայտնի էր  
այնժամանակուայ լուսաւորեալ ազգերին: Բայց

Աստուծոյ անձառելի խնամքը արթուն էր այդ  
թշուառ աղդի վրայ, Որ կամեցաւ նոր կեանքի  
համար զարթեցնել Ռուսերի թմրած ոգին, և  
Ա. Պետրոսին գործի դարձնելով իւր սուրբ  
կամքին, երբեմն տկար Ռուսաստանը դարձուց  
մի հզօր և նախակարգ տէրութիւն:

Հասաւ վերջապէս այն ժամանակը, երբ  
Պետրոս Մեծը արդէն կարող էր էացնել իւր վա-  
ղուցուայ տենչացած խորհուրդը, որ Է նորա-  
ձեել Ռուսաստանը: Նա քաջ գիտէր որ՝ որ և իցէ  
տէրութեան գլխաւոր ոյժը կայացած է զօրքի  
վրայ: Իւր սիրական դաստիարակիչների՝ Ար-  
ֆօրթի և Գօրդօնի օգնութենովն՝ իւր զբօսա-  
կան զնդերից կազմեց երկու թիկնապահ զօ-  
րագունդ, որք սերմունք եղան այն զօրքին, որն  
որ մեր օրերումն Եւրոպայի մէջ ամենազեղե-  
ցիկներից մինն է համարվում:

Անփոյթ չ'թողնելով տէրութեան գործերն,  
որոնք կատարվում էին Արքայական-Խորհրդա-  
րանի մէջ, խստութեամբ հալածում էր աղդի  
աղդի անկարգութիւնները և չար գործադրու-  
թիւնքը, երիտասարդ Արքան իւր մտադրու-  
թիւնը առաւելապէս դարձուցած ունէր իւր նո-  
րակազմ զօրքի վրայ: Ստէպ ստէպ գալիս էր  
Պոէրուաժէնսկ աւանը, նորընտիր զօրքին ստի-  
պում էր անդադար զօրավարժքով պարապելու,  
և այդ կերպով նախապատրաստում և ընդելա-

ցնում՝ էր նոցա իսկական և կանոնաւոր պատերազմների։ Տակաւին մինչև այս օրս ժողովրդի բերանացի աւանդութիւնը պահպանել է յիշատակը մի պատերազմական զրօսանքի, որ յայտնի է «Կօժուխի պատերազմ» անունով, որ կատարւեցաւ 1694ին Կօժուխով աւանի մօտ։ Ցատկապէս այդ մասին շնչած էր մի բերդ ըստ կանոնի այնժամանակուայ բերդական ճարտարապետութեան. բերդի մէջ փակուած՝ պաշտպանվում էին Ստրէլէցները, իսկ կանոնաւոր զօրքը պատնէշ պաշարմունքով տիրեց նորան։

Չուտ նկատեց Մեծն Պետրոսը, որ լուսաւորեալ Արևմբռքին մօտենալու և իւր սահմանները դէպի հիւսիս տարածելու համար՝ բաւական չէր միայն ցամաքահողեան զօրքը, այլ պէտք էր նաև այդ բանի համար նաւատորմիղ. և շատ ժամանակ վրայ չանցած՝ այդ նաւատորմիղն ևս ստացաւ Ռուսաստանը, գոհ լինելով իւր երիտասարդ արքայի հանձարի ուժին և հղօրութեանը։ Պէտք է իմանալ, որ մինչև իւր չորեքտասանամեայ հասակը մինչև այն աստիճան վախենում էր նա ջրից, որ երբ պատահում էր նորան գետեղերքին մօտենալու, նորա մարմինը փշաքաղ էր լինում երկիւղից. և այդ գարշանքը ջրից յառաջացել էր յետագայ դէպքին։ Մի օք նորա մայրը՝ Նաթալիան գարնանային ջրաճութեան ժամանակ, կառքով մի գետակ անցնելիս

սարսեցաւ և իւր աղաղակովը քնէն զարթեցուց  
եռամեայ Պետրոս մանուկին. և այդ օրից յետոյ  
նա մինչև իւր պատանեկութեան հասակը, ինչ-  
պէս ասացինք, սաստիկ ահ էր կրում ջրից.  
բայց այդ երկիւղը խալառ փարատեցաւ նորա  
սրտից, երբ որ յետագայ անցքը սպատահեցաւ:  
Մի օր (այդ միջացին Պետրոսը արդէն Արքայ էր)  
նա իւր տւագրերի հետ որսալով, պէտք եղաւ մի  
գետ անցնել ձի հեծած, լողալով: Պետրոսը եր-  
կար միջոց անորոշ և անշարժ կանգնած էր ջրի  
մօտ և չգիտէր թէ ինչ ճանասլարհ բանէ:  
նորա ուղեկիցքը և մանաւանդ Գօլիցին իշխանը  
շատ յորդորեցին չվախենալ, այլև ինքը Պետրոսը  
չկամելով իւր ուղեկից զինուորներին ցոյց տալու-  
իւր երկիւղը և փոքրոգութիւնը՝ ոյժը մի արաւ և  
ինչպէս որ հեծած էր՝ ընկաւ ջրի մէջ և յաջո-  
ղութեամբ միւս ափը հասաւ: Այդ օրից յետոյ  
նորա սրտից խալառ փարատեցաւ ջրի երկիւղը:

1691ին Խղմոյլովոկ աւանումը Պետրոսը տե-  
սու մի հին և երեսէ ձգած նաւակ (որն որ նո-  
րա հօր Ալքս արքայի հրամանով շինել էր  
Հոլլանդացի Բրանթ արուեստագէտը) այն-  
պիսի ցանկութիւն ստացաւ ջրի վրայ նաւելու,  
որ խակոյն նոյն խակ Բրանթ արուեստագէտին  
հրամայեց վերանորոգել այն, որ յետին ժամա-  
նակները կոչեց «Պապ Ռուսաց նաւատորմղին»:  
և արդարեւ, այդ նաւակի սպատճառաւ Ռուսաս-

տանի մէջ հիմուեցաւ նաւատորմիղը: Ո մէի մի  
ժամանակ վրայ անցած, Պետրոսը հրամայեց  
քանի մի ուրիշ նաւակներ շինելու, և այնու-  
չետեւ մեծ հաճութեամբ զրօնում էր՝ նաւե-  
լով Եառող գետի, Կորեկի-Ծակի ևս և Պէ-  
րէեսալավսկ և Կուրինկ լճերու վրայ: Այս անց-  
քից յետոյ անյասլաղ բերել տուաւ, Բրանթի  
օդնութենովն, Հոլլանդիայից շատ նաւաշխն ա-  
րուեստագիտներ և նաւասահներ, Պէրէեսալավսկ  
լճի մօտ հիմնեց նաւարան, ուր ինքը գործա-  
վարների հետ միասին տապար և այլ գործիներ  
ձեռքը առաջ անխոնջ աշխատում էր: Պետ-  
րոսը, որ իւր թագաւորութեան սկզբումն ոչ մի  
հատիկ ծովային և գետային նաւ չուներ, ինչ-  
պէս վերը տեսանք, իւր արքայական ձեռքովն  
աշխատելով և հիմնելով նաւախումբը, վերջին  
ժամանակները, կարելի է տաել, տոեղծեց բալ-  
տիկական, Ազովիան, Սև և Սպիտակ ծովերի  
նաւատորմիղները, և տակաւին նորա կենդանու-  
թեան ժամանակ, Ռուսաստանը արդէն ուներ  
քառասուն մեծ պատերազմիկ նաւ, երեք հա-  
րիւր ցականաւ, չհամարելով անթիւ անհա-  
մար նաւակներն՝ ոչ այնքան նշանաւոր: Թէ և  
Պետրոսը նաւաշխնութեամբ սկսել էր պարապե-  
լու 1691 թուականիցն, բայց ուն ևս երկար  
ժամանակ միջոց չէր ունեցել ծովի վրայ նաւե-  
լու, անհամար զբազմունքով, հողսերով պա-

շարուած՝ նա միայն երկու տարիից յետոյ, այս-  
ինքն՝ 1693 ին կարողացաւ Արխանգելսկ քաղաք  
գնալու և այնտեղ առաջին անգամ՝ ծովի ալիք-  
ներու վրայով նաւելով, Սպիտակ ծովը անցաւ  
և հասաւ Լավլանդեան ափերին։ Արխանգելս-  
կումն ամիս ու կէս մնալով և այնտեղի նաւա-  
խումբի վերայ Թ. Ապրակսինին կառավարիչ  
կարգելով, Պ'տրոսը վերադարձաւ Մոսկուա և  
իւր առաքինի Նաթալիա մայրը թաղեց (որ  
վախճանել էր 1694 ի 25 ին) և յետոյ նորից գը-  
նալով Արխանգելսկ՝ Մայիս ամսու մէջ, այնտե-  
ղից ճանապարհ ընկաւ դէպի Սօլօվէցքի մենաս-  
տանը։ Այդ միջոցին մազ մնաց որ Պ'տրոսը  
զոհ չեղաւ իւր ուսումնասիրութեան և արիս-  
տութեան։ Ճանապարհին ուժգին փոթորիկ  
բարձրացաւ ծովի վրայ. փրկութեան յոյս և  
հնար չի կար. Նաւի վերայ գտնուողները բո-  
լորը, նաև ինքը Պ'տրոսը անցոյս էին վերահաս  
կորստից փրկուելու. այս ընդհանուր այլայլու-  
թեան և անձողութելի վտանգի մէջ միայն  
Սօլօվէցք մենաստանի սպասաւորը, անունը Տի-  
մոֆէեվ, այն նաւի զեկուլարը, որի մէջ նստած  
էր Պ'տրոսը, չվհատեցաւ, և արհամարհելով  
կատաղած ալիքի սպառնալիքը՝ ազատեց վեհ  
միապետի թանգարին արել։

Ինչպէս որ վերը ասացինք, որովհետեւ Ար-  
քան իւր զինուորական պաշտօնը սկսաւ զին-

ւորական ամենասատոր աստիճաններից՝ հասարակ դինուոր և թմբկահար լինելով, նմանապէս և ծովային պաշտօնուումը կանչեցաւ սկսել նաւասատիի աստիճանից։ Այս գիտաւորութիւնը նա գլուխ հանեց Հոլլանդիումն գտնուած միջոցին, ուր նաւազնացութեան վարժապետ ընտրելով Վիլլմսին, որ մի վաճառական նաւի նաւապետ էր, որի մօտ իւր պաշտօնը սկսաւ նաւախցի արբանեակից և մինչև սպայական կարգը ստանալը, իւր պարտաւորութիւնը ամենաճիշտ խատութեամբ կատարում էր, այնպէս որ՝ ամենքը տեսնելով նորան, կամ լեռով նորա մասին՝ ափշում ու հիանում էին։

Այս և այսպիսի տէրութեան զբաղմունքի մէջ անցան հինգ տարի Մեծին Պետրոսի անդորր միավետական կառավարութեան, երբ անզուգական Ալքան անդուլ պարբապած էր և՝ տէրութեան ներկայ վարչութենուին, և՝ կանոնաւոր զօրքի վարժքով և կրթութիւնովն, և՝ նաւաշինութենուին, և՝ բնաջինջ առնելով չար գործադրութիւնքը՝ անընդունակ, անպիսան մեծաւորներին։

Ի՞նչ այսուհետև սկսում են հանդէս գալու մէկ մէկի ետևից անվերջ շարք նորա պատերազմական սխրագոծութիւններին, որոնք թէ և ՚ի սկզբանէ անյաշողակ էին Ռուսաց զէնքի համար, բայց մի կարճ միջոց անցնելից յետոյ՝ յաւիտեան ժամանակաւ անմահացուցին Ռուսսիոյ և նորա

Առաջորդի անունը, տարածելով սահմանները  
և ամբացնելով ոյժը այն անօրինակ տէրութեան,  
որպիսիք որ ֆուսաստանն է:

1695 թուականին քաղաքական և տռետրա-  
կան հաշվուներ աչքի առաջն ունենալով՝ Պետ-  
րոսը գիտաւորութիւն ունեցաւ նուածել Ա-  
զովք, որ նա համարում էր բանալի Ազովիւն  
և Սև ծովիւրուն։ Եւ որովհետեւ այդ ձեռնար-  
կութեան համար չէր կարելի գործ դնել Սպի-  
տակ ծովի նաւախումբը՝ Աբրան հրամացեց Վա-  
րոնէժ քաղաքումը նաւարան շինել, ուր սկիտի  
կառուցուեն նոր նաւատորմղի համար նստեր  
և Գօն գետի վրայով իջեցնեն Ազովիւն ծովը,  
Բայց Պետրոսի արտորանքը Ազովին տիրելու  
այնքան մեծ էր, որ նա չկարողացաւ ինքն իրեն  
զսպելու և մինչև նստերու սկատրաստ լինե-  
լուն սպասելու, ուստի փորձ փորձեց ցամա-  
քահողեան զօրբութիրել քաղաքին։ Այդ գիտ-  
մամբ հրամացեց զօրաժողով առնել և գումարել  
հարիւր հաղարեայ զօրք, որ Դնեալր գետի ա-  
փերը բռնած և Շերեմետեվի առաջնորդու-  
թեանը յանձնած խաղուց գէպի թշնամու եր-  
կիրները միւս զօրքը քասան երկու հաղար հո-  
գուց բաղկացած և Շտէյնին ու Գօրդօնին ա-  
ւանդած ուղղակի գնաց գէպի Ազով, ուր կարձ  
միջոցից հասաւ և ինքը Պետրոսը, հետը առած  
Ար-Փօրթին և Գօրդօնին և իննը-հաղարեայ զօ-

բարբածին։ Բաց յայդմանէ, փոքր-Ռուսսիոյ հեթ-  
ման Մազլիխան՝ զազախ հեծելսղօրբին առաջնոր-  
դելով՝ նմանապէս եկաւ նոյս զօրավիեզն լինե-  
լու։ Այսպիսի բազմամբոխ զօրքը առաջուանէ  
խոստանում էր մարտին մի յաջողակ ելք, բայց  
իրօք այդպէս չեղաւ։ Նախս որ՝ Պետրոսն ան-  
փորձ էր պատերազմական ասպարիզի մէջ, ըստ  
որում տակաւին այդ նորա համար նոր ձեռնար-  
կութիւն էր, և երկրորդ որ՝ ոչ հապճեպով  
գումարած զօրքը և ոչ կրթածը մինչև այն ան-  
գամը գտնուել էին իսկական պատերազմի դաշ-  
տումը կամ թշնամու հետ գէմ ու դէմ կանգ-  
նել էին երբ և իցէ։ ՚ի վերայ այդք ամենայնի  
Տաճիկների (Թուրքերի) և Թաթարների հետ  
բազիսուելով՝ քանիցս յաղթեցին և ՚ի փախուստ  
դարձուցին պատերազմի դաշտից. բայց ուրան  
և աշխատեցան և գուն գործեցին, ոյլ առանց  
նաւատորմի քաղաքին տիրելու չկարողացան։  
Երբ որ աշնային եղանակը վրայ հասաւ՝ Արքան  
Տրամայեց իւր զօրքին թողնել պաշարմունքը, և  
պատերազմական ձեռնարկութիւնքը յետաձել  
մինչև դարնան հասնելը,

Այս անյաջողակ արշաւանքը թողած՝ Պետ-  
րոսը վերադարձաւ Մոսկուա և իւր եղբօրը գտաւ  
մահճի մէջ հոգեվարբ, որ իւր անպահոյն և  
պարկեշտ կեանքը վերջացուց 1696ի Յունուարի  
29ին։

Գալ գարնան Պետրոսը վերանորոգեց իւր պատերազմական ձեռնարկութիւնքը և Վոոօնէժի նաւատորմիզը պատրաստ գտնելով՝ հետը առաւ և ուղղակի գնաց դէպի Աղով, և նոյն տարւոյ Յուլիսի 19/ին բոլորովին նուածեց քաղաքը:

Երբ որ Պետրոսը, Ազովը նուածելով, իւր ցանկալի նպատակին հասաւ, նորից գարձաւ իւր առժամանակ մի թողած զրադմունքին:

Այստեղ պիտի յեշենք յետագայ պարագան, որ նա նաւաշխնութիւնը և զօրավարքը կատարում էր ըստ մեծի մասին օտարազգի հմտութարդոց ձեռքով, որոնց մեծածախ պարզեներով, արտօնութիւններով բերել էր տալիս իւր մօտ: Եւ որովհետեւ նորա խորհուրդն էր վերաճել Ռուսաստանը, լուսաւորել իւր հպատակները և իւր տէրութիւնը դարձնել Եւրոպիոյ նախակարգ աշխարհներից մինը, նա իւր անժխտելի կամքը յայտնեց ամենին, որ այնուհետեւ մտադիր էր ընդունակ ուսւ պատանիներուն օտար երկիրներ ուղարկել, որ այնտեղ նոքա կարողանային հիմնաւորապէս սովորելու զանազան ուսմունք, գեղարուեստք և արուեստներ: Այս հրամանը աւագորերի և մեծատունների մջ սաստիկ դժկամակութիւն ծնցուց, պատճառ որ նոցա որդիքը, Պետրոսի հրամանով, նշանակած էին չուելու օտար երկիրներ. այն ժամանակ Պետրոսը կամելով նոցա վրդոված միտքը ան-

գորրացնելու, ազդու վաստերով հաստատեց,  
թէ ո՞րքան օգտաւէտ էր լուսաւերութիւնը  
որ և իցէ աշխարհի և ժողովրդի համար և ա-  
պա (որպէս զի առաւել համոզէր նոցա իւր ա-  
սածի ճշմարտութեանը) յայտնեց նոցա, որ ինքը  
մտադիր էր նոցա որդոց հետ ուղևորելու և  
ցոյց տալու թէ ինչ ու ինչ պիտի սովորին նո-  
քա, ինչ պէտք է փոխ առնուն օտարէն, և ինչ  
բանէ խորշին, զգուշանան : Այս խօսքերից յե-  
տոյ անհնար էր նորա հաստատուն կամբին դի-  
մադարձութիւն անելը. և խկոյն որոշուեցաւ  
Պետրոսի առաջին ճանապարհորդութիւնը Եւ-  
րոպայի մէջ :

Այդ խորհրդով կազմուեցաւ դեսպանա-  
գնացութիւն դէպի գլխաւոր արքունիքները եւ-  
րոպական տէրութիւններին. այդ դեսպանագնա-  
ցութիւնը բազկացած էր երկու հարիւր եօ-  
թանասուն հոգիէ, որոնց թիւը կային երե-  
սուն և հինգ ազնուատոհմիկ երիտասարդներ,  
որոնք պարտաւոր էին օտար երկիրներումն ու-  
սումն և գիտութիւն ստանալու : (Բացի դորա-  
նից, առաջ ևս նոյն խորհրդով ուղարկուած էին  
հարիւր երիտասարդ): Ինքը Ալքան՝ Պետրոս  
Միխաիլօվի անունով ուղեկից էր այդ դեսպա-  
նագնացութեանը, որ 1696ի Մարտի 9ին մեծ  
հանդիսով դուրս ելաւ Մոսկուաէն: Երբ որ Ռի-  
գա քաղաք հասան, Եվրացոց տէրութիւնը

մեծամեծ արգելքներ և անհաճութիւններ ցոյց  
տուաւ Ռուսերին, և շատ կարելի է, որ այդ  
անախորժ գիպուածը և թշնամական ընդունե-  
լութիւնը նոցա կողմանէ առաջին անգամ ծնե-  
ցուց Պ'տրոսի սրտի մէջ ցանկութիւն գինլլան-  
գիան իւր իշխանութեան տակ նուաճելու։ Այս  
աեղից գեսպանագնացութիւնը մոտաւ Միտավա-  
քաղաք, ուր կուռլեանգիոյ դուքսը հիւրասէր  
և փառաւոր ընդունելութիւն արաւ նորան իւր  
պալատի մէջ. ևս առաւել մեծաշուք հիւրասի-  
րութիւն երեցուց նոցա կեօնիգսբերգումն մեծ  
կայսրնախիր Փրիգրիկոս Գու, ուր Պ'տրոս  
Աքքան եկել էր գեսպաններից շատ առաջ, և  
իւր աստիճանը ծածուկ պահելով նորանից,  
սուտ անունով նրա հետ խօսելով, զարմա-  
ցուց ասլագայ Պրուսախիոյ թագաւորին թէ՛ իւր  
գերբնական գիտութենովն, թէ մոքի զգօնու-  
թենովն և թէ իւր ընդել բարբովը։ Այդ միջոցին  
Պ'տրոսը հաստատագէս իմացաւ, թէ որբան  
շատ սիրում և յարգում էին իրեն Գերմանիոյ  
թագաւորներն ու իշխանները։ Բայց որովհե-  
տեւ նրան մի այլ իո՞ձ ձգում էր գէպի առաջ՝  
նա շուտ թողուց Գերմանիան և շտավեց գնաց  
Հոլլանդիա, ուր սլանում էր նորա հոգին, ուր  
նա անձամբ կամենում էր սովորել նաւաշինու-  
թեան ձարտարապետութիւնը երևելի վարպետի  
մօտ և ուր, նորա կարծիքով, աճում և ծաղ-

կում էին ազգի ազգի գիտութիւնք և արուեստք, որոց մեծապէս կարօտ էր Ռուսաստանը։ Տակախն Ամստերդամին չհասած, նա ժողեց իւր ուղեկիցներին և ինքը շտապեց դէպի Հոլլանդիու մայրաքաղաքը. նորա մէջ գտնուած հազուագիւտքը բոլորը մտադրութեամբ աչքէ անցուց, հագաւ մի սոսկական հալաւ նաւաստիու, վարձեց նաւակ և դնաց դէպի Սանդամ, ուր նոյն Պետրոս Միխաիլովի սուստ անունովն, հասարակ աստաղձագործի պէս վարձկան մտաւ, և ինչպէս ինքը գրել էր Ազրիան պատրիարքին՝ „Երեսի քրտինքով հայթհայթում էր իւր օրական ապրուստը՝ այն խորհրդով, որ առաւել ճշգիւ կարողանար իւր նապատակին հասնելու, այսինքն՝ քաջ վարժուել նաւաշինութեան արուեստին։”

Հոլլանդիու մէջ մնալով Պետրոսը և՛ս առաւել ճոխացուց իւր միտքը պէս պէս և նորանոր գիտութիւններով, այլ ևս՝ սովորեցաւ շատ արուեստներ, և գուցէ առաւել երկար մեար այնտեղ, եթէ չի լսէր և չիմանար, որ Անդլիումը նաւաշինութեան արուեստը հասուցած է մինչև կատարելագործութեան գերագոյն աստիճանին։ Ուստի՝ թողեց Հոլլանդիան և շտապեց գնաց Լօնդօն. ’ի մօտոյ ծանօթացաւ և ապա սերտ բարեկամութեամբ կապուեցաւ Անգլիոյ Վիլհելմ՝ թագաւորի հետ. հիմնաւորապէս սո-

վորեցաւ նաև ային ճարտարապետութիւնը. և երբ  
՚ի պատիւ նորան ներկայացուցին ծովային զօ-  
րամարդզը, Արքան այնպէս հիացաւ այդ հան-  
դիսովը, որ բերկութեամբ աղաղակեց. „Եթէ  
ես Ռուսաց Արքան չլինէի, ցանկանալով կըցան-  
կանայի անգլիական ծովապետ լինելու“:

Անգլիան թողած, Պետրոսը Սաքսոնիոյ վե-  
րայով եկաւ Վեննա, ուր ՚ի պատիւ նորան Աէօ-  
պօլք կայսրը դիմակախաղ ներկայացուց. այդ  
հանդիսի մէջ Ռուսաց Արքան և Թուրք օրիորդը  
հագուած էին փրիսլեանգիու գեղջուկի զգեստ:  
Կայսրը փրիսլեանգական գեղջուկին դաշխու-  
րանով գինին մատուցանելիս, ասաց. „Խնձ  
յայտնի է, որ դուք ճանաչում եք Ռուսաց մեծ  
Արքային. եկի, խմենք նորա կենացը“: Պետրոսը  
պատասխանեց. „Ճշմարիտ է ասածք. ես նորան  
ճանաչում եմ, և գիտեմ, որ նա քու անկեղծ  
բարեկամն է և թշնամի է քու թշնամիներուն“:

Պետրոսը կամենում էր Վեննայից դէպի Կ-  
տալիա ճանապարհորդելու, բայց յանկարծ լը-  
տաւ, որ Ռուսաստանը նորից ընկել է աղմուկ-  
ների և յուղմունքի մէջ, ուստի շտապեց գնաց  
Մուկուա:

Այսպէս վերջացաւ Պետրոս արքայի առա-  
ջին ճանապարհորդութիւնը Խւրոսկիու մէջ, երբ  
նա ոչնչնչ անփոյթ չ'թողուց, ինչ որ կարող էր  
օդտարեր լինել իւր սիրական հայրենիքի հա-

մար. Երթիւեկութիւն էր անում գործարանների, համալսարանների մէջ, այցելութիւն էր անում ժամանակակից ուսումնականներին, և վարձում էր ու դէպի Ռուսաստան էր զրկում հմուտ արուեստագէտներ, մեքենաներ էր գնում, և այդ ամենը միայն այն բարի դիտաւորութենովն էր անում, որ դիւրացնէր իւր սիրական Ռուսիան, որոյ վիճակը Աստուած աւանդել էր նորա ձեռքը:

Ապատամբութիւնը, որ ընդմիջեց Արքայի արդիւնաւէտ ուղևորութիւնը Ռուսաստանի համար, կատարել էին նոյն խակ Ստրէլցյները, ուրնք առաջուայ վրդովմունքի համար աքսուրուած էին հեռաւոր քաղաքներ: Կարծելով որ Պետրոս Արքայի բացակայութիւնը Ռուսաստանից՝ շատ բարեյաջող միջոց էր նոյայն յետ դարձնելու իւրեանց կորուսած արտօնութիւնները և իրաւունքը, գաղտնի դաւ խորհեցին և միասին ժողովուած՝ մօտեցան Մոսկուախն այն չար դիտմամբ, որ կողոպտէին քաղաքացիների ըստացուածքը, մորթէին բոյարներին և Ռուսիոյ գահը նորից նստեցնէին Սովիիա դշխոյին. բայց նոցայ յանցաւոր դիտաւորութիւնքը անարդիւնք մնացին: Եւյն սպարապետը ջարդ ու կոտոր արաւ նոցա բազմամբոխ խումբերը Յարութեան մենաստանի մօտ, գլխաւոր ապստամբիչներին դլխատեց և նոցա յուղմունքին վերջ դրաւ, այնպէս որ՝ երբ Պ'տրոսը Մոսկուա վերադարձաւ,

ոչինչ չէր մնում նորան կատարելու, բայց եթէ յանցաւորներու գլուխներու վրայ մահու դատակնիք կարդալ: Պետրոս անյասլաղ վճռեց նոցա վիճակը, ցիր և ցան անելով ապատամբներին և իսպառ բնաջինջ անելով Ստրէլչյների անունը՝ յաւիտեան վերջ դրաւ այդպիսի չարաբաստիկ անցքերին:

Դայց փոխարէն այս մշտայոյզ զօրքին, Արքան Հրովարտակ Հանեց 1699ին առաջին զօրաժողովի մասին, որով գումարուեցաւ երեսուն երկու Հաղար Հոգի, որոցմէ կազմուեցան քսան իննը Հետևակ և Հեծելազօր գնդեր: Զարարախտիկ էր այդ տարին Ռուսաց Արքայի համար. այդ միջոցին նա զրկուեցաւ իւր ընտիր բարեկամն, դաստիարակչէն և իւր ծանր աշխատանքի օգնականն: Խոսքս Լը-ֆօրթ զօրապետի վերայ է, որի մահը շատ՝ և դառն արտաստնչով սդաց երախտագէտ Արքան: Լը-ֆօրթից յետոյ մինը միւսի եւտէն մեռան Պետրոսի ընտիր ընտիր օգնականները, — Գօրդօնը և Շէնը, Սոցա տեղը բռնեցին նոր և Հանձնարեղ մարդիկ, նոր մտերիմ՝ բարեկամներ, որոց մէջ նշանաւոր է Պետրոսի սիրական Ալէքսանդր Մենշիկովը, որ նախ Լը-ֆօրթի մօտ տան սպասաւոր էր, բայց հետզետէ ցոյց տալով իւր քանիքարը, թէ սկատերազմի դաշտումը և թէ քաղաքական կառավարութեան մէջ, հասաւ մե-

ծամեծ աստիճանների և պատուանունների, և  
քանի որ կենդան էր իւր բարերարը — Պ'տրոս  
Արքան՝ երբէք բաղզը խոժոռ աչքով չնայե-  
ցաւ նորա վրայ . . .

Կոյն իւկ 1699 թուականումը Ռուսերը  
դադարեցան իւրեանց տարեհաշխուը (տոմարը)  
աշխարհի ստեղծմանից բոնելու, ինչպէս որ  
մինչև այնժամանակ սովորութիւն կար. 1770  
թուականից Պ'տրոսի կամքով սկսուեցաւ Յու-  
լիոսի տոմարը, ինչպէս և բոլոր Եւրոպիոյ աղ-  
գերն էին կատարում՝ Քոիստոսի ծննդից սկսած,  
և նոր տարու մուտքը քանի քանի օրեր միմեանց  
հետեւ մեծաշուք հանդիսով կատարում էին:

Հատ և մեծամեծ գործեր կատարեց Պ'տ-  
րոսը Ռուսաստանի համար, իւր գահակալու-  
թեան օրից սկսած՝ մինչև սկիզբը տասնեւութիւ-  
նորդ գարուն. բնաջինջ արաւ դրանիկների գեղ-  
խութիւնը. վերջ զրաւ այն բարբարոսական  
սովորութեանը, որ ունէին մանաւանդ Ռուսի  
աւագանին՝ կանսանց սեռը փակած տռանձնարան-  
ների (սվետլից ա) մեջ պահելու. այդ խորհր-  
դով նա սովորութիւն մտցուց ասսամբ լէ.յ  
(ժողովարան) հանդէսը, ուր ամեն դրանիկ պար-  
տաւոր էր բերել իւր ամուսինը և դուստրները  
եւրոպական ձորձ հազցրած. Միւս պարագանե-  
րումը նորա գործքը ևս առաւել օգտակար էին  
ժողովրդի համար. նա առաջին անդամն հիմնից

զինուորական, ծովային և ուրիշ ուսումնարտուներ, բարւոքեց և կարգի կանոնի բերեց դատաստանատունները, նոր օրէնք և քաղաքական լրագիրներ հրատարակեց, սլատոնական աթուներից (այբուբենը) վերակազմեց աշխարհականը: Վաճառականների և արուեստաւորների գործունէութիւնը աճեցնելու համար՝ հրամայեց ջրանցքներ փորել, գործարաններ, տարագտնոյներ և արուեստատուններ հիմնել. մէկ խօսքով, տէրութեան ամեն գործքումը ձեռնամուխէր լինում, նախ օտարազգիներու գործակցութենովն, իսկ յետոյ՝ այն ոռուերի, որոնք զանազան գիտութենով ճոխացած յետ էին գարձել օտար երկիրներից. կարճ ասենք, նա բոլորովին փոխեց Ռուսաստանի և ոռուերի ներքինքը և արտաքինքը, և այն, որոյ համար պէտք էին ամրող գարեր, նա միմիայն իւր հանձնարի զօրութենովը, իւր կամքի հաստատութենովը, գրեթէ, մի տառնեակ տարումը կատարեց:

Վորաչաս դարու հետ միասին Պետրոսի առաջև եկան հանդիսացան նորանոր անցքեր, որ միանգումայն կարող են մեզ առասպելական, գերմարգկային երեխել, եթէ միտք անենք, թէ ինչ չնչին հնարներով և ինչպիսի ձախողակ ժամանակումը ստիպուած էր գործ կատարելու Ռուսաստանի վերանորոգողը և սպատմութեան հրաշակերտը—Մեծն Պետրոս :

Կամելով յետ դարձնել մի ժամանակ Ռուսերի  
ձեռքից խլած Խնդրիա և Կարելիա գաւառները  
Եվեղացիներից. այդ խորհրդով Պետրոսը զի-  
նակցութեան դաշնք կուց Դանիու, Պրուսիու  
և Արչաստանի թագաւորների հետ՝ Կարոլոս  
12րդ Եվեղացոց թագաւորի դէմ։ Այս երիտա-  
սարդ թագաւորը զեռ ևս նոր էր ստացել Եվե-  
ղիոյ գահը՝ իւր Կարոլոս 11րդ հօր վախ-  
ճանելից յետոյ, որ իւր իմաստոն կառավա-  
րութենովն՝ Եվեղիան դարձուցել էր ամենա-  
հզօր տէրութիւն հիւսիսացին երկիրների մէջ։

Դժուար էր Պետրոսին իւր նորընակոր, ան-  
կիրթ և անփորձ զօրքովը մաքառելու հիւսի-  
սային հսկայի հետ, որի զօրքը ինչպէս կուռ  
երկաթ միաձ պատերազմի դաշտերումը, իւր-  
եանց պատերազմական հրահանդովը սասանեց-  
նում էին բոլոր Եւրոպիոյ աշխարհները. բայց  
վեհանձն Պետրոսը անյողգողդ մնաց այդ վտանգի  
սովոր, ոչինչ չսարսափեցուց նորան, որ ու  
գիշեր խորհում էր իւր աշխարհի բարեմաս-  
նութեան համար։

Երբ որ մարտը երկուստեք յայտնուեցաւ,  
Պետրոսը իւր զօրքը Նօվօգօրօդի վրայով խա-  
ղացուց դէպի Նարվա բերդաբազմոքը և Հոկտեմ-  
բերին պաշարելով քաղաքը, սկսաւ յարձակ-  
մունքներ անելու նորա պարսպի վրայ։ Բայց մի  
ամիս անցած, քաղաքական գործերը ստիպեցին

Պետրոսին վերադառնալ իւր երկիրը, որ Շերեմելիսիլին հետը տռած՝ թողաւ զօրքը և գնաց. իսկ սպաշարող զօրքի գլխաւոր կառավարութիւնը յանձնեց Գէօ-կոօա գքսին, որ փոքր ինչ ժամանակ յառաջ մտած էր Ռուսաց պաշտօնը: Նոյն միջոցին կարուս 12ր իւր երկոտասան-հազարեայ ընտիր զօրքի գլուխն անցած՝ մօտեցաւ Նարվաին, և հանդիպելով Ռուսաց զօրքին, որ թէ և աւելքան թէ չորս անգամ բազմաթիւ էր նոցանից (50,000) բոլորովին խորտակեց, շատ զօրապետների կալանաւորեց, որոց մէջ էր նաև գլխաւոր հրամանատարը զօրքին Գէօ-կոօա գուքսը: Անմեկնելի գառնութեամբ Նօվօգօրօդումը լսաւ Պետրոսն այդ յաղթութեան գոյժը. բայց այդ առաջին ձախողութիւնը չվհատեցուց նորա մեծածն հոգին. „Թողլ այժմ ջարդեն մեզ Շվեդները, ասաց նա, բայց նոքա յաղթելով մեզ յաղթել ևս կըսովքեցնեն:“ Եւ իսկոյն հրամայեց ցրուած զօրքը հաւաքել, նոր զօրաժողով անել և յարտակել պատերազմը:

Դեկտեմբերի 13ին Կարուս 12ր թողաւ Նարվան և քաշուեցաւ իւր ձմեռնային բանակետղը, որ գետեզուած էր Գօրապատ քաղաքի շրջակայքումը Ինգրիումը թողնելով ութհազարեայ զօրաբաժին Կրօնկեօրթ զօրապետի տառաջնորդութեան տակ: Նոյն միջոցին Պետ-

բոսը Նօվօգօրօղից վերադարձաւ Առոկուա և այստեղից, մինչև գարնանամուտքը և պատերազմական գործերի սկիզբը, գնաց Բիրժի Ահճաց Աւգուստ թագաւորի հետ բանագնացութիւն անելու. և 1701ին Փետրուար ամսի մէջ նոր դաշնաք կոեց նորա հետ, որոյ պայմաններն այն էին, որ նոքա միացած զօրութենով պիտի յարձակուէին Շվեդների վրայ :

Երբ որ այդ բանագնացութիւնը Ահճացոց թագաւորի հետ վերջացաւ, Պետրոսը նորան զօրապիտն ուղարկեց քսանհազարեայ զօրաբաժին՝ Ռէպնին զօրապետի առաջնորդութեան տակ. Մայիս ամսու մէջ Կարոլոսն ևս իւր Կրօնգեօրթ և Շլիպպէնբախ զօրապետներին բաւականին դօքք յանձնելով՝ թողաւ որ նոքա պաշտպանէին իւրեանց սահմանները Ռուսերի յարձակմունքից, և ինքը պատերազմի ասալարէզը տեղափոխեց Սաքսոնիա և Ահճաստան, այն դիտմամբ, որ Աւգուստին գլորէր Ահճաստանի աթոռէն. Պետրոս Արքան դիպուկ համարելով այդ հանգամանքը և իւր իմաստուն կարգագրութենովն անսալարեց ուղղելու իւր զօքքի պարաւաթիւնը Շվեդների զէնքից Նարվաի առջև :

1702 տարուոյ միջոցը Շերեմետենվը անդադար փոքրիկ կոխւներով զբաղած էր Շվեդացիների հետ Ինգերմանլեանդիումն և Փինլեանդիումն և զգուշանում էր մեծամեծ պատերազմ-

Ներից, որպէս զի նորա զօրքը ընդելմնար կա-  
նոնաւոր մարտերի. այդպէս ներգործելով՝ նա  
տկարացնում էր Շվեդների ոյժը և գրեթէ առնեն  
տեղ յաղթող էր հանդիսանում։ Պետրոսն ևս  
այդ միջոցին անգործ չէր մնացած. քաղաքէ քա-  
ղաք, տեղէ տեղ անցնելով խոր լայնածաւալ աշ-  
խարհի մէջ, անգադար նորանոր հնարներ էր  
որոնում խոր թշնամու դէմ, զօրաժողով էր լի-  
նում և շատ անգամ նաև պատերազմի մէջ՝ ի  
գործ էր գնում Թաթարներին, Ղալմուխներին  
և Բաշկիրներին։ Ուր որ պէտք լինէր նորա ներ-  
կայութիւնը՝ խսկոյն գալիս էր այնտեղ։ Արքայի  
այդպիսի հոգացողութիւնը անարդիւնք չի մնաց.  
Նորա խմաստուն կառավարութենովն Ուուսերը  
շատ անգամ կարողանում էին արդին յաղթել  
թշնամիներուն, ինչպէս որ զորօրինակ պա-  
տահեցաւ այդ էրեսատիէր գիւղի մօտ Կիբ-  
լեանդիումը, ուր սպանեցին 3000 թշնամի և  
շատ յաղթանակների նշաններ խլեցին նոցանից։  
,,Փառք Աստուծոյ, ասաց Պետրոսը, մենք հա-  
սոնք այն օրուան, երբ որ Ուուսերը արդին  
յաղթում են թշնամուն, թէ և երկու հոգի մի  
հոգու վերայ յարձակուելով. բայց շուտով մենք  
կըսկսենք յաղթելու Շվեդներին, հաւասար զօ-  
րութենավ։

1701 թուականին Յուլիս ամսու մէջ, Շվեդ-  
ներին արշաւեցին Արխանդելուկը. բայց Պետ-

րոսը, որ 'ի վաղուց հետէ գիտէր թշնամու դիտաւորութիւնը, կանխաւ հոգացել էր այդ մասին, որով և Նվեդացիների ձեռնարկութիւնը անսպառել մնաց:

Կերեմետեվլն ևս միւս կողմօնէ պարագ չէր մնացած. անդադար պատերազմելով Նվեդների հետ, շատ անգամ յաղթում էր նոցա հետղհետէ տիրում էր նոցա քաղաքներին և երբեմն քանդում և աւերում էր, ինչպէս զորօրինակ Հումալուհօֆը, Վոլմարը և Մարիէնբուրգը. այս վերջին քաղաքումը շատ կալանաւորների մէջ էր և Բողոքական (Պրոտէստանտ) Գլիւք անունով քահանան՝ իւր Եկատարինէ Սկաւոօն սանովն, որ յետին ժամանակներն ամուսնացաւ Պետրոս Արքային և դարձաւ Ռուսախոյ կայսերուհին, որ պատմութեան մէջ յայտնի է անունով Եկատարինէ Ա.

Երբ որ տեսաւ Արքան, որ յաղթութիւնը միշտ բարեյաջող էր իւր զէնքին՝ իսկոյն խորհեցաւ իւր վաղուցուայ ըղձացած խորհուրդն էացնելու, որ է ամրանալ ֆինեան ծոցի վերայ. այդ գիտմանը սկսաւ իւր ամեն զօրքը գումարել Խնդրիու մէջ, որ այնուհետեւ գիւրին լինէր Նօտէրբուրգ (Պոէշէք) բերդին տիրելու, որ կայ Նեվա գետի ակոնքի մօտ, ոչ հեռի Լադօգա լճէն: Աւելորդ է այստեղ նկարագրել այն ամենայն գժուարութիւնները, որն որ կը ե-

ցին թէ Պետրոս Արքան և թէ նորա մտերիմ գործակիցները, այսպան ևս շատ է, եթէ ասենք, որ Ռուսերը Սեպտեմբերի 27ին մօտենալով Նօտէրբուրգին, մի անչնարին պաշարմունք և յարձակմունք անելով՝ տիրեցին նորան Նոյեմբերի 11ին։ Այս նոր յաղթած բերդի անունը «Շլւասէլբուրգ» (բանալի քաղաք) դրաւ Պետրոսն այն խորհրդով, որ իրը թէ դա պէտք է բանար Ռուսերի առջև Բալտիկ ծովը։ Այս յաղթութիւնը կատարելից յետոյ Պետրոսը գնաց Մոսկուա, ուր նա իւր հանգիստոր մուտքը կատարեց երեք յաղթանակի կամարների միջով։ Բայց լոկ Նոտէրբուրգի նուաճումնը տակալին բաւական չէր Պնտրոս Արքայի իզձը, որ է Բալտիկ ծովու եղերգում հաստատուելն, բոլորովին լցնելու, պէտք էր նաև Նիեշշանց անունով բերդը նուաճելու։

Այդ խորհրդով, 1703ին Պետրոսը նորից գնաց Շլւասէլբուրգ, ուր նորա ետևից անմիջապէս Շերեմետ'ևի սպարապետը ևս իւր զօրքով եկաւ։ Նիեշշանց բերդը երկար ժամանակ չկարողացաւ գիմադարձութիւն անել այդպիսի հզօր զօրքին, որն որ ունէր այժմամանակ Պետրոսը, Պայիսի մէկին արդէն Ռուսերը տիրեցին նորան։

Այս կերպով Ռուսերը տիրեցին Նեվա գետի հոսած բոլոր տարածութիւնը, և Պետրոս

Արքան իւր Հանձարի զօրութենուլն իսկ և իսկ գնահատեց այն մեծամեծ և ծանրակշիռ օգուտը, որ կարող էր բերել Ռուսաստանին այս նոր յաղթութիւնը, կամեցաւ առ միշտ պահպանել իւր ազգի Համար այս երկիրը. և իսկոյն Հաստատ խորհուրդ որոշեց Հիմնել մի ընդարձակ ծովափնեայ քաղաք. բայց որովհետև Նիեշանցը շատ հեռու էր Նեվաի գետաբերանից և ծովից և Համաձայն չէր Պետրոսի դիտաւորութեանը՝ նա Հրամացեց որ Հիմնից քանդեն այդ բերդը և նորա տեղ նորը Հիմնեն՝ Նապաստակի-Կղզիի վրայ :

1703ի Մայիսի 16ին Ս. Եղորորդութեան տօնի օրը Արքան իւր ձեռքով դրաւ առաջին Հիմնաքարը նոր բերդին, որ նոր շինուելու քաղաքի հետ միասին կոչեց ՍԵՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, այսինքն՝ Սուրբ Պետրոսի քաղաք :

Վարդ դժկւար կըհաւատայ, նայելով այժմուայ հոյակալ, գեղեցիկ Պետերբուրդ մայրաքաղաքի վերայ, երբ որ իմանայ թէ՝ ուր որ նա զարդարած կանգնած է իւր մեծակառոյց շէնքերով, որձաքարով պատած երկարաձիգ ջըրանցքներով և այն ամեն շքեղութենով, որ Հարիւրաւոր տարիներով հնարել է Եւրոպան, Հարիւր վաթսուն աարի դորամէն առաջ մի անբնակ, ամսայի և Ճախճախուտ երկիր էր:

Երբ որ Պետրոս Ալքան իւր համհարեղ Խելչքովն այս կէտն ընտրեց, նա իսկոյն նախատեսաւ, որ այս տեղումը շինած քաղաքը պիտի անյաղթելի պահապան լինի Շվեդացոց աշխարհականներու գէմ, երբ նորա կըկամենային Ռուսաց նոր գրաւած գաւառները յետ խլելու. Նմանապէս նախատեսաւ, որ այդ նորաշէն քաղաքի միջնորդութենովը Ռուսաստանը առաւել՝ ի մօտոյ կըծանօթանայ եւրոպական լուսաւորութեան հետ և մօտիկ գանուելով Բալտիկ ծովին, նա իւր մ.ջ կըժողովէ բոլոր աշխարհի հարստութիւնը:

Պետրոս Ալքան առաջին քարը Պօղոս-Պետրոսի բերդի հիմնարկութեան զնելից յետոյ՝ այնուշետե օր ու գիշեր արթուն աճքով աշխատում էր քաղաքի հիմնարկութեան վերաց. Եւ որպէս զի ինքն անձամբ կարողանար զնելու գործաւորների աշխատութիւնը՝ Տրամայեց բերդից երկու հարիւր կանգնաչափ հեռու. Կելայի տփին մի անակ շինել, որ մինչեւ այժմ կայ, ինչպէս յիշատակ և առաջին վկայ Պետերբուրդի հիմնարկութեան:

Վանի որ Պետրոս Ալքան անխոնջ գործունեութեամբ աշխատում էր քաղաքի և բերդի շինութեան վրայ, որ չորս ամսուց յետոյ պատրաստեցաւ. և ամէ ացաւ. Շվեդիներից խլած

Թնդանօթներովն, նորա զօրսովարները հետք-  
հետէ գրաւելով Եսոյ և Կոստորիէ քաղաքները,  
ռոլորովին տիրեցին Ինդրիա զաւառին։ Ինքը  
Պ'տրոսը շատ անդամ ստիպուած էր անձամբ  
կռուելու թշնամիներու հետ և՝ ի փախուստ  
դարձնելու նոցա, որք ամեն հնարն ՚ի զործ  
գրած՝ ջանք էին անում արգելառիթ լինել նո-  
րան նոր քաղաքի շինութեանը. և որովհետեւ  
նորաշին քաղաքը ծովի կողմանէ թշնամու երեւ-  
սից մեծ վտանգի մ.ջ էր՝ Պ'տրոսը հրամայեց  
ամրացնել Կոտլին կղզին (որ սյժմ կոսն շտատ  
է կոչվում), և Տիմինել այնտեղ ծովային բերդ  
կոօնչլոթ անունով, և այդպէս՝ քաղաքը պաշտ-  
պանեց թշնամու յարձակմունքից ծովու կող-  
մանէ։

Այդ միջոցին Արքայի հրամանով մերձա-  
կայ շրջակայքումը շինվում էին պատերազմա-  
կան նաւեր, ցոկանաւեր և նաւակներ, և շու-  
տով կաղմուեցաւ բալտիկական նաւատորմիզը։  
Այս կերպով ապահովացնելով իւր սիրական  
քաղաքը ծովի կողմին նաւատորմիզով և բեր-  
դով, մ.ջը լցնելով բաւականին բերդապահ  
զօրք, Ռին կառավարչի իշխանութեան ներքոյ,  
և քաղաքի շինութիւնը և մեծացնելը իւր սի-  
րական Մենշիկովի (Պ'տերբուրգի առաջին գա-  
ւառապետը) ինամատարութեանը յանձնած,  
Պետրոսը վերադարձաւ Վոսկուա։

Կոյեմբեր ամիսն էր, երբ Պետրոսը իւր  
հանդիսաւոր մուտքը կատարեց Մոսկուաի մէջ,  
ուր ցնծալիր ժողովը իր բազմութիւնը նորա ա-  
ռաջ գալով՝ յայտնեց երախտագիտութիւնը  
դէսի իւր Արքան, որի սխրագործութիւնքն ար-  
դէն սկսել էր հասկանալու:

## ԵՐԵՎԱՆԻ ԳԼՈՒԽ

Երեվանի հոգ կու նուանումը : — Կարուլսս գշտէ հետ մղած մար-  
տիրը : — Պօլոսավահ յաղթութիւնը :



Ա, ի՞նչեանդիու նուաճումը՝ — Կարոլոս 12րդի հետ մղած մարտաբառը: — Պօլուակաի յաղթութիւնը:



ոլորովին, գրեթէ, նուաճուած էր  
Ախիլեանդիա գաւառը Ռուսաց զէն-  
քին, մնում էր միայն գրաւել Գօրակատ և  
Նարվա քաղաքները: Կարոլոս 12րդի և նորա  
պլսաւոր զօրքի հետու լինելը Բալոիկական ա-  
փերէն բարեսպատեհ միջոց համարելով՝ Պետ-  
րոս Արքան հրամայեց խոր զօրքին ուղիղ գեպի  
Գօրակատ վազել, որն որ շուտով պաշարուեցաւ  
Ռուսերիցն՝ Եկեմետեսելի առաջնորդութենուին,  
Նոյն իսկ միջոցին Ապլակոյնը իրեն յանձ-  
նած զօրքով խաղաց զնաց գեպի Նարվա: Այդ  
երկու բերդորայքը՝ մինը Յուլիաի 13ին և միւսը  
Պոստոսի 9ին նուաճեցան Ռուսաց, ուր ան-  
ձամբ զօրավիգն էր ինքը Պիտրոս Արքան: Նար-

վախն տիրելով՝ Ռուսերը փառաւոր կերպով  
վերջ տուին իւրեանց արշաւանքին՝ 1709ին կա-  
տարուած :

Երբ որ Պետրոսը իւր իշխանութիւնը  
ամրացուց Բալտիկեան ափերին, այնժամանակ  
իւր զօրքի մեծագոյն մասը զարձուց դէպի օգ-  
նութիւն գահընկեց Աւգուստ թագաւորին Կե-  
չաց, որի վոխարէն կարուս 12 ուր ընտրել էր  
և թագադրել էր Ստանիսլաւ Կեշինսկիին : Հա-  
մարելով որ իւր ներկայութիւնը մեծապէս պի-  
տի օգնէր պատերազմի յաջողակ ելքին՝ Պետ-  
րոսը դնաց դէպի Պօլօցք, որպէս զի մօտ լինէր  
կռուի ասպարիզին : Լովենհառուպտ զօրավարը  
տեսնելով որ Ռուսաց զօրքը Պօլօցքումն է գու-  
մարվում, կարծիքի եկաւ, որ մի գուցէ Պետ-  
րոսը դիտաւորութիւն ունէր Ռիգա քաղաքի վե-  
րայ արշաւանք անելու, և որպէս զի կարողանար  
արդելառիթ լինել այդ բանին՝ իւր զօրագունդը  
գումարեց Միտավաի չորս կողմը : Պետրոսը  
կամենում էր դէպուզիզ կարուսի վրայ յար-  
ձակուելու, ուստի պատուիրեց Շերեմետեվին  
վազել Լովենհառուպտի վրայ և նորա զօրքը  
կտրել, անջատել Ռիգաից : Շերեմետեվին իւր  
երկոտասան-Հազարեայ զօրաբաժինովն արագ ա-  
րագ հասաւ թշնամու ետեից, գնաց կանգնե-  
ցաւ նոցաւ և Ռիգայի մէջ տեղը, կռուեցաւ նոցա-  
չետ և արդէն յաղթութիւնը դէպի Ռուսերի

կողմն էր հակում. յանկարծ նորա իշխանութեան տակ դտնուած զազախներն և թաթարները չի մնալով պատերազմի վերջին՝ շտապավագեցին թշնամու սայլերի վրայ՝ որ կողոպտեն, և շփոթեցին զօրքի կարգը, և այդ կերպով միջոց տուին Լովէնհառուպտին վերանորոգել կրոխը և յետ մղել Ռուսերին։ Այս ձախողակ ելքը պատերազմի լսելով՝ Պետրոսն ինքը դիմեց Լովէնհառուպտի վերայ, և թէ և իւր բոլոր ճիգը գործ էր զրել և ամեն կերպ զգուշութիւնքը նախատեսել էր, բայց չկարողացաւ նորա ձանապարհը կտրելու, որ հմուտ շարժուածքով սալրդեցաւ փախաւ Ռուսերի ձեռքից, և գնաց պատրսպարուեցաւ Ռիգաի սպարապի ետև։ Պետրոսը աճապարելով՝ սկսաւ հալածել նոցա և հասաւ մինչև Ռիգաի սպարիսապը։ բայց լաւ զննելով նորա ամրութիւնքը՝ հասկացաւ որ տակաւին ժամանակը չէր նորան պաշարելու, դարձաւ դէպի Միտավա և Սեպտեմբերի եին տիրեց նորան։ Այս տեղից Պետրոսը դիմեց դէպի Գրօղնօ, ուր էր նորա գլխաւոր զօրքը Օգիլվի սպարապետի առաջնորդութեան տակ, իսկ Շերեմետեվը ուղարկած էր Աժտէրխան, ուր Մտրէլշները նորից ոտքի էին ելել, քանի որ Արքան զբաղուած էր Միտավաի պաշարմունքով։ Շերեմետեվը յաղթեց ապատամբների խառնիճաղանձ բաղմութիւնը և Արքայի անունով ողորմութիւն

շնորհեց նոցա. իսկ գլխաւորներին, որք թուով երեք հարիւր հոգի էին, ուղարկեց Մոսկուա, և այնտեղ նոքա իւրեանց յանցանքի արժանի պապատուհասը ստացան :

Վլեզները մեծ երկիւղ ունէին Պետերբուրգի և Կրօնշտատի ծաղկելից և հզօրանալից, և նկատելով որ Ռուսի գլխաւոր զօրքը գնացել է դէսի Անհաստան, կամեցան շահուել այդ յաջողակ միջոցովից, և զէնքերը դէսի այդ երկու քաղաքը դարձուցած, կամեցան ջնջել Պետրոսի յաղթութեան հետքերը : Այդ խորհրդով նոցա ծովագետ Անկէրատիերնը իւր նաւատորմիջովը մօտեցաւ Կոօնչլօտին, իսկ Մէնդէլ զօրապետը ցամաքահողի զօրքով մօտեցաւ Պետերբուրգին, բայց ոչ մինը նոցանից յաջողութիւն չի գտաւ. Անկէրատիերնին յետ մզեց Ռուսաց Կռոյս զօրապետը, իսկ Մէնդէլին՝ յաղթեց Բախտը, որ այնժամանակ Պետերբուրգի ամրոցապետն էր:

Երբ որ Պետրոս Արքան Գրօդնօ՛ումն էր, եկաւ նորա մօտ գահազուրկ Աւգուստ թագաւորը: Ռուսաց Արքան խոստացաւ նորան յետ դարձնել Անհաստանի թագը, և իսկոյն դրեց նախարարակը ապագայ արշաւանքին Կարոլոս 12րդ վրայ. 1705ի Գեկտեմբերի 7ին թողաւ Գրօդնօ՛ն և գնաց Մոսկուա՝ իւր զօրքի վերայ գլխաւոր հրամանատար կարգելով Աւգուստին: Պետրոսի հեռանալից յետոյ անմիջապէս եկան

Նվեղները իւրեանց թագաւորի առաջնորդութեամբ և պաշարեցին Գրօդնօ՞ն։ Երբ որ Պետրոսը լսաւ թշնամու հասնելը, իսկոյն, արհամարհելով իւր մարմնու տկարութիւնը, շտապեց օգնութեան վտանգի մէջ գտնուած քաղաքին. բայց արդէն ուշ էր։ Դեռ ևս ճանապարհին՝ նա իմացաւ, որ թշնամին արդէն պաշարել է քաղաքը և Աւգուստը հետն առած Ռուսաց զօրքի մէծ մասը, գնացել է Սաքսոնիա։ Ի զուր էր ջանահնար լինում Պետրոսը որպէս և իցէ կերպով օգնութիւն հասցնել պաշարուած քաղաքին. միայն Ապրիլ ամսու մէջ, երբ գետերը հալեցան, Արքայի իմաստուն կառավարութենուին ու ուազմագիտական հնարքովը ազատուեցաւ քաղաքը վերահաս անձողոպելի կորստից։ Կամելով Կարոլոսի մտագրութիւնը դէպի ինքը դարձնել և առժսմանակ մի մոռանալ տալ պաշարած քաղաքը՝ Պետրոսը ութ-հազարեայ զօրաբաժինով դիմեցաւ 0ոշակի վերայ, մի և նոյն ժամանակ հրամայեց Մազլիփախն, որ իւր զազախներովն յարձակուէր Մինսկ, Սլուցք և Բրէսթ քաղաքների վերայ։ Բայց այս կարգադրութիւնները չբերին իւրեանց ետևէն Արքայի ցանկացած յաջողութիւնքը։ Այնժամանակ Պետրոսի մէջ մի փայլուն միտք ծնաւ, որ է—հրամայեց իւր զօրքին, որն որ պաշարուած էր Գրօդօնօ՛ի մէջ սառույցը հալելից յետոյ՝ գետի անդի ափը

անցնել և ետևներից կամուրջը պատառել և  
դէսպուղիղ թրէսթ երթալ Արքայի հրամանը  
ճշգիւ կատարուեցաւ. Որուսաց զօրքն առանց  
վնասի նահանջեցաւ և յաջողութեամբ հասաւ  
մինչև Կիեվ. Թէ և Կարոլոսը վազեց նոցա ե-  
տեւն, բայց ոչինչ վնաս չկարողացաւ հասցնել:  
Այս յաջողութեան աւետիքը ստացաւ Արքան  
Պետերբուրգի մէջ:

Մինչ այս մինչ այն, նորաշխ քաղաքը այն-  
պէս ճոխացել, լայնացել և շքեղացել էր, որ  
Պետրոսն իւր զօրավարներից մինին նամակ դը-  
րելով յիշում է, թէ նա կենում է իւր սիրական  
քաղաքի մէջ, ինչպէս դը ախտում մն: Բայց  
երկար չտեսեց Արքայի դադար առնելը իւր պա-  
տերապլական հոգսերից: Շուտով իմացաւ նա,  
որ Կարոլոսը հաստատ դիտաւորութիւն ունէր  
Արքաինա արշաւելու, այս մերձակայ վտանգի  
առաջքն առնելու համար, Պետրոսն անյապաց  
գնաց իւր զօրքի բանակետղը, որ հարկաւոր  
հոգսերը իւր ձեռքով կատարէ: Յանկարծ մի նոր  
անակնունելի լուր տարածուեցաւ, որ Կարոլոսը  
թողնելով այդ արշաւանքը՝ գնացել է Սաքսոնիա  
իւր բոլոր զօրքովը, որ ստիսէ: Աւդուստին հրա-  
ժարուիլ Ահաստանի աթոռեն և նորա փոխա-  
րէն Ստանիսլավ Աշխենսկիին հաստատէ:

Գրեթէ բոլոր 1707 տարուայ միջոցը Պետ-  
րոս Արքան երբեմն Ահաստանումն և երբեմն

Աիթուաի մէջ էր անցնում իւր ժամանակը, ամեն կերպ ջանահնար լինելով՝ որ իւր երկիրներն ազատ կացուցանէր Կարոլոսի բուռն յարձակմունքէն :

Անպարտելի Կարոլոսը իւր երկու ախոյաններին—Դիանիմարգի և Արչաստանի թաղաւորներին կործանելով՝ իւր փառքի ամենաբարձր աստիճանին հասած, իւր անմահ սխրագործութիւնքը կատարեալ դարձնելու համար, ցանկանում էր կործանել իւր վերջին և ամենից վըտանգաւոր թշնամիին—Պետրոսին. և այդ խորհուրդը և իղձը նորա դլաւոր նպատակը գարձած, այնուհետեւ ոչ օրը և ոչ դիշերը հանգըտութիւն էին տալիս նորան :

Երբ որ Կարոլոս 12րու իւր ոտքը Ռուսաստանի հողի վրայ դրաւ՝ նա անձամբ առաջնորդում էր յիսնհաղարեայ անյաղթելի զօրքին, ետևից ունենալով վեշտասանհաղարեայ զօրաբաժինը Լովենհառուստին յանձնած, որ գալիս էր ահագին բազմութեամբ սայլերով՝ լի ռազմամթերքով և կերակրոյ պաշարով. բաց յայդմանէմի այլ զօրաբաժին տասնեհինգ հաղար հոգուց բաղկացած թողել էր Կարոլոսը Փինլեանդիումը, որին Տրամայել էր աւերել Պետերբուրգը և Ռուսերից յետ խլել Պետրոսի յաղթած երկիրները : Այսպիսի մեծ զօրութիւն ունենալով

ձեռքումն, նա չշատացաւ, այլ աշխատում էր  
Թուրքերին ևս գրգռել, որ պատերազմ՝ բանային  
Ծուսաց դէմ, ևս և ուխտադրուժ Մազէվա  
Հէթմանին իւր կողմը հակեցուց, մեծամեծ խոստ-  
մունք անելսվ նորան, որ իւր զաղախներովն  
պիտի զօրավիգն լինէր Կարոլոսին՝ Արքայի դէմ:  
1707ին Օգոստոս ամսու վերջերին՝ Կարոլոսը  
թողաւ Սալբոնիան և Եկաւ Աւհաստան և Քանի  
մի ժամանակ զաղար առաւ Պօղնայնի շրջակայքը:

Այդ միջոցին Պետրոսը իւր իշխանութեան  
տակ ունէր երկու հարիւր հազար հոգի զին-  
ւոր, որոց առաջնորդում էին հմուտ և կըրթը-  
ւած զօրավարներ. բայց այդ բաղմախումբ զօրբը,  
որոնց շարքը անդադար մտնում էին նորընտիր  
զինուորներ, դեռ ևս չունէր այն պատերազմա-  
կան փորձառութիւնը, որ կարի հարկաւոր է,  
երբ պէտք է հանդէպ երթաւ թշնամուն՝ մի  
վճռական պատերազմի մէջ կոուելու համար.  
այդ պատճառաւ Պետրոսը, որ նախընթաց ար-  
շաւանկումն ևս զգուշանում էր մեծ և վճռա-  
կան պատերազմներից, ևս առաւել այժմ՝ հրա-  
մայեց իւր զօրավարներին, որ նոյն կանոնով  
վարուէին թշնամու հետ, այսինքն գուն գոր-  
ծէին, որքան կարելի էր ճարտար շարժմունքով  
յամրացնել նոցա առաջ խաղալը, աւերել և ա-  
մայացնել այն երկիրները, որոնց վրայով պիտի  
անցնէին նոքա, և առհասարակ պարապեցնել

նոցա մանր կոխւներումն, առանձին առանձին  
ջարդելով նորա զօրագունդերը:

Այսպէս պատրաստուելով մի մեծ կոռուի  
հոչակառոր ախոյանների հետ և իւր իշխանու-  
թեան տակ ունենալով երեքսատիկ բազմաթիւ  
զօրք, քան թէ իւր թշնամին, բայց մի և նոյն  
ժամանակ խնայելով իւր հաղատակների արիւնը,  
որ նա չէր կամենում՝ ի զուր թափել տալու,  
զաւակասէր Արքան նորից փորձ փորձեց հաշ-  
տուելու Կարոլոսի հետ, առաջարկելով նորան  
փոխադարձ օգտաւէտ հաշտութիւն. բայց Կա-  
րոլոսը հպարտութեամբ մերժեց իւր ախոյանի  
առաջարկութիւնը. այդ դիպուածով Պետրոս  
Արքան ասաց այս արժանայիշատակ խօսքերը,  
որ յետին ժամանակները յայտնի եղաւ,, ԽՄ Եղ-  
,, բայց Կարոլոսը կամենումէ Ալեքսանդր (Մակե-  
,, դոնացի) ձևանալ, բայց սխալվումէ, եթէ մի  
,, և նոյն ժամանակ խնձ Գարեհէ կարծում.։ Եւ  
այնուհետև Պետրոսը իւր բոլոր ուշք ու միտքը  
դարձրել էր մի մեծ առարկայի վրայ, որ է իւր  
սիրական հայրենիքի փրկութեան:

Պետրոսը իւր գլխաւոր զօրքովը Գրօղնօ  
քաղաքումն էր, Գեկաեմբերի վերջերուն Կա-  
րոլոսը իւր բոլոր զօրքովն անցնելով Վիալա  
գետը՝ սլացաւ դէպի Նեման և այնտեղից շոա-  
պով վազեց Գրօղնօ՚ի վերայ և 1708ի Յունուարի  
26ին նորա մէջ մտաւ. Կարոլոսի պաշարմունքը

այնպէս արագ էր, որ Պետրոսը հաղիւ ժամանակ գտաւ իւր զօրքովը քաղաքի դռնից դուրս երթալու, մինչ կարողաւ մի ուրիշ դռնից մտաւ նոյն քաղաքը։ Պետրոսի նահանջելը ուրիշ պատճառ չունէր, եթէ ոչ նոյնը, որ նա հետեւում էր մի անգամ բռնած կանոնին, այսինքն՝ միշտ զգուշանալ վճռական և մեծ կռուից կարողաւ հետ Շվեդացոց թագաւորը աւելորդ իմն կարծեց թշնամու ետեւից ընկնելով՝ ժամանակառ լինելը, այլ բարուք համարեց Մինսկի շրջակայքումն բնակել և ձմեռն այնտեղ անցնել և արշաւանքը յետաձել մինչև ամառուայ համնելը. իսկ Պետրոսը գնաց Պետերբուրգ և առ մեծի տարաբախտութեան, սաստիկ տկարացաւ.

Այդ միջոցին Գօն գետի մօտ ծագեցաւ Բուլավին սկի անունով երեելի ապստամբութիւնը։ Ապստամբներին հնազանդեցնելու համար Պետրոս ուղարկեց Գօլդոռուքիյ իշխանին՝ հարազատ եղբօր նոյն Գօլդոռուքիյին, որ ապստամբութեան ժամանակ սպանուել էր զաղախների ձեռքով։ Բայց որպէս զի զաղախները չկարծէին, որ Գօլդոռուքին դիտաւորութիւն ունի ոչ միայն հնազանդեցնելու, այլ և վրէժինդիր լինելու իւր եղբօր մահուան համար, Պետրոսը նորա հետ միասին իւր Ալեքսէյ անունով արքայորդուն ևս ուղարկեց, որ ապլատամբները ըրյուսահատուին և առաւել ուժգին

դիմաղարձութիւն ըստոյց տան . շատ ժամանակ վրայ չանցած, տալատամբները բոլորովին հնագանդեցան, բացի մի զաղախէ Նեկրասօվ անունով, որ իւր համախոհներին հետը առած՝ փախաւ Թուրքաստան և Սուլթանին հպատակ գրուեցաւ :

Յունիս ամսուն Կարոլոսը իւր զօրքը խաղացուց դէպի Բերեղինօ աւանը և փոքր ինչ հեռու նորանից Գօլովչինա գեղի մօտ սաստիկ ջարդ տուաւ Ռուսաց զօրքին . բայց այդ յաղթութիւնն առանց մի նշանաւոր հետեւանքի մընաց և ներկայ արշաւանքի վրայ ազգեցութիւն չունեցաւ : Ռուսերը նահանջեցան դէպի Շկլօվ, իսկ Կարոլոսը գրաւեց Մինսկ քաղաքը : Այստեղ սպասեց իւր Լովենհատաւտ զօրավարին, որ հետն առած պիտի բերէր մի զօրաբաժին և կերակրեղինի շատ պաշարք, որին մեծապէս կարօտ էին Կարոլոսի զօրքը . պատճառ որ աւերած և ամայացած երկրումը, ուր որ էին նորա, չէին կարողանում ձեռք բերել իւրեանց համար ուտելիք և այլ ասլրուատի համար հարկաւոր առարկաներ : Բայց համբերութիւնը չհասաւ մինչև նորա գալը և չիմանալով պատճառը նորա յապաղութեան, Յգոստոս ամսու սկզբանը ելաւ և սկսաւ մօտենալու Ռուսաստանի սահմաններուն:

Պետրոսի սիրտը խոր խոցուած էր Կարո-

լոսի յաղթութենովն, որ կատարել էր նա Գօ-  
լովչին գեղի մօտ և դիակող ժամի էր մնում իւր  
վրէժն առնելու: Գօրորյ աւանի մօտ դարձեալ  
հանդիպեցան իրար Շվէդները և Բուսերը. Բու-  
սաց շօրբին Պետրոսն անձամբ էր առաջնոր-  
դում. Յգոստոսի 29ին կռուեցաւ թշնամու հետ,  
երկու հաղար հոգի սպանելով՝ դուքս հանեց  
նորա զօրակարգէն և իւր զօրբովը նահանջե-  
ցաւ. իւր գլխաւոր բանակը: Այս նուաճումը  
սասաիկ բորբոքեց Կարոլոսի սիրտը կամելով  
իւր վրէժը հանել՝ շտապով վազեց Բուսերու  
վրայ և այդ աճապարանքի մէջ մազ մնաց որ՝  
գերի լինէր Բուսերու ձեռքը Կաղին աւանի  
մօտ: Այսուհետեւ ոչինչ արգելքէ, դժուարու-  
թիւններէ, աչ չըկրելով՝ նա սնդադար առաջ  
զնալով, վերջապէս հասաւ Սմօլինսկ քաղաքը,  
որ այն ժամանակները Բուսաստանի և Արհա-  
տանի մէջ տեղը սահմանակից քաղաք էր: Այս  
տեղ ևս ունայն սպասեց Լովէնհաուպտին և  
համբերութիւնը բոլորովին կորսնելով՝ ճանա-  
պարհը գէպի Աւքուայնա ծռեց և այդպիսի խո-  
տորնակի գործողութեան սպատճառը այն էր, որ  
Մազէփան կարծելով թէ վաղ կամ անագան նո-  
րա դաւաճանութիւնը պիտի յայտնուէր օրինա-  
ւոր Արքային, և սարսափելով նորա բարկու-  
թենիցը, իւր մօտ էր հրաւիրել Կարոլոսին, խոս-  
տանալով նորան, որ ինքը և իւր հպատակ զա-

զախները իսկոյն կըմիանան նորա զօրքի հետ,  
և բացի դորանից, նորա մօտ կըգտնեն շատ  
սպաշտք հացի և ուրիշ կերակրեղինի, որին  
չափազանց կարօտ էր կարոլոսի զօրքը:

Խակ Պետրոսը արթուն աչքով դարանում էր  
Լովենհառուպտին և չէր կամում թոյլ տալ, ո՞՛  
նա իւր թագաւորի (Կարոլոսի) զօրքի հետ միա-  
նար: Վէսնօյ գեղի մօտ յարձակուեցաւ Լովեն-  
հառուպտի զօրքի վրայ, ջարդեց և ոչնչացուց  
բոլորովին, խլեց նորա հարուստ բեռնալի սայ-  
լերը և բոլոր ուաղմամթերքը, այնալէս որ՝ Շը-  
վեղների զօրավարը իւր բաղմամարդ զօրաբա-  
ժինից միայն վեց հազար հոգի ամենաթշուառ  
վիճակի հասուցած, կարողացաւ ներկայացնել  
կարոլոսին, որի բոլոր յոյսը և ակնկալու թիւնը  
նորա վրայ էր: Վէսնօյի մօտ կատարուած յաղ-  
թութիւնը Պետրոսը անուանեց ՅՄայր Պօլոս-  
վեան յաղթութեան»:

Միւս օգնական զօրքը, որ կարոլոսը թո-  
ղել էր Լիֆլեանդիու մէջ, նոյն իսկ աղետալի  
վիճակին հանդիպեցաւ. Ռուսաց զօրավարները  
հետևելով Պետրոսի պատուիրին, մասն մասն  
ջարդելով՝ բոլորովին խորտակեցին, ցրուեցին:

Այս կերակրով բնաջինջ անելով կարոլոսի  
օգնական զօրքերը, Պետրոսը որոշեց ձգել (քա-  
շել) նորան իւր աշխարհի ներալ և մի մեծ և

վճռական պատերազմումն վերջին օրհասական հարուածը հասցնել նորա զօրքին. այնուհետեւ Պետրոսն ամենեին երկիւղ չեր կրում իւր ախոյանիցն, նաև մանաւանդ, որ Կարոլոսը բոլորովին յոյսը կորարել էր Սուլթանին Ռուսերու հետ կռուեցնելու. իսկ Մաղեփափ խոստացած սգնականութիւնը ունայն բան էր: Երբ որ Շվեդացոց թագաւորը մտաւ Ուրբայնա, Մաղեփան ըրտարաւ նորա հանդէս փոքր-Ռուսսիոյ բոլոր զօրքը, ինչպէս որ մեծ մեծ խոստացել էր, այլ բռնադատելով կանգնեցուց Կարոլոսի զրօշակների տակ մի քանի հարիւր զաղախներ: Այն ժամանակ ուխտագրուժ հէթման Մաղեփափ իշխանութիւնը փոքր-Ռուսսիու վրայից բոլորովին անհետացաւ, նորա Բաթուրին մայրաքաղաքը նուաճեց Մենչիկովը և Մաղեփափ փոխարեն հէթման նստեցուց, Պետրոսի հրամանով, Պօլումոթօքին:

Հազար ու մեկ տառապանք կրելով թէ<sup>1</sup> սովից, թէ եղանակի խստութենից և թէ գժուարանց ճանապարհների խստութենից, վերջապէս Կարոլոսը իւր զօրքը գումարեց մի փոքր քաղաքի, անունը Պօլուավա, չորս կողմը, որ փոքր ժամանակ առաջ Պետրոսը շրջահայեցողութեամբ հրամայել էր ամրացնել և պահպանել չորեքհազարեայ բերդապահ զօրքին, քաջ Կէլին դնդապետի առաջնորդութեան տակ: Կէլինը լիա-

պէս արդարացուց իւր արքայի վստահութիւնը՝  
արիաբար պաշտպանեց քաղաքը Շվեդացիների  
պաշարմունքից և յարձակմունքից, որ տևեց ա-  
ւելի քան թէ երկու ամիս։ Ամեն կողմից պա-  
շարուած թշնամիներից, վերոյիշեալ ամրոցա-  
պետ Կէլինը ոչինչ հնար չուներ իւր զօրքի կրած  
տառապանքը Պետրոսին յայտնելու, կամ թէ՝  
գլխաւոր բանակից մի լուր ստանալու, բայց ոչ  
սովը և ոչ թշնամու արձակած մահարեր ռումբքը  
կարողացան խախտել նորա անընկճելի արիու-  
թիւնը. վերջապէս Յունիսի եին Ռուաց գլխա-  
ւոր բանակից մի դատարկ ռումբ և նորա մէջ  
դրած մի ծանուցագիր ձգեցին քաղաք, որով  
պաշարուածներն իմացան, որ Արքան իւր զօր-  
քով Պօլտավաի մօտ է և շուտով վերջ պիտի  
լինի նոցա կրած տանջանքին։

Ո՛չ Տեռու պաշարող թշնամիներու բանա-  
կից իւր զօրաբաժինով կանգնած էր Մենշիկօվը,  
որ խուսափելով մի վճռական պատերազմից,  
անդադար վրդովում էր նոցա յաճախ յարձակ-  
մունքով, որով բերդի մէջ պաշարուած Ռու-  
սերը քաջալերվում էին. մի անգամ Մենշիկօվը  
կարողացաւ նաև, խարելով թշնամուն, Պօլտա-  
վա մոցնել քանի մի հարիւր առոյգ զինուոր-  
ներ և շատ կերակրեղինի պաշար։ Երբ որ Շե-  
րեմետեվը և Արքան իւրեանց ձեռքերի տակ  
գտնուած զօրքովը մօտեցան թշնամու բանա-


կին՝ Ռուսերը արդէն որոշեցին տալ Շվեդներին վերջին և վճռական պատերազմը՝ Կարոլսն և անհամբերութեամբ մնում էր այդ բոպէին, ըստ որում անգործութիւնը և անորոշ վիճակը սկըսել էր ձանձրացնելու նորան: Յունիսի 20ին Ռուսաց գլխաւոր բանակը անցաւ Վոոսկլա գետը, և նոյն ամսու 27ին կատարուեցաւ մեծ պատետերազմը Պօլտավաի սպարսպի տակ:

Այն օրուայ պատերազմի բոլոր շարժմունքը կատարուեցաւ Պետրոսի կառավարութեամբ և Հրամանով: Կարոլսը փոքր ինչ ժամանակ առաջ վերաւորուած ունէր ոտքը, չըկարողացաւ ձի հեծնելու, ստիպուած էր պատգարակի մ.ջ նստած՝ իւր զօրքի շարքերի առջեովն անցնել և խրախուսել նոցա: Երբ որ երկուստեք ևս պատրաստուեցան վերջին, վճռական և օրհասական կռուին, առաւօտու ժամը 9ին կատաղարար յարձակուեցան իրար վերայ: Շերեմետեվ սպարապետը, Խլան Մենշիկովը և Բօուր զօրապետը այն օրը խրեանց հիասքանչ քաջութիւնը և պատերազմական հանձարը ցոյց տուին: Պետրոս Արքան ևս անձամբ հանդիսանում էր, ուր և պէտք է նորա ներկայութիւնը և պատերազմը միայն այն ժամանակ վերջացաւ, երբ Շվեդները խսպառ յաղթուեցան: Թշնամու կողմից սպանուեցան իննը հազար հոգի: Առէնշիլդ սպարապետը, Պիսկը կոմսը, երկու հարիւր ըս-


սպայք և երեք հազար զինուորք կալանաւու-  
րուեցան։ Շվեդի հարուստ բանակը, բազմաթիւ  
ռազմամիջերքը, թնդանօթները և այլ զէնքերն  
ու բոլոր դանձը ընկառ Ռուսաց ձեռքը։ Կարո-  
ւուր և Մաղէփան հապճեալ վախան և ազա-  
տուեցան գերութենից՝ պատսպարուելով Թուրքի  
աշխարհը :

Այսպէս վերջացաւ Պօլտավեան պատե-  
րազմը, որ մեծ աղջեցութիւն ունեցաւ ոչ միայն  
Ռուսաստանի և Շվեդիոյ, այլ և բոլոր Եւրո-  
պիոյ վերայ :

---



Ծվեղներու վերսոյ կատարած յաղթութիւնքը և աշխարհա-  
կալութիւնքը: — Տաճկաստանի անյանու արշաւանքը: — Կոր ճանա-  
պարհորդութիւն Եւրոպիոյ մէջ: — Ծվեղներու հետ կատարած  
հաշտութիւնը: — Պետրոսի կայսերական պատուանուն ստանալը:



Ծվեղներու վերայ կատարած յաղթութիւնքը և աշխարհա-  
կալութիւնքը : — Տաճկաստանի անյանող արշաւանքը : — Սոր ճանա-  
պարհորդութիւն Եւրոպիոյ մէջ : — Ծվեղներու հետ կատարած  
հաշտութիւնը : — Պետրոսի Կայսերական պատուանուն ստանալը :

 օլտավախ պատերազմը վերջանալից  
յետոյ՝ Պետրոս Արքան ուրախանա-  
լով գրեց իւր վաստակակիցներից մինին այս-  
պէս . , Աստուծոյ օգնութենով , այժմ բոլորո-  
,, վին դրած է Պետերբուրգի հիմնաքարը “ : Այս  
խօսքերով նա կամենում էր իմաց անել , որ  
Նվերիայից Խլած և նուածած երկիրները այսու-  
հետև Ռուսերի անձողոպրելի սեպհականու-  
թիւնն է :

Պիօլտավախ յաղթութենից յետոյ մի դիւրին  
բան էր Պետրոսի համար ստիպել Նվեղներին ,  
որ Ռուսերու համար մի օգտաւէտ հաշտութիւն

կատարէին, և Պետրոսն իւր բոլոր գործունէութիւնը թափեց, որ այդ նպատակին համնէ:

Այդ վախճանին, Արքայի հրամանաւ, զօրաբաժիններից մինը, Շերեմետեվին յանձնած, Պօլտավաի պատերազմի դաշտից դէպուղիղ՝ գնաց Լիֆլեանդիա, միւս զօրաբաժինը, Ապրաքսինի առաջնորդութեամբ, Պետերբուրգից դիմեցդէպի Կարելիա. իսկ Մենչիկով սպարապետը իւր հեծելազօրը առաջ գնաց Լեհաստան: Այս կարգադրութիւնները կատարելից յետոյ, Արքան Կիեվի վրայով Տօրուն գնաց, ուր ուրախութեամբ նորան ընդառաջ եկառ գահընկեց Աւգուստ թագաւորը: Նորից հաստատելով նորան Լեհաստանի գահի վերայ, Պետրոսը գնաց դէպի իւր գլխաւոր բանակը, որ կար Ռիգաի մօտ, բայց որովհետև ժամանակը ձախողակ էր, պաշարումնը յետաձգեց մինչի գտլ գարունը, միայն Շերեմետեվին եօթն-հաղարեայ զօրաբաժինյանձնելով՝ պատուիրեց, որ արթուն պահպանողութիւն անէր թշնամու վրայ: Եղի որ վերագարձաւ Պետերբուրգ՝ Պետրոսը հրամայեց, 'ի յիշատակ Պօլտավեան յաղթութեանը, կառուցանել եկեղեցի յանուն Ս. Սամօնին, և ասկա գնաց և հանդիսով մտաւ Մոսկուա, ինչպէս յաղթող Կարուս 12րդին:

Պօլտավեան յաղթութենից յետոյ՝ երկրորդ անգամ վերանորոգուեցաւ Հիւսիսային գաշնակ-

ցութիւնը Ռուսաստանի, Դանիու և Աբհաս-  
տանի մէջ, փոքր ինչ ժամանակից յետոյ Պրուս-  
սիոյ թագաւորն ևս մասնակից եղաւ նորան  
այն յուսով, որ իւր կալուածներու վրայ աւե-  
լացնէր Շվեդիոյ Պօմերանիան:

Այն կարձատե միջոցը, որ Պետրոսը անցուց  
Մոսկուաի մէջ, գործ զրաւ իւր տէրութեան  
ներքին բարեկարգութեան համար. մանաւանդ  
յարաբերութեամբ զօրական և ելևմտից. նմա-  
նապէս ներկայ գտնուեցաւ ժողովրդի զքօսանք-  
ներին, ուր Պետրոս ՚ի բոլոր սրտէ մասնակից  
էր լինում, ամենելին աչքէ չըձգելով իւր ծան-  
րակշխո զքաղմունքը: Այսպէս անցաւ նորա հա-  
մար երջանիկ 1709 տարին:

Հետևեալ տարու սկզբանը, ոյսինքն՝  
Մարտ ամսու մէջ, Ասլրակսին ծովապետը մօ-  
տեցաւ Վիբորգ բերդին, չորս կողմից պատեց  
պաշարեց զօրքով, բայց նուաճել չըկարողացաւ,  
ովատճառ որ՝ չունէր ձեռքի տակ պաշարման  
հարկաւոր միջոցքը, ևս և նորա զօրքը սաստիկ  
տառապանքի մէջ էր զանազան կարօտութենից:  
Այս լուրը լսելով Արքան՝ անհնարին դժուա-  
րութիւնկը, անհամար արգելքներ յաղթելով,  
Մայիս ամսուն եկաւ հասաւ Ասլրակսինին օգ-  
նութեան, և Յունիսի 13ին, նեղը ձգելով պա-  
շարուածներին, ստիպեց ընդունել իւր առաջ-  
արկած պայմանները և տիրեց բերդին: Յետոյ

գնաց Պետերբուրգ, ուր կատարեց իւր եղբօր գստեր Աննայի մատանեփոխութեան հանդէսը Կուրլեանդիու դքսի՝ Փրիդրիկոս Վիլհելմի հետ։ Գրեթէ նոյն միջոցին Շերեմետեվլը նուածեց Ռիգան. յետոյ գրաւելով Դինամիւնդան, Պէռնօվան, Կեկսօլմը, Արէնարուրդը և Էզէլ կղզին, և վերջապէս նուածելով Սեպտեմբերի 8ին Ռէվէլքաղաքը՝ վերջ գրաւ կատարեալ յաղթութեան Լիֆլեանդիուն, Էստլեանդիուն և Կարելիա գտաւոին. այսպէս՝ Պետրոսի դիտաւորութիւնը, որ է՝ իւր իշխանութիւնը բալտիկ ծովու ափերուն հաստատելու՝ լիապէս կատարուեցաւ։

Մինչդեռ գործերն այսպիսի վիճակի մէջ էին, Կարոլոսը գնաց Թուրքի Սուլթանի մօտ, և մեծամեծ խոստմունքներով կարողացաւ նորան համոզելու, որ Ռուսաց հետ կռած հաշտութեան դաշլնքը պատառէ. և նորա յուսալի խոստմունքով հրապուրուած Սուլթանը չնչին առիթներ առաջ բերելով, 1710ի Նոյեմբերի 20ին հրապարակաւ յայտնեց Ստամբուլումն, որ Ռուսերուն պատերազմ է յայտնել, և նոյն ժամայն հրամայեց իւր մեծ վէզիրին, որ բազմամբուխ զօրքով, որոյ թիւը հասնում էր մինչև երկու հարիւր յիսուն հազար հոգի, խաղաց գնայ գէպի Դունայի ափերը։

Հատ տրտմեցաւ Պետրոսը, երբ որ լսաւ

Թուրքերու այսպիսի թշնամական յայտարարութեան լուրը. բայց հնազանդելով ստիպողական հանգամանքին, և որպէս զի պատերազմի ելքը առաւելյաջողակ լինէր՝ որոշեց որ ինքը կ'առաջնորդէ Ռուսաց զօրքին (որ բաղկացած էր քառասուն հազար զինուորներէ) մինչև Թուրքաստանի սահմանագլուխը և պատուիրեց Մենշիկովին և Ապրակսինին, որ իւր բացակայութեան միջոցին պահպանէին իւր երկիրները և նուաճած գաւառները թշնամիներից, որոնք կարող էին ասպատակել Ռուսաստանը հիւսիսային և արևելեան-հարաւի կողմերից. իսկ Սկօրօպատսկի հեթանին ապսպարեց, որ արժուն աչքով պահպանէր Ռուսաստանը Թաթարների յարձակմունքից :

Պետրոսը յոյս չունէր, որ չուտով յետ կըդառնար այդ արշաւանքից. ուստի տէրութեան գործերը կառավարելու համար նշանակեց Կառավարիչ-ծերակոյտը, շնորհելով նորան վերնագոյն իշխանութիւն։ Նմանապէս այնժամանակին, կամելով Եկատարինէի, որի հետ ծածկաբար ամուսնացած էր տակաւին 1707ին, հասուցած մեծամեծ երախտիքն վարձատրելու, հրապարակաւ ծանոյց իւր ամուսինը լինելը, ամուսնութեան մեծահանդէս ծէսը յետաձգելով մինչև արշաւանքի վերջը։ Այսպէս տնօրինելով զօրաց և աշխարհի ներքին կառավարութիւնը՝

Պետրոսը իւր ամուսնու հետ Մարտի նին դուրս  
գնաց քաղաքէն իւր զօրքի ետևից, որ մի քանի  
օրով առաջ արդէն ճանապարհ էր ընկել: Հաղիւ  
թէ մինչև կուցք էր հասել՝ յանկարծ Արքան  
մերձ՝ ի մահ տկարացաւ, և միայն արթուն հո-  
գացողով թեամբ Եկատարինէ դշխոյին կազդուր-  
ւեցաւ նորա առողջութիւնը կուցքից զնաց  
Պետրոսը Եառօսլավ քաղաք, ուր նախընթաց  
արշաւանքի մասին բանագնացով թիւն անելու  
համար եկել էին Աւգուստ թագաւորը և Վե-  
հաստանի հասարակապետով թեան երեսփոխան-  
քը, Վերջապէս, Յունիսի 15:ին Բօրիսթէն (Դը-  
նեստր) գետի մօտ Պետրոսը իւր զօրքի գլուխը  
անցած՝ ճանապարհին շատնեղով թիւններ կրելով  
թէ տօթագին եղանակից և թէ կերակրոյ պա-  
շարի պակասով թենից հասաւ մինչ Պրութ գետը:  
Մօլդավիու և Վալաքիու Գոսպօղարները (իշ-  
խանք), որոնք երգուել էին իրենց հպատակու-  
թիւնը և հաւատարմութիւնը Ռուսին՝ խոստա-  
ցել էին Պետրոսին, նորա ամեն կարիքը կերա-  
կրեղինի մասին լցնելու, և Պետրոս պինդ յու-  
սալով նոցա խոստմունքի վրայ և խարուելով՝  
այդականի անձուկ վիճակի մէջ ընկաւ իւր բոլոր  
զօրքով. այդքանով չըվերջացաւ նորա թշուա-  
ռութիւնը. յանկարծ լսաւ նա, որ Թուրքերը,  
որոնց զօրքը հնգապատիկ բազմաթիւ էին, չորս  
ողմից պատել էին Պետրոսին և նորա զօրքը:

Աղատութեան յօյս չքկար և ոչ նահանջելու կամ  
կռուելու կար հնար : Այս աղէտալի վիճակի  
մէջ գտնուելով՝ պատերազմական ատեան կազ-  
մեց, որի մէջ միաբերան վճռեցին՝ կամ՝ պատա-  
ռելով թշնամու ստուար զօրակարգերը անցնել  
և կամ տեղն՝ ի տեղ մեռնել : Երբ որ Պետրոսը  
այս վճիռը հրապարակաւ յայտնեց զօրքին և  
խստութեամբ պահանջեց, որ իւր կամքը ըս-  
տուգապէս կատարուէր, փակուեցաւ իւր վրանի  
մէջ և ամենուն արգելեց, որ հրաման չունե-  
նան իւր մօտ գալու մինչև միւս առաւօտ, երբ  
պիտի կատարուէր վերոյիշեալ վճիռը պատե-  
րազմական ատենին : Եկատարինէն տեսաւ, որ  
եթէ այդ վճիռը կատարուէր, բոլոր զօրքը պի-  
տի կորչէր և Ծուսասանը մեծ վտանգի մէջ  
պիտի ընկնէր. ուստի մի բարեբաստիկ խոր-  
հուրդ խորհեցաւ իւր մէջ՝ որպէս և իցէ հնար-  
քով հաշտուել թուրքերի հետ, և այդ կերպով  
հեռացնել վերահաս վտանգը : Ոչ ոք զօրավար-  
ներից յանդղութիւն չառաւ վրան՝ այդ խոր-  
հուրդը Արքային յայտնելու : Այն ժամանակ Ե-  
կատարինէն անձամբ գնաց իւր Արքոյ ամու-  
սինի բանակը և աղաչանկով համոզեց, որ  
իւր առաջարկութեանը համածայնի : Մի և  
նոյն ժամանակ որքան որ հետը թանգագին ակն  
ու մարգարիտ և ուրիշ զարդեր ունէր՝ բոլորը  
մի արկղիկի մէջ զրած, պարզ ուղղարկեց մէծ

վէղիրին, Միւս օր առաւօտը, Պետրոսը դեռ ևս  
չիմանալով իւր ամուսնու ծածուկ կարգադրու-  
թիւնքը, արդէն պատրաստ էր իւր վտանգաւոր  
ձեռնարկութիւնքը կատարելու, այսինքն՝ իւր  
զօրքով պատառել Թուրքերու անթիւ և ստուար  
զօրակարգերը՝ անցնել. յանկարծ վէղիրը աւե-  
տարերի ձեռքով ուղարկեց լուրը թէ յօժար է  
հաշտուելու. և այս հանձարեղ հնարքով ազա-  
տուած Ռուսերը, շտապով գնացին իւրեւանց  
երկիրը, և Ռուսաստանը ազատուեցաւ անձո-  
ղոպրելի կորուստէն : Եկատարինէի այսպիսի  
անմահ երախտիքը մեծապէս գնահատեց Պետ-  
րոս Արքան:

Աւելրդ չենք համարում այստեղ առաջ  
բերել յիշատակի արժանի հրովարակը Պետ-  
րոսին, որ նա գրել էր Կառավարիչ-Ծերակու-  
տին այն օրհասական րոպէին, երբ գտնւում էր  
Պրութ գետի ափին: Կախատեսանելով իւր գե-  
րութիւնը կամ մահը առաջեկայ սկաներազմի  
մէջ՝ այսպէս գրեց Արքան Ծերակուտին.

### Տեարք Ծերակոյտ,

Յայտնում եմ ձեզ, որ ես բոլոր զօրքով,  
առանց մեր յանցանքին կամ սխալին, բայց միայն  
ստացած սուտ լուրերու ազագաւ չորեքպատիկ

Հզօր Թուբքի դօրգքը այնպէս պատած եմ, որ կերակրոյ պաշար ստանալուամեն ճանապարհները կտրուած են, և ես առանց Աստուծոյ առանձին օդնութեանը՝ ոչ այլինչ կարող եմ նախատեսանել, եթէ ոչ կատարելապէս յաղթուել կամ գերի ընկնել Թուբքի ձեռքը: Եթէ այս վերջինը կատարուի, այնժամանակ դուք չի պիտի ինձ համարէք ձեր Արքուն կամ Տէրը, և ոչինչ պիտի կատարէք, որ կըպահանջեն ձեզանից, թէ և լինէր այդ իմ սեփական ձեռքով գրած հրամանովն, մինչև որ ես ինքս անձամբ չերեկիմ ձեր մեջ. բայց եթէ ես մեռնիմ և դուք իմ մահուան մասին ստոյգ տեղեկութիւն ստանաք՝ այնժամանակ ձեր մէջից ըլետրեցէք ինձ արժանի ժառանգ:

«ՊԵՏՐՈՍ»

Այստեղ կատարուած հաշտութեան գլխաւոր պայմանները այսպէս էին. Պետրոսը պարտաւոր էր յետ դարձնել Տաճիկներուն երբեմն նուաճած Ազովը և նորա շրջակայ երկիրները. Հիմնից քանդել Թայղանը (Թագանրոգ), Կամեննը. Չաթօնը և ուրիշ բերդեր, որ Ռուսերը շինել էին դնեապը և դօն գետերու ափին. և վերջապէս Ահաստանի գործերու մէջ ըլխառնուիլ իսկ կարոլոս 12րդ ին, որ միակ պատճառ և

գրգուիչ էր այս պատերազմին, թոյլ տալ ան-  
խափան իւր երկիրը երթալու:

Երբ որ Կարոլոսը իմացաւ այս հաշտու-  
թեան լուրը, խկոյն եկաւ Թուրքի բանակը և  
վեզիրից խնդրեց, որ զօրք այս իրեն, խստանա-  
լով որ կը բռնէ և կը բերէ Ռուսերու Ալքային:  
,,Ապա ո՞վ կը կտավալարէ Մոսկովիան“, հեղնե-  
լով պատասխանեց վեզիրը: Կարոլոսը սաստիկ  
բարկացած վեզիրի վրայ՝ ձգեց և նորից գնաց  
Բէնդէրէ:

Այս արշաւանքի ժամանակ Պետրոսը խիստ  
վխասել էր իւր առողջութիւնը, այնպէս որ՝ Ռու-  
սաստան հասած չը հասած, խկոյն ստիպուած  
էր, առողջութիւնը կազդուրելու համար, եր-  
թալ Կարլսբադի ջերմուկը, ուր նորան ուղե-  
կից եղաւ Եկատարինէն: Կարլսբատումն թողեց  
ամուսնոյն և ինքը գնաց Գրէզդէն, յետոյ Թօր-  
հառ, ուր նորա առջև կատարուեցաւ Ալէքսէյ  
Պետրովիչ (Պետրոսի որդու) պսակը՝ Շարլոտա  
Վոլֆէնբախայլ գշխոյի հետ. խել երբ որ Պե-  
տերը բերգ եկաւ՝ մի ուրիշ պսակ կատարեց,  
այդ պսակը իւրն էր՝ Եկատարինէի հետ, որ  
ինչպէս ասացինք, Տաճկատանի արշաւանքէն  
առաջ, յայտնած էր նորա օրինաւոր ամուսինը:

1712 թուին Պետրոսը կրկին գնաց Կարլ-  
բադ և ձանփու վերայ մոսաւ Բերլին (Պրուսիայ  
մայրաքաղաքը), որ Պրուսի թագաւորի հետ

տեսնըւութիւն անէ. նմանապէս գնաց Ախտաէմ-  
րերդ՝ Ախտերի բնակարանը տեսնելու համար։  
Այստեղից Պետրոսը խր ճանապարհը դէպի Պօ-  
մերանիա գարձուց՝ նորանոր պատերազմներ կա-  
տարելու համար։

Պօլուավեան յաղթութենից յետոյ շատ ժա-  
մանակ չանցած՝ երբ որ Կարոլոսը կենում էր  
Ռուիմումը, դրացի տէրութիւնները տեսնելով  
Շվեդիոյ զօրութիւնը տկարացած նորից սկսան  
պատերազմ մզելու նորա դէմ՝ այն դիտմամբ,  
որ կարողանային յետ գարձնել երբեմն իւրեանց  
կորուսած դաւառները։ Առաջինը Գանիմարքա-  
ցիքն էն, որ սկսան յայտնապէս պատերազմե-  
լու նորա հետ, արշաւեցին Շվեդացոց երկիր-  
ները, գրաւեցին Հելլինրօրդը, Խրիստեանշտա-  
տը և ուրիշ քաղաքներ։ Բայց երկար չըտեղց  
նոցա տիրապետութիւնը նուանած երկիրների  
վրայ, պատճառ որ՝ շուտով նոցա հալածեց այն-  
տեղից Շվեդացի քաջ Շտէյնրօք զօրապետը,  
որ Շվեդական զօրքի գլուխն էր անցել։ Այդ  
զօրավարի քաջութեան վրայ յուսալով՝ Կարո-  
լոսը հրանցուել էր նորան, զօրքը առած՝ դէպո-  
ղիզ Պօմերանիու վրայ երթալու, որ այնժամա-  
նակուաց եւրոպական տէրութիւնների քաղաքա-  
կան հայեցուածքին բոլորովին հակառակ էր,  
որոնց հետ նիզակակից էր Պետրոսը։ Այս հան-  
գամանկը ստիպեց Պետրոսին ևս շտապելու դէպի

Պօմերանիա և 1711 տարուայ միջոցը բոլորովին անցաւ անընդհատ կոխներով Շտէյնբօքի զօրքի հետ, և վերջապէս այնպէս սաստիկ նեղեց նորան, որ կարող էր լիապէս յուսալ, թէ յաղթութիւնը անշուշտ իւր կողմը պիտի հակի Բայց այդ միջոցին պէտք եղաւ նորան Ա. Պետերբուրգ երթալու, զօրքը յանձնեց Մենշիկովին, որ վերջացնէր Պօմերանիու նուաճումը։ Եւ իրօք որ Մենշիկովը յաջողութեամբ աւարտեց արշաւանքը և վերոյիշեալ նուաճած գաւառները Պրուսաց ձեռքը՝ ի պահեստի տուաւ, որով սաստկապէս բորբոքեց Պետրոսի բարկութիւնը իւր վերայ։ Միայն Եկատարինէ դշխայի բարեխօսութենումն աղատուեցաւ այն արդարացի պատուհանից, որ նշանակել էր նորան Պետրոսը այդ անզդաստ գործի համար։

Ֆինլեանդիան կատարելապէս նուաճելու խոհրդավ՝ 1713ի Ապրիլ ամսու մեջ Պետրոսը բաց ծովու մ.ջ հանեց իւր նաւատորմիղը երեսուն մեծամեծ պատերազմիկ նաւերէ և երկու հարիւր ցոկանաւերէ բաղկացած և Ապրակսին ծովագետի առաջնորդութեան յանձնած, ուրինքն ևս մասնակից էր երկրորդ-ծովակալին աստիճանով։ Մայիսին Ռուսերը գրաւեցին Հելսինգֆիօրա և Քօրգօ բերդապատճեները, որ թրշնամին նոցա ձեռք մատնոց առանց դիմադարձութիւն անելու, Յգոստոս ամսու մ.ջ Արքան

ժամանակաւոր այցելութիւն արաւ իւր նորա-  
շն մայրաքաղաքին, և այդ պատճառաւ առ ժա-  
մանակ մի դադարեցաւ պատերազմի գործերը՝  
Բայց նորից և շուտով յետ դառնալով դէպի  
նաւատորմիղը, իւր զօրքը խաղացուց դէպի ֆին-  
լեանդիս Առօ քաղաքի վերայ, ուր մի հատիկ  
մարդ չէր մնացած, բոլորը փախել էին, լսելով  
Ռուսի քաջայաղթ զօրքի մօտենալը։ Պետրոսը  
նորից վերադարձաւ Պետերոսուրդ. իսկ Ապրակ-  
սինը յարատեւելով պատերազմի գործքը՝ Հոկ-  
տեմբեր ամսուն Թավասդուստի առաջն յաղ-  
թեց Շվեդներին. և այնուհետև հարաւային ֆին-  
լեանդիումը ոչ մի թշնամի չը մնաց. այժմ մնում  
էր միայն Շվեդների ծովային զօրութիւնը ոչըն-  
չացնելու և այդ կերպով Ռուսի նաւատորմղի  
տիրապետութիւնը հաստատել Բալտիկ ծովու  
ջրերու վերայ։

1714ին Փետրուար ամսու. մ.ջ Գօլիցին իշ-  
խանը սկսաւ պատերազմական գործերը՝ Վազա-  
քաղաքին տիրելով, ուր ոչնչացուց Շվեդիոյ  
վերջին ցամաքահողեան զօրութիւնը. որ բաղ-  
կացած էր տասնհազարեայ զօրքէ, Արմֆելդ զօ-  
րապետի առաջնորդութեան յանձնած։

Կոյն տարուայ Մայիս ամսուն Ռուսաց նա-  
ւատորմիղը բաղկացած պատերազմիկ նաւերէ  
ցոկանաւերէ և երկու մասն բաժանուած, նորից  
արշաւեց Շվեդիան, առաջինը Ապրակսին ծո-

վապետի առաջնորդութեան տակ դիմեց Աէվլի  
վրայ, խակ երկրորդը Պետրոս ինքը կառավարե-  
լով, տարաւ դէպի Արքու Բայց տակտւին այդ  
արշաւանքը չի սկսած, Պետրոսը Ծովապետա-  
կան-Ատենաժողովին ինդրել էր, որ գնահատե-  
լով իւր ցուցած երախտիքը՝ տային նորան փո-  
խանակ-Ծովակալի պաշտօնը: Բայց ատեանը  
մերժեց նորա իննդիքը: Այնժամանակ Պետրոսը  
ինքն իրեն հաստատ խօսր տուաւ արիւնով և  
քրտինքով արժանանալ այդ իննդրած աստիճա-  
նին: Եւ արգարեև նա շուտով գտաւ յաջողակ  
դիպուած իւր բղձին հասնելու: Թէվէլի ձանա-  
պարհի վերայ, Հանհօսուդ հրուանդանի մօտ  
Ապրակսինի նաւախումբը հանդիպեցաւ Շվե-  
դացոց նաւատորմզին, որ արդէն սկսել էր նեղի  
ձգելու Ռուսերին, երբ Ապրակսինը իննդրեց, որ  
Պետրոսը օդնութեան հասնէր: Ցոլիսի 27ին  
սկսաւ ծովային սպատերազմը, Ռուսերը բոլորո-  
վին յաղթեցին թշնամուն, ջարդեցին, հրդե-  
ցին, կործանեցին նոցա նաւատորմիզը, վեց հա-  
րիւր հոգի գերի առան, որոց մէջ էր նաև Շվե-  
դացոց Էրէնշիլդ ծովակալը: Այս յաղթու-  
թեան համար Պետրոսը ստացաւ փոխանակ-Ծո-  
վակալի աստիճանը: Շատ ժամանակ վրայ չան-  
ցած, Ռուսերը տիրեցին Ալանդեան կղզիներուն  
և վինեան ծոցումը ոչ մի հատ Շվեդաց նաւ և  
նաւաստի չի մնաց. և երբ որ Ռուսերը նուա-

Ճեցին Կարելիա գաւառի վերջին բերդաքաղաքը՝ Նէյշլոտը, այն ժամանակ Շվեդների տերապետութիւնը Փինլեանդիու վերայից բոլորովին անհետացաւ թէ ծովային և թէ ցամաքահողեան ճանապարհով : Այսքան յաղթութիւններով չըշատանալով՝ Ապրակսին ծովակալը իւր նաւատորմղից իննը ցոկանաւ ուղարկեց նոյն խել Շվեդիոյ ափերին և Աւմոք քաղաքը հրդեհելով՝ սաստիկ աչ ու սարսափանք տարածեց նորա շրջակայքումը բնակող ժողովրդի սրտի մէջ : Այսպէս՝ Փինլեանդիան բոլորովին նուաճուեցաւ, և կատարուեցաւ Պետրոս Արքայի նուիրական իղձը, որ Է տիրապետել Բալտիկ ծովին և նորա մօտ կեցած երկիրներին :

Ուշուառ Շվեդիան մի կողմից զրկուած իւր Փինլեանդիա գաւառից և միւս կողմից դրացի տէրութիւններից յաղթահարուած և անթիւ ձախողութիւններից յոզիս ասպաստան եղած, տկարացած՝ արգէն պատրաստ էր հաշտութիւն ինդրելու իւր թշնամի տէրութիւններէն՝ յանկարծ 1714 տարուայ վերջին Կարոլոսը Թուրքաստանը թողած՝ հասաւ Շտրալզունդ-միակ քաղաքը, որ Պոմերանիու մէջ մնացել էր Շվեդներու ձեռքը . . . և հաշտութեան յոյսը կործանուեցաւ :

1715 թուականի սկզբանը ուժ տէրութիւնք՝ Անգլիան, Հոլլանդիան, Գանիան, Պրուսիան,

Սաքսոնիան, Լեհաստանը, Հաննովէրը և Ռուսաստանը միացան Շվեդացոց գէմ այն խորհրդով, որ աննկուն Կարոլոսին բռնադատեն հաշտութիւն կատարելու: Դեկտեմբերի մէջ Շտուդզունդը, որ Կարոլոսը անձամբ պաշտպանումէր՝ առնուեցաւ թշնամիներէն, և Կարոլոսը ստիպուած էր թուղնել և փախչել Շվեդիա:

1716ին դաշնակից տէրութիւնները Վիսմարը (վերջին քաղաքը, որ ունէին Շվեդները Գերմանիու մէջ) սլաշարելու ժամանակ, Պ'տրոսը կամենալով վերջ դնել այս ձախողակ կոխւներուն, հրամայեց, որ Ռուսաց նաւատորմիվը դէպուդիդ Կօպէնհագէնի վրայ երթայ, որ Գանխմարքացոց հետ միասին արշաւեն Շվեդիոյ ափերը. իսկ իւր ցամաքահողեան զօրքին հրամայեց դէպի Վիսմար երթաւ՝ դաշնակիցներուն օդնութիւն հասցնելու:

Յունուարի 27ին Պետրոսը դուրս եկաւ Պետերբուրգից և ճանասլարչին աչքէ անցնելով Շվեդիայից խլած երկիրները՝ հասաւ Գանցիդ, ուր չըդադարելով քաղաքական գործերով պարագելից՝ հսնդիսով կատարեց իւր Եկատարինէ բրոջ ամուսնութիւնը Կարոլոս Կօպօլդ Մէկլէմբուրգ-Շվեդինեան դքսի հետ: Գանցիդից գնաց Պիրմօնտ, ուր երեք շաբաթ խաղաղական օրեր վայելելուց յետոյ՝ գնաց Կօպէնհագէն և

այնտեղ կամենում էր՝ ի գործ դնել իւր դիտաւորութիւնները՝ նկատմամբ Շվեդիային :

Երբ որ Կօպէնչագէն մտաւ, դաշնակից տէրութիւնները մեծ պատուով յարգեցին Պետրոսի պետերազմական հանձարը՝ միացեալ դաշնակից նաւախումբը նորա առաջնորդութեան յանձնելով : Պրուսաց օհնգերմանլեանդիաց անունով նաւի վերայ պարզուեցաւ արքայական զրոշակը և չորս դաշնակից տէրութիւնների նաւատորմիղը, այսինքն Անդլիական, Հոլլանդիուն, Դանիմարքին Ռուսաց և նոյցա վաճառականական նաւերը մտան Պետրոսի առաջնորդութեան տակը : Բայց դաշնակիցները այնպէս չէին ներգործում, ինչպէս որ ցանկանում էր Պետրոսը. մանաւանդ յաչաղկոտ Դանիան սլէապէս ստապատիր պատճառներ առաջ բերելով՝ օրէ օր յետաձգում էր արշաւանկը Շօնիու վրայ մինչև այնքան, որ յաջողակ ժամանակը անցաւ և Շվեդացիքը պարագ գտան խրեանց ծովեղերքը ամրացնելու, և այնուհետեւ արշաւանկը ոչ միայն դժուար, այլ և անհնարին էր գարձել դաշնակիցների նաւատորմղի համար : Սեպտեմբեր ամսու մէջ Պետրոսը ատեան գումարեց, ուր պիտի վճռուէր արշաւանկի խնդիրը . Ռուսերը հաստատում էին, թէ արշաւանկը պիտի յետաձգել մինչև դալ գարուն, իսկ Դանիմարքացիք միանգամայն սորա հակառակն էին ասում : Պետրոսը տեսնե-

լով նենգութիւնը և չարակամութիւնը իւր դաշնակիցներին և սաստիկ սիրտը ցաւած Գանիւ-  
մարքացիներէն, որք կարծում էին իրք թէ Պետ-  
րոսը ծածկաբար մեքենայում է Շվեդացիների  
հետ ընդդէմ Գանիմարքին, յետ կացաւ գաշ-  
նակցութենէն և հրամայեց իւր նաւատօրմղին,  
որ գէպի Ռէվէլ երթայ: Կարոլոսի խելօք և  
խորամանկ քաղաքագէտ Հէրց մինիստրը շտա-  
պեց օգուտ քաղելու բարեյաջողակ պարագա-  
ներէն, առաջարկելով նորան այնպիսի հաշտու-  
թիւն, որոյ պայմանները շատ ձեռնտու էին  
Բուսաց Արքային:

Կոպէնհագէնից գնաց Պետրոսը Մեկլէնբուրգ  
և այնտեղից, Գերմանիայի ամսու մ.ջ, գնաց  
Ամստերդամ, ուր առաջոււյ պէս նաւարանումը  
աշխատելով, յանկարծ տենդից բռնուած՝ մինչև  
1717ին Փետրուարի կէսը հիւանդ մնաց: Ե՞ր որ  
առողջացաւ, նորից խելքը միտքը տուաւ ուս-  
ման և արուեստների, առանձին մտադրութիւն  
դարձնելով Հոլլանդացոց առուտուրի վերայ, որ  
այն միջոցին լուսաւորեալ ազգերի մ.ջ ամենից  
գերազանցն էր: Այս ճանապարհորդութեան ժա-  
մանակ Եկատարինէ, դշխոն ևս ուղեկից էր նո-  
րան: Պետրոսը կամեցաւ իւր կողակցին ցոյց  
տալ այն խրճիթը, որի մ.ջ առլրում, աշխա-  
տում էր, երբ առաջին անգամ եկել էր Հոլլան-  
դիա: բայց Սամնղամ հասնելով, ի՞նչ տեսնէ.

այն խրձթի տեղ կառուցած էր մի գեղեցիկ տնակ, որ հոլլանդացիք շինել էին՝ ի յիշատակ կեցութեան մեծ Արքային Ռուսաց, որ յօգուտ իւր հայրենեացը չէր ամաչել հասարակ հիւսն լինելու :

Յետոյ՝ Հագա և Աէյդէն գնալով՝ իւր ճանապարհը գէսլի Գաղղիա դարձուց: Գաղղիացիք մեծ սիրով և անսկատմելի մեծարանքով հիւրասմիրեցին մեծահոչակ Միապետին Ռուսաց: Անտվերպէնումն Պետրոսը զննեց Յիսուսեան կարգի կրօնաւորներու (Եղուիտ) գպրորը. Կալէ՛ումն ներկայ գտնուեցաւ գաղղիական զօրքի զըրավարժքին և վերջասլէս՝ Էլոէֆ�'ումն նորան ընդառաջ գալով Տէսսէ: Մարաջաղդը՝ մեծաշուք հանգիսով տարաւ նորան Փարիզ, ուր նորա կեցութեան համար պատրաստած էր Լուվր ապարանքը: Պեղիսութիւնը, ոչինչ աւելի, քան թէ մի ժամ մընալով վերսիշեալ ապարանքի մէջ, իսկոյն փոխադրեց իւր կեցութիւնը Վիլէռուա դքսի տանը: Օրէանի դուքսը, որ Լուգովիկոս 15րդի անջափահասութեան միջոցին Գաղղիոյ կառավարիչն (ռէժման) էր՝ միւս օրը սցցելութիւն արաւ Արքային. իսկ Ասլրիլի 29ին նորա մօտ եկաւ ինքը Լուգովիկոս թագաւորը: Պետրոսը ընդ առաջ գնալով, առանց պալատական ծէսերու, գրկին մէջ առաւ փոքրիկ թագաւորին,

Համբուրեց երեսը և ասաց. , Աստուած տայ, որ  
,,ձեր մեծութիւնը ողջ առողջ մնայ և փառքով  
,,թագաւորէ: Մենք ժամանակաւ մին մինի օգ-  
,,տաւէտ կը լինինք“: Երբ Կուռակին իշխանը  
Լուղովիկոսի համար թարգմանեց այդ խօսքե-  
րը, նա իսկոյն փաթաթուեցաւ Արքայի պարա-  
նոցին ու մանկական անկեղծութեամբ և սիրով  
համբուրեց նորան:

Հետեւալ օրը Պետրոսը սկսաւ շրջելու  
փարիզի մէջ և աչքէ անցնելու նորա հաղուա-  
գիւտ և յիշողութեան արժանի շնչիքերը: Ճա-  
շեց յետոյ այցելութեան գնաց Լուղովիկոսին՝  
Տիւիլիկրի ապարանիքը, ուր մեծաշուք լնդունե-  
լութիւն ցոյց տուին նորան: Գաղղիացոց թա-  
գաւորը և նորա մարածաղդները և աւագորեարը  
ընդառաջ եկան Արքային մինչև պալատի սրա-  
հը, և կամելով հեռացնել այն պալատական  
ծէսը, որ պահանջվում էր երկուսից մինին կամ  
առջեւից կամ ետևից գոնէներս մտնելու՝ Պետ-  
րոսը առաւ մանկահասակ արքային խըր գիրկն  
և այնպէս տարաւ սանդուղքի վրայ և զրանիկ-  
ներին ասաց. „Խմ վրայ տանումեմ բովանդակ  
Գաղղիան“:

Պետրոսը ամիս ու կէս մնալով փարիզի մէջ,  
ոչինչ բան առանց մտադրութեան չըթողուց,  
ինչ որ արժանի էր տեսնելու, զննելու, սերտե-  
լու՝ բոլորը աչքէ անցուց, Ծանօթացաւ շատ

ուսումնագէտ և արշեստագէտ մարդոց, նաև  
հասարակ արշեստաւորների հետ, իբր հարիւր  
հոգի պէսալէս արուեստների հմուտ անձինք  
վարձեց և ուղարկեց Ռուսաստան։ Ինչ որ նա  
այդ կարճատև միջացումն փարիզի մէջ կատարեց,  
անհնարին է այստեղ համառօտարար ևս նկա-  
րագրելու . յիշերք միայն այն, ինչ որ առաւել  
նկատելի է։ Մայիսի ծին այց ելաւ Ինդալիդեան  
ապարանիքին, 2։ ին գնաց Պարլամենտ (աւագոր-  
եարի ժողովարանը) և 'ի յիշատակ սցցելու-  
թեան Ռուսաց Արքային՝ այդ դէաքը գրուեցաւ  
արձանագրի մէջ։ Յունիսի սկզբանը գնաց դրա-  
մահատութեան գործանոցը, և կամելալ արուես-  
տաւորների հմտութիւնը տեսնելու՝ խնդրեց որ  
իւր առաջել կտրէին մի դրամ։ արուեստա-  
գէտքը իսկոյն ոսկէ տախտակը դրին մամուլի  
տակ, սեղմացին և մատուցին Արքային մի շքա-  
դրամ, և նա հաճութեամբ տեսաւ մի կողմումը  
իւր պատկերը, որ շատ նման էր իրէն և նորա  
տակը գրուած «Պետր Ալեքսէնդրիչ Մեծ Արքայ  
Ռուսաց»։ իսկ միւս կողմումը ձևացուցած էր  
Փառքը, որ Ճախրում էր մի գետի վերայ, որ  
հոսում էր գէսլի ծով, հանդէղ արեգակին, և  
տակը գրած Վիրդիլիոս Հռովմայեցի բանա-  
ստեղծի խօսքերը „Խոր ընթացքումն նոր ոյժ է  
ստանում“։ տակումն Փարիզ (1717)

Երբ որ այց ելաւ Գաղպիական ձեմարանին,

Պետրոսը ցանկացաւ նորա անդամակիցը լինելու. Ճեմարանի ատենադպէքը, երեելի Փօնտընելը, պատասխանեց որ Ճեմարանը իւր համար մեծ փառք ու պատիւ կը համարէ Պետրոսին իւր անդամակիցը ունենալը: , Այն յաղթութիւնը, որ ձեր Արքայական Մեծութիւնը կատարեց բարբարոսութեան վրայ, ձեր ամեն յաղթութիւններից փառաւորն և սքանչելին է: , գրեց նա Պետրոսին:

Փարիզից գնաց Պետրոսը Ապա քաղաք, որոյ ջերմուկրի ջուրը գործածելով, մեծ թեթևութին գտաւ իւր տկարութեան մասին: Այնտեղից նորից գնաց Ամստերդամ, ուր կենում էր նորա ամուսինը Եկատարինէն, և տակաւին չըվերագարձած Ռուսաստան՝ ճանապարհի վրայ մտաւ Քերլին, Շվեդիոյ գործերու մասին խորհուրդ արաւ Պրուսացոց հետ և Հոկտեմբերի 1 ին հասաւ իւր մայրագաղաքը Ս.Պ. Բուրդ:

Եբբ որ հայրենիք վերագարձաւ, Պետրոսը սկսաւ միտք անելու Շվեդիոյ հետ հաշտաւթիւն կատարելու մասին. Հերց մինիստրի յորդորանքով ցանկանում էր նաև ինքը Կարոլոսը: Այդ հաշտաւթեան բանագնացութիւնքը սկսած էին տակաւին Պետրոսի Հոլլանդիա եղած միջոցին և այժմ 'ի կատար հասցնելու համար, խաղաղութրան գեսպանաժողովի (Կօնգուէս) տեղը նշանակած էր Ալանդեան կղզիները, որ Ռու-

սաստանի կողմանէ կատարեալ իշխանութենով  
զգեցած երեսի ոխաններն էին Քոիւսար և Պո-  
տերմանը. իսկ Շվեդիու կողմանէ Հէրցը և Հիւ-  
լինբուրգ կոմսը :

Հաշտութեան բանագնացութիւնը խիստ  
գանգաղ էին յառաջանում երեսփոխանների մ.ջ.  
այդ ձախողակ դէպէից օգուտ քաղելով՝ Շվե-  
դիոյ աւագորեարը, ատելով՝ Հէրց մինիսարին,  
ոչ իւրեանց հայրենիքի բարեմանութեան հա-  
մար, այլ իւրեանց խոտելի անձնական ախտերի՝  
վրէժինդրութեան և նախանձու պատճառառ  
աշխատում էին Կարոլոսին խոտորել Ռուսերու  
հետ հաշտուելուցն: Միւս կողմանէ Անդլիու,  
Դանիմարքի և Աէհաստանի թագաւորներն եր-  
կիւղ կրելով՝ որ մի գուցէ Ռուսերը և Շվեդա-  
ցիները սերտ սիրով միանան իրար հետ և այդ  
միաբանութենից իւրեանց վեաս համեր՝ ուստի  
շտապեցին իւրեանց օգնութիւնը խոստանալու  
կարոլոսին Ռուսաստանի դէմ:

Ուշ և շատ վէճեր, գժուարութիւններ և ան-  
համաձայնութիւններ յառաջ եկան, 'ի վերայ  
այդր ամենայնի հաշտութիւնը կատարուեցաւ  
Ռուսերի և Շվեդների մ.ջ., և նորա սպայման-  
ներն այսպէս էին. Կարոլոսը յետ պիտի ստա-  
նար Փինլեանդիան՝ բաց 'ի Վիրօրդ քաղաքէն.  
իսկ սարտաւոր էր Ռուսերուն տալու Կարելի-  
ան, Անդրիան, Լստեանդիան և Ամֆլեանդիան:

Պետրոսն ևս իւր կողմանէ խռատացաւ՝ Աւհաստանի գահէն գլորելու Ասգուստ Զբդին և նորա փոխարէն թագաւոր դնելու Ստանիսլաւ Աշշչինսկին՝ Ալտրանշտադի պայմանների հիման վրայ. բաց յայդմանէ յանձն առաւ միջնորդ լինելու Կարոլոսի և Պրուսաց թագաւորի մ.ջ և բարեխառն պայմաններով հաշտեցնելու նոցա. ևս և խռատացաւ նորան իւր նաւատօրմզովն և զօրքով օդնել Հաննովերեան կայսրընտրի դէմ, ևս և նոցա, որոնք կըկամենային խափան լինել Կարոլոսին յետ գարձնելու իւր կորսրած Գերմանական գաւառներն և նուաճնելու դանիական Նօրմեգիան, ինչպէս վարձ Ռուսաստանին տուած գաւառների փոխարէն:

Ոչինչ երկրայութիւն չըկայ, որ Կարոլոսը յանձնառու կըլինէր այս դաշինքը հաստատելու, և այնժամանակ գուցէ փոխանակ Շվեդիուն՝ ըստիակուած կըլինէր բոլոր Եւրոպիոյ հետ պատերազմներ մղելու . բայց մահը Կարոլոսի, որ սպանուեցաւ Նօրմեգիումն Փրիդրիխսհալքերը պաշարելու միջոցին, կործանեց Պետրոսի բոլոր յօյսերը հաշտութեան: Պետրոսը անկեղծ մտերմութեամբ վշտացաւ, երբ լսաւ Կարոլոսի մահուան գոյՃը. „Ո՞չ, եղբայր իւր Կարոլոս, ափառ քեզ՞՝, ասաց նա աչքերից արտասունքը հոսելով:

Կարոլոսի տարաժամ մահից յետոյ Շվեդիոյ

գահը նստաւ Աւլոիխա Էլօնօրա դշխոն, որ  
իսկոյն խաղաղութիւն ուղարկեց Պետրոսին,  
բայց այնպիսի պայմաններով, որ շատ ծանր  
էին Ռուսաստանի համար. թէ և Պետրոսը՝ ի  
բոլոր սրտէ ցանկանում էր օր առաջ կատարել  
Հաշտութիւնը, բայց նորա իդձը չէկատարուեցաւ  
և Հաշտութիւնը յետաձգուեցաւ:

Տեսնելով որ Խաղաղութեան բանադնացութիւնները շատ յամբ էին յա: աջանում, առանց  
մի զգալի օգտի, Պետրոսը հրամայեց Ապրակ-  
սինին, որ նաւատորմղի գլուխն անցած՝ նա-  
ւեր գէպի Շվեդիոյ ափերը: Ապրակսինը մի  
քանի քաղաք աւերելուց յետոյ, գրեթէ Ստօք-  
Տօլի (Շվեդիոյ մայրաքաղաքի) մօտ էր հասած,  
երբ թագուհին զարհուրած Ռուսաց զօրապետի  
սիրագործութիւններիցն՝ յօժարեցաւ. Պետրոսի  
ուղարկած Խաղաղութեան դաշնիքն ընդունե-  
լու, բայց շուտով դարձեալ հրաժարուեցաւ նո-  
րանից: Եղանակի անյաջողակ լինելու պատճա-  
ռաւ՝ անհնարին էր պատերազմի գործերը յա-  
րատեելու. ուստի հրաման եկաւ, որ Ռուսաց  
նաւատորմիզը յետ զանար և Ռէվէլի նաւահան-  
գըստումն անցուցանէր ձմերնային ժամանակը:

1720ի Յունուարի 1ին Շվեդիոյ դահը ամ-  
րաբձաւ Էլօնօրա թագուհիւյ ամուսինը Փրիդ-  
րիխը, որ նոյնպէս Խաղաղութեան դաշնիք ա-  
ռաջարկեց Պետրոսին: Երկուստեք դեսպանները

Ժաղովուեցան Նիշտատղի մէջ . բայց ՀՅամա-  
ձայնեցան իրար առաջարկած դաշինքը ընդու-  
նելու :

Բայց Գօլիցին իշխանը , որ այնժամանակ  
ծովագետ էր ընտրած , նկատելով Շվեդիոյ կա-  
ռավարիչների խորամանկ ընթացքը , ըսկամեցաւ  
իւր նաւատորմիզը վտանգի մէջ ժողնելու , պատ-  
ճառ որ՝ Շվեդները և Անգլիացիները ծածուկ  
միաւորուել էին այն խորհրդով , որ իւրեանց  
միացած նաւատորմիզովն յարձակմունք անէին  
Փինլեանդիոյ վերայ . այս հանգամանքը իմա-  
նալով իշխան Գօլիցինը , երբ տեսաւ , թէ Շվեդի  
նաւատորմիզը , վերը յիշած պատճառաւ , հեռա-  
ցել էր Ռէվէլիցն , Մէնդդէն նաւապետին Հրա-  
մայեց , մի քանի նաւ առած , մօտենալ Շվեդիու  
ափերին : Մէնդդէնը արշաւեց Շվեդիու ափերը ,  
Հրդեհեց Հին և նոր Աւմեօն և նոյցա շրջակացքը  
և այնպիսի պանիքական երկիւղ տարածեց ժըշ-  
նամիներու մէջ , որ նորա ստիպուած էին յետ  
կոչել Փինլեանդիակայ խրեանց նաւատորմիզը :  
Այդ միջոցին ինքը Գօլիցինը յարձակուեցաւ  
Գրեգոր կղզիի վրայ , նորա մօտ կանգնած Շվե-  
դի նաւախումբը կալանաւորեց և յաղթանակով  
ուղարկեց գէալի Պետերբուրգ :

Այս աղէաներից , թշուառութիւններից յե-  
տոյ՝ Շվեդիան խալառ աւերտւած , և իւր նախ-  
կին անձնապատճենութիւնը ժողած , խոնարհա-

բար սկսաւ հաշտութեան հնարներ որոնելու Թուսաց հետ. դաշինքի մասին բանագնացութիւն անելու համար՝ գեսպանները նորից գումարուեցան Նիշտաղտի մէջ և Օգոստոսի ՅՈՒՆ կազմուեցաւ և հաստատուեցաւ հաշտութիւնը, որով Թուսատանը առմիշտ սահացաւ Արքլեանդիան, Լստլեանդիան, Խնդրիան, Կարելիու մի մասը Կէկսօլմ քաղաքի հետ և Վիթօբդ քաղաքը Փինլեանդիաից. յետ գարձուց Շվեդներուն Փինլեանդիան և խոստացաւ երկու միլլիոն էֆիմոլ (արծաթէ դաշեկան) տալու փոխանակ Արքլեանդիուն:

Վինչզեռ գեսպանները յառաջ Էին տանում Հաշտութեան սպայմանները, Պետրոսը մնալով Նիշտատղից մի նոր և ուրախալի աւետիքի և անդուլ, անխոնջ խնամելով իւր աշխարհը և Հպատակները՝ կամեցաւ անձամբ երթալ Վիթօբդ և գիտել իւր գրաւած նոր երկիրերու սահմանքը: Երբ որ նա մօտենում էր իւր Գուրգի ամարանիբին, նորան Հանդիպեցաւ Օքրէզքօվ սուրհանդակը, որ Պետերը ուրգ աճապարելով՝ տանում էր Հաշտութեան լուրը և աւետիքը: Պետրոսը կամեցաւ, որ ինքը յայտնէր իւր Հպատակներին այս ցանկալի անցքը. ուստի ժոյլ չըտուաւ, որ Օքրէզքօվը իրանից առաջ երթար մայրաքաղաք: Այն գիշերը անցնելով Գուրգի ամարանիբումն, միւս աւաւօտ գնաց

մայրաքաղաք, և իւր բերանով յայտնեց Պետեր-  
բուրգի բնակիչներին հաշտութեան ցանկալի  
լուրը՝ քսան և երեք տարի անդուլ և տա-  
ժանական սատերազմներից, արիւնահեղութենից  
յետոյ կատարուած:


Երբ որ գոհացողական մաղթանքը կատա-  
րուեցաւ Ա. Երրորդութեան մայր-եկեղեցու մէջ՝  
աւագորեարը մասոյց նորմն Ծովակալի աստի-  
ճանի վկայագիրը, ինչպէս նշան նորա կատա-  
րած շահատակութիւններին Շվեդական արշա-  
ւանքի մէջ :

Հոկտեմբերի 22ին Պետերբուրգի և բոլոր  
Ռուսաստանի մէջ կատարուեցաւ Կիշտատդի  
հաշտութեան տօնախմբութիւնը. և բերկրացած  
Ռուսաստանը, բոլոր Ռուսերու անունով ծերա-  
կոյսը և Սիւնհոգուր որոշեցին, որ ինդքեն  
Արքային այսպէս.

„Որ նա բարեհաջախ ընդունելու «Հօր հայ-  
, թենեաց և Կայսր ամենայն Ռուսաց Պետրոս  
,,Առաջին» պատուանունը՝ ի տրիտուր նորա մէծ  
,,ողորմութեանը և հայրական խնամատարու-  
,,թեանը և ջանքին, որ նա ցոյց էր տուել իւր  
,,Հայրենիքին՝ յընթացս անցած պատերազմներին  
,,Շվեդիոյ հետու:

Հ Տ Ա Գ Ե Բ Ո Ր Դ Ի Գ Լ Ո Ւ Խ

զիարսկաստանի արշաւանքը : — Նստակատիքը Ռուսաց նուա-  
տորմղին : — Ալէքսէյ արքայորդին : — Պիետրոսի հիւանդութիւնը և  
վախճաներ :



ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԼՈՒԽ

Պարսկաստանի արշաւանքը : — Նաւակաստիքը Ռուսաց նաւասորմղին : — Ալեքսակյ արքայորդին : — Պետրոսի հիւանդութիւնը և վախճանը :



ուսաց աշխարհը, որ քսան և հինգ  
տարի առաջ ոչինչ յարակցոսթիւն  
չունէր Եւրոպայի հետ, Պետրոսի Կայսերական  
պատուանուն ընդունելով՝ յանկարծ դարձաւ մի  
հզօր տէրութիւն, ոչ միայն Հիւսիսային երկիր-  
ներումն, այլև բոլոր աշխարհի մէջ : Լուսաւո-  
րութեան ստուերը, որ հաղիւ սկսել էր տեղ  
տեղ և այն աչ ու սարսափով մտնելու Բուսաս-  
տանի մէջ, Մեծին Պետրոսի գահակալութեան  
օրից սկսաւ ազատ մուտք ունենալու ամեն տեղ,  
հսկայագայլ առաջ ընթանալու, աճելու, ծաղ-  
կելու և Պետրոսի քսան-հինգ տարուայ հոգա-

տարութենովն, առաստ արգասիք բերելու, և այդ  
կերպով վարձատրելու վեհ Այգորդի քրտնա-  
ջան վաստակները: Այնուհետև ամենայն ինչ  
կերպարանափոխուեցաւ, և այն անմահ միտքը,  
որ մանուկ-Արքայի սրտի մէջ ծնէլ էր, քանի որ  
նա չէր ամբարձած իւր ժառանգական դահը,  
այն միտքը. կրկնում եմ, որ Է՝ վերաձևել Ռու-  
սաստանը և մօտեցնել նորան լուսաւորեալ Եւ-  
րոպային, Աստուծոյ օգնութեամբ և Պետրոսի  
հզօր և անյողզողդ կամքովն կատարուեցաւ,  
ինչպէս օրինակ դարերուն և ինչպէս խրատ աղ-  
գերուն :

Աիշտատդի հաշտութենից յետոյ, երբ որ  
իշխանութիւնը ամենեին հաստատել էր Բալ-  
տիկ ծովու վերայ, Պետրոս Կայսրը ցանկանցաւ  
Ռուսաստանի տիրապետութիւնը կասպից ծո-  
վու վերայ ևս տարածել այն դիտաւորութե-  
նով, որ Ռուսաց առևտրական յարաբերութիւն-  
քը ապահովուած լինէին ճոխ և փարթամ Արև-  
ելեան աշխարհների մէջ:

Քանի մի ժամանակ դորանից առաջ Պարս-  
կաստանը, Հուսէյն Շահի կառավարութեան օ-  
րերու մն, մեծ վտանգի մէջ էր ներքին երկպա-  
ռակութիւններից և աղդի աղդի վրդովմունք-  
ներից: Մի մասն ժողովրդի ապատամբուած իւր  
օրինաւոր թագաւորի (շահի) դէմ, ասպատակեց  
աւերեց Շիրուանի գաւառը, պաշարեց և առաւ

Շամախի քաղաքը և նոցա ձեռքով սպանած մարդոց մէջ էին երեք հարիւր հոգի ոռւս վաճառականք, որոցմէ չորս միլիոն ոռուբլի տալրանք (վաճառք) ևս կողոպտել էին : Այս աղէտալի լուրը լսելով՝ Ռուսաց Կայսրը սպահանջեց, որ Շահը վարձատրեր ոռւսերու կրած վնասը. և երբ որ նա չը յօժարեցաւ Մեծին Պետրոսի արդարացի սպահանջմունքը կատարելու, Շվեդական պատերազմը վերջանալից յետոյ՝ Պարսկաստանին յայտնունցաւ պատերազմ :

1723ի Մայիսի 15ին պատերազմի ամեն պատրաստութիւնները կատարած և նորաշչն նաւերով նաւատորմիզը հզօրայրած՝ Մեծն Պ'տրոսը իւր ամուսինի և բազմաթիւ ուղեկիցների հետ թողուց Մոսկուան և Յունիսի 15ին հասաւ Աժտարիսան, ուր բարձրագոյն յայտարարութենով ծանոյց ժողովրդին այս նոր արշաւանքի պատճառը և նապատակը: Յուլիս ամսու մէջ Ռուսաց նաւախումբը՝ չորս հարիւր քառասուն երկու պէսպէս փոքրիկ նաւերէ, քանի հազարեայ զօրքէ, հինգ հազար նաւաստիներէ բազկացած և ծովակալ Ապրակիսինի առաջնորդութեանը յանձնած, սպարզեց առագաստները և հասաւ Աժտարիս սնի ծովածոցը: Հաղիւթէ Մեծն Պ'տրոսը իւր նաւատորմիզովն հասել էր Ասիոյ ափերին՝ իսկոյն Շահը և իշխանները իւրակամ հապակեցան նորա իշխանութեանը, առանց կոուի ա-

ւանդելով՝ նորաւ ձեռք քաղաքները և աւանները,  
Այսպէս, մէկերի ազատակամ՝ հպատակութիւնը  
ընդունելով՝ և միւսներուն խւր զէնքի զօրու-  
թեանը՝ նուաճելով՝ Ծգոստոսի 23ին կայսրը  
հասաւ Դարբանդին, որի բնակիչքը առանց զի-  
մադարձութեան անձնատուր եղան նորան, Դար-  
բանդի մէջ բերդապահ զօրք թողնելով, Կաս-  
պից ծովու ափումն մի նոր բերդ հիմնեց յա-  
նուն Ս. Խաչին, ուր հրամայեց տեղափոխուիլ  
Թիւքի քաղաքի, (որ ինքը հիմքից աւերել էր)  
բնակիչներին։ Պետրոս կայսրը կերակրոյ պա-  
շարի կարօտութիւն զգալով, պատերազմական  
գործերը թողուց մինչև միւս տարի, պատճառ  
որ նորա զարքի համար պատրաստած պաշարքը  
Աժտարիսանից ուղարկած ծովու վրայ փաթորկի  
հանդիպելով՝ նաւերու հետ միասին ջրասու-  
զուելէին։ Հոկտեմբերի սկզբանը կայսրը վերա-  
դարձաւ Աժտարիսան։

Այնտեղ, ինչ որ հարկաւոր էր առիջիկայ  
արշաւանքի համար, բոլորը պատրաստելուց յե-  
տոյ, Մեծն Պետրոս Նոյեմբերի 5ին թողաւ Աժ-  
տարիսանը և Գեկտեմբերի 18ին, ինչպէս յաղ-  
թող Դարբանդին և ուրիշ Պարսկական գաւառ-  
ներին, առօք փառքը մտաւ Ռուսաստանի նա-  
խագահ մայրաքաղաքը՝ Մոսկուա։

Հետեւեալ տարին Պարսկի Շահը Ռուսաց  
յաղթական զէնքի համն առած, դեսպան ուղար-

կեց Պ'տերբուրգ հաշտութիւն ինդրելով։ Պ'տեր-  
բուրը յօժարեցաւ. Հաշտութեան դաշինքը, որ  
Հաստատուեցան Սեպտեմբերի 12ին այս սլայ-  
մանով կատարուեցան. Պարսից Շահը Ռուսա-  
տանին տուաւ յետագայ գաւառները՝ Դաղըս-  
տանը, Եիրուանը, Գիլանը, Մաղանդարանը և  
Աստրապատը, իսկ Կայսրը խոստացաւ, որ իւր  
գորքով կ'օգնէ նորան հնազանդեցնելու ավըս-  
տամբած հպատակներին։

Այսպէս, իւր իշխանութիւնը Հաստատե-  
լով Բալտիկ և Կասպից ծովերու վերայ, Մեծն  
Պ'տրոսը իւր նուիրական ըղձին Հասաւ։

Պ'տրոսի գահակալութեան առաջին տարի-  
ները, Ռուսաստանը իւր լոյնածաւալ երկիրների  
մէջ միայն մի հատիկ ծով ունէր, որ է՛ Սպի-  
տակ ծովը, որ գտնուելով Հիւսիսի ամենաչե-  
ռաւոր ծայրումն, շատ սակաւ, կամ առաւել  
ճիշդն ասենք՝ ոչ քաղաքական և ոչ առևտրա-  
կան օգուտ կարողանում էր տալու Ռուսաստա-  
նին։ Իսկ Կայսերական տէրութիւնը Պ'տրոսին  
բացի Սպիտակ ծովէն, տիրում էր նաև Բալտիկ-  
եան, Ազովի և Կասպից ծովերուն, որք ոռո-  
գում էին նորա աշխարհի դիմադարձ սահման-  
ները։

Պ'տրոսը կամեցաւ ցոյց տալու իւր ժողո-  
վոդին, որ այդ տիրապետութիւնը ծովերու վե-

բայ նա ստացաւ իւր ձեռքով շինած նաւատորմղի օգնութենով, և այդ պատճառու մտադիր եղաւ տօնախմբութիւն կատարել՝ ի պատիւ այն նաւակին, որ առաջին անգամ ծնուցել էր նորա հոգու մլ.ջ սկզ դէսի ջուրը և նաւաշինութիւնը: Այդ խորհրդով հնոտած նաւակը կարկատեցին, վերանորոգեցին, պղնձապատեցին և Պոսկուաից բերին Կեվա գետի ափը: Օգոստոսի 10ին դրին նաւի վերայ և տարան կրօնշտագու, Կոյսրը, Կայսերուհին, բոլոր զբանիկները և ստար աշխարհների դեսպանները գնացին նորա ետևէն: Օգոստոսի 11ին, առաւօտեան ժամը 7ին քսան և երկու պատերազմիկ նաւերէ բաղկացած նաւատորմիղը ընդառաջ եկաւ և թնդանօթի որոտմունքով ողջունեց իւր «Պապի», գալուստը: Պապը գնաց իւր թոռներան այցելութիւն անելու, և ամէն մի նաւը, որին մօտենում էր նա, թրմբուկի դղրդմոնքով և նաւատիներու օկեցցէ՛ սղաղակով, յայտնում էր իւր բերկրանքը: Երբ որ Պապը նաւատորմիղի զննութիւնը աւարտեց և յետ գարձաւ դէսի նաւահանգիստ, երաժիշտը ցնծալի նուագներ հնչեցուցին և թնդանօթները նորից որոտմունք արձակեցին: Երբ որ այս մեծաշուք հանդէսը առարտեցաւ, Պետրոսը հրամայեց, որ այդ նաւակը պահեն Պետրոս-Պօղոսի բերդի մլ.ջ, ինչպէս յիշատակ գալոց սերունդներին, որոնք նայելով սորա վերայ միտերը բե-

րէին, թէնա սկզբնասլատձառն էր Արուսաստանի ծովային զօրութեան:

Յիշենք այստեղ մի ուրիշ հանդիսաւորութիւն, որ կատարուեցաւ ըստ դիպաց թագադրութեան Եկատարինէ Կայսերուհին՝ իւր մեծ Ամուսնոյ արժանի ժառանգին: Այդ անցքի պատճառաւ հրատարակուեցաւ 1723ի Նոյեմբերի 15ին յայտարարութիւն, ուր Կայսրը մի առ մի համարեց նորա ցոյց տուած երախտիքը թէ իւրին և թէ Արուսաստանին, բայց թագադրութիւնը, Պետրոսի տկար առողջութեան պատճառաւ, յետաձգուեցաւ մինչև առաջիկայ Մայիս ամիսը:

1724ի Ապրիլի սկզբանը Կայսրը գնաց Մոսկուա, ուր նորանոց առաջ եկել ժողովուել էին տէրութեան ամեն անուանի պաշտօնակալները, և Պետրոսը ներկայ գտնուեցաւ իւր ամուսնոյ թագադրութեանը, որ կատարուեցաւ Պերափոխման մայր-եկեղեցւոյ մէջ, Մայիսի 7ին:

Այս տօնախմբութենից յետոյ Պետրոս Կայսրը մնալով Մոսկուաի մէջ մինչ Յունիսի 16ը՝ վերադարձաւ իւր նոր աթոռանիստը. այս վերջին անգամն էր, որ նախագահ մայրաքաղաքի բնակիչքը տեսան իւրեանց սիրական անշահայիշատակ Կայսեր, որ միւս անգամ լըվերադարձու դէպի նոցաւ:

Պետերբուրգ գնալով՝ Պետրոսը, ըստ իւր

սովորութեան սկսաւ իւր լայնածաւալ տէրութեան ամեն ազդի գործերովն պարապելու. բայց նորա տկարութիւնը օրէ օր սաստկանում էր. իսկ Օգոստոսի 30ին, երբ նա ընդառաջ գնաց Ա. Ալքսանդր Նեվսկիի նշանաբարներին, որ նորա հրամանաւ Վլադիմիր քաղաքից տեղափոխել էին Պետերբուրգ, և ս առաւել վատթարացաւ ճանապարհին :

Բայց նա ուշ չըդարձնելով իւր վատառողջութեանը, այլ և բժիշկների խիստ պատուերին, որ առ ժամանակ մի թողնէր տէրութեան գործերը և ոտքը մայրաքաղաքից դուրս չդնէր, Պետրոսը գնաց Լադօգա՝ ի ջրանցքը ղննելու: Երբ որ իւր ղննութիւնը այդ փորելու ջրանցքի վրայ աւարտեց, Հոկտեմբերի 29ին մի փոքրիկ նաւով գնաց Սկստրօրեցի գործարանը: Փոթորկալից եղանակը ստիպեց նորան Լախտա լճի ափին իջնել. այստեղից (աւաղ բազդիդ, Ռուսաստան) դիտեց նա, որ մի նաւակ ջրասուզվում էր. իսկուն իւր նաւակը՝ նորա մէջի նաւաստիներով ուղարկեց այն թշուառներին օգնութիւն հասցնելու. բայց տեսնելով նաւաստիներու յամբ շարժմունքը՝ չըհամբերեց և ինքը շտապեց օկնութեան. ընկաւ լճի մէջ և մինչև կուրծքը ջրումը մնաց այնքան, մինչև որ ազատեց խեղղուողներուն. բայց սաստիկ մրսելով՝ շուտացուց իւր մահուան բոպէն: Եւ երբ Պե-

տերբուրգ վերադարձաւ՝ միանգամայն տկարացած էր և ոչինչ բժշկական հնարք չէր կարող վերադարձնել նորա կորուսած առողջութիւնը. բայց և այդ արտասուելի վիճակումն արհամարհելով իւր մարմնու և հոգու տանջանքը, չէր դադարում անմահ կայսրը իւր սիրական աշխատքի վերայ իննամբ տանելու. Բայց նա սաստիկ մտատանջվում էր թէ՝ արդեօք որի՞ն պիտի թողնէր իւր ժառանգութիւնը. արական սեռից ոչ մի մերձաւոր ազգական չունենալով, բայց իւր թոռնէն՝ Պետր Ալեքսէնդրիչին, նա տակաւին գետրուարի ծին հրատարակել էր աթոռաժառանգութեան հրովարտակ, որով սահմանադրուել էր այս օրէնքը թէ. «Թագաւոր իշխանը կարող է ինքը իւր կամքով ժառանգ ընտրելու»: Այդ յայտարարութեան հետ միասին լոյս ընծայուած էր մի ուրիշ գիրք՝ մակագրութենով **ПРАВДА ВОЛИ ЦАРСКИЯ** ։ Էօֆան Պրօկօպօվիչի յօրինածը, որի մէջ յառաջ բերած էին շատ օռինակներ և պատմական վկայութիւններ, որք հաստատում էին այդ յայտարարութեան իւմաստը:

**Աւելորդ չենք համարում այստեղ յիշել** Պետրոսի ընտանիքի մասին: Առաջին պատկից (Պետրոսի առաջին ամուսինից՝ Եւդոկիա դըշխոյից) Պետրոս Արքան ունէր երեք որդի՝ Ալեքսէյ, Պաղոս և Ալեքսանդր. Երկու առաջինքը

դեռ ևս մանկական հասակի մէջ լինելով՝ վախ-  
ճանել էին, իսկ առաջինը վախճանեցաւ իւր քսան  
և ուժամեայ հասակումն՝ հօր խնամքը, հոգու և  
ակնկալութիւնը, որ ունէր նորա վերայ, չ'ար-  
դարացնելով։ Այսաւ Ալէքսէյ արքայորդու վար-  
քագրութիւնը\*). Ալէքսէյ արքայորդին ծնաւ  
169 ին. իւր կենաց առաջին տարիները մասամբ  
իւր մեծ մօր և մասամբ հարազատ մօր մօտ  
անցուց. մինչև 1698 թուականը Պետրոս Ար-  
քան զբաղած մերթ Ազովի արշաւանքով, մերթ  
ապստամբներին հնազանդեցնելով և մերթ ճա-  
նապարհորդութիւններով՝ սկարապ և միջոց չու-  
նէր իւր որդու սկզբնական դաստիարակութեան  
վրայ մտադրութիւն դարձնելու։ Բայց յետոյ  
հասկացաւ, որ իւր անդրանկին մի վատթար,  
անբարոյական ուղղութիւն էին տուել. գրեթէ  
նորա միտքը ոչինչ օգտաւէտ գիտութենով չէին  
զարդարել, ոչինչ չէին սովորեցրել, և բացի  
գորանից՝ նորա մէջ անհաշտ ատելութիւն էին

\*). Այս մասին միանդամայն այլաղդ են վերջին ժամանակնե-  
րում յայսնուած Ռուսաց պատմագիրների կարծիքն. բայց այդ  
կարծիքը տակաւին չունին այնքան հաստատ փաստեր, որք կա-  
րող էնուին չըելու առաջինը, որով համոզուած է Ռուսաց ազգի  
վերից մինչև սովորակարդ աստիճանը. այդ է պատճառը, որ մենք  
ու իրեն չեադիր գնուրոս Արքային նոցն կարծիքին մնում ենք հա-  
ւատարիմ, այլ յաւէտ պաշտելով ճշմարտութիւնը. մանաւանդ մեր  
բարեխիղձ՝ այլապէս կարծելու իրաւունք չունէինք) դասախոսքը այդ-  
պէս էին կարդացել մեր առաջ համալսարանական բեմբից։

սերմանել իւր ծնօղի դէմ։ Ալէքսէյ արքայորդին իւր մանկական տարիները անցնելով Պետրոս Արքայի ոխերիմ և ծածուկ թշնամիներու մէջ, որոնք սովորացած էին հին նախապաշարմունքի մէջ, նոյն համոզմունքը սերմանել էին մատաղահաս տղայի սրտի մէջ՝ այնպէս պինդ, որ այնուհետև Պետրոսի ամեն իննամբը և ջանքը նորան ուղղելու, բարի ճանապարհի վերայ գնելու՝ անարդիւնք մնացին։ Երբ որ Նաթալիա դշխան իւր յարուցած վրդովմունքի համար պատուհասուեցաւ և մենաստանի մէջ փակաւեցաւ՝ իննամեայ Ալէքսէյ արքայորդին յանձնուեցաւ նախ գերմանացի գիտնական Նէյգէրառուէրին, և ապա Բառօն Հինգէնին, որ իւր բոլոր ձիգը, բոլոր հոգու ՚ի գործ դրաւ, որ արդարացնէ Պետրոս Արքայի ակնկալութիւնը, և ինքը Արքան անձանձիր մաքով վերահասու էր լինում։ Իւր որդու դաստիարակութեանը. բացի ուսումնական սլարասպմունքէն, փոքր առ փոքր ընդելացնում էր նորան զինուորական և ծովային սլաշտօնին և քաղաքական կառավարութեան. արշաւանքի գնալիս՝ սովորաբար հետն էր առնում նորան, փորձի համար զանազան գործեր էր ապսպարում, հրամայում էր ներկայ գտնուել բոյարների խորհրդարանի և շատ ուրիշ ատեանների մէջ։ Թէ և այս կերպով Ալէքսէյ Արքայորդին ինչ ասես բան ուղղուեցաւ, բայց ՚ի ներ-

քուստ սաստիկ ատում՝ էր ուսումնը։ Երկու նա-  
ռիշկինքը, շատ բոյարներ, մի քանի եկեղեցա-  
կան անձինք նաև Արքայի քոյլը՝ Մարիա դըշ-  
խոն, որոնց յանձնած էր արթուն աչքով խը-  
նալք տանել արքայորդու բարքի ու վարքի վե-  
րայ, ոչ միայն Հրջանացին կատարել Պետրոսի  
Խնդիրքը, այլ ընդհակառակն՝ առաւել մոլորե-  
ցուցին նորա միտքը, զինաւորեցին իւր հօր  
գէմ։ Մի ժամանակ այս ամենը ծածկաբար  
էր լինում Արքայէն. բայց շուտով Արքան խե-  
լամուտ եղաւ գործի խկութեանը. հեռացուց  
վնասակար մարդոցմէ. և ինքը պարապեցաւ որ-  
դու դաստիարակութենովն. նախ և առաջ փորձ  
փորձեց հեղահամբոյր միջոցներով խրատել որ-  
դուն և ուղիղ ճանապարհի վրայ դնել. բայց  
տեսնելով նորա կամակութիւնովն. նախ և առաջ փորձ  
ստիպուած էր նախատելու նորա անուղղայ վար-  
քը, եպերել և յաճախ նաև իւր ձեռքով չարա-  
չար պատուհասել։ Այսպիսի խստութիւնը ոչ  
միայն չուղղեց, այլ ևս առաւել գրգռեց ար-  
քայորդուն, որոյ հետևանքն այն եղաւ, որ հայր  
և որդի բաժանուեցան իրարմէ։ Շատ ժամանակ  
վրայ չանցած՝ որդին զղջաց և թողութիւն  
Խնդրեց հօրէն. Պետրոսը ներեց նորան և հաշ-  
տուեցաւ հետը և հրամայեց օտար երկիրների  
մլչ ճանապարհորդել։ Պետրոսի հրամանով Ա-  
լեքսէյ արքայորդին Գանիցիդ քաղաքումը պը-

սակուեցաւ. բայց և այդ ամուսնութիւնը մի առաքինի արքայազն օրիորդի հետ չուղղեց խըստարարոյ արքայորդուն։ Պետրոսը բարկութենից բորբոքած՝ հրամայեց նորան վերադառնալ Ռուսաստան, ուր նորա հետ եկաւ և նորա առաքինի ամուսինը, որ չորս տարի անշնարին տանջանքից յետոյ մեռաւ և թողուց նորան մի որդի՝ Պետրոս անունով և մի դուստր՝ Նաթալիա։ Պետրոս Ալքսան տեսաւ, որ այլ ևս հնար չըկար իւր որդուն ուղղելու՝ հրամայեց նորան հրաժարուել արքայական աթոռէն՝ յօդուտ իւր կրտսեր եղբօր՝ Պետրոսին, որ ծնել էր Պետրոսի երկրորդ պսակից Եկատարինէի հետ։ Բայց երբ որ Ալքսը դաւաճանութիւն գործելով իւր արքայազն ծնօղի դեմ և վախսենալով նորա բարկութենից, փախաւ սահմանից դուրս՝ այնժամանակ ատեանը, որ բաղկացած էր եկեղեցականաց և աշխարհականաց կարգի բարձրագոյն աստիճաննաւորներէն, մահու դատավճիռ կարգաց նորա վերայ։ Եւ երբ որ Ալքսայորդու առաջեւ կարգացին այդ սոսկալի, բայց արդար դատավճիռը՝ նա կաթուածահար մեռաւ բանտի մ.ջ, թէ և փոքր ինչ ժամանակ առաջ Պետրոսը ներել էր նորան, մոռանալով նորանից կրած վեշտերը։

Երկրորդ ամուսնութենից Պետրոսին ծնան երկու որդի, արքայորդի Պետրոս, որ յայտա-

բարուած էր աթոռաժառանգ, և որ իւր եռամեռայ հառակի մէջ վախճանել էր, և արքայորդի Պաւլ, որ ծնելուց յետոյ նոյն հետայն վախճանել էր. նմանապէս Պետրոսը ունէր երեք դուստր՝ Եղիսարէթ, Աննա և Նաթալիա դշլոները:

Դորանից երեսում է, որ Պետրոս Կայսրը վախճանելու բոպէին մեծ դժուարութեան մէջ էր, թէ արդեօք որին սկսի նշանակէր իւր ժառանգը, և այդ մասին ոչոքի չէր յայտնել իւր վճռական կամքը: Բայց թագադրելով իւր Եկատարինէ ամուսինին, Մեծն Պետրոսը իբրև թէ կամեցել էր ցոյց տալու, որ միայն նորան արժանի էր համարել իւր ժառանգը լինելու:

Տերութեան գործերն այսպիսի վիճակի մէջ էին, երբ Կայսրը իւր մահճի մէջ հիւանդ սպառկած՝ հասաւ 1725 տարին: Թէ և անտանելի տանջանքը ոչ մի բոպէ չէր դադարում մորմոքել նորա մարմնիք, բայց Պետրոսը նորանոր տօնախմբութիւններ, զբօսանքներ հնարելով, ասես թէ կամենում էր մեզմացնել իւր հիւանդութեան ոյժը, հեռացնել մահուան բոպէն, որ մեծ մեծ քայլերով մօտենում էր իւր արքայազն զոհին: Այդպէս՝ նա հնարեց մի ծիծաղելի ծէս՝ Խշան-Պապի ընտրութիւնը, որ միմոսական կերպով կատարուեցաւ. բայց գորանից շատ ծաղրաշարժ զբօսալքներ կատարուեցան նորա մահճի առաջն, որոնց Պետրոսը՝ ի բոլոր սրտէ անձ-

նաստուր էր լինում մի և նոյն ժամանակ անհոգ չըմնալով տէրութեան գործերուն։ Կա անձանձիր պարապած էր աշխարհի կառավարութենովն, ինքը կարդում էր բողոքներ և աղերսագիրներ, գրում կամ թելադրում էր հրամաններ, օրէնքներ և հրովարտակներ խւր հսկատակների համար և թղթակցութիւն էր անում Եւրոպիոյ թագաւորների հետ, և ինչպէս որ իւր կենդանութեան ժամանակ, այնպէս և մահումահն մէջ աշխատելով էր անցնում ժամանակը և ժամէ ժամ հանգչում, սպառում էր նորաթանգագին արել։ Յունուարի 16ին նորա հիւանդութիւնը, նորա մարմնու տանջանքը մինչեւ այն աստիճան հասան, որ աշխարհիս մէջ ամենից հզօր Միասկետը իւր ցաւերը սոսկալի հառաջանքով արտայայտում էր իւր մօտ գտնուողներուն։ „Իմ վերայ նայելով իմացէք, թէ ինչ թշուառ արարած է մարդուն։ ասում էր նա:

Դժուար է նկարագրել վիճակը նորա երախտադիտ հպատակներին, երբ որ լսան նոքա իրենց կայսեր մահուան տագնապները. ժողովուրդը անթիւ բազմութենով խռնուած էր ապարանի ջորա կողմը, ուր մահու հետ կռվում էր նոցա հոգեվարք Միասկետը. ոչոք չէր ուզում հաւատալ, որ նա պիտի մեռնէր. ամենը ախու վախ քաշելով, արտասունքի հեղեղ թափելով՝ յայտնում էր իւր հոգու տիսրութիւնը։

Յունուարի 22ին Պետրոսը նկատեց, որ մահը արդէն շատ մատեցել էր իրան. խոստովանեցաւ, հաղորդեցաւ և մնացած ժամանակը անցուց Սրբազն Ամաենի հոգեշահ ասացուածքը լսելով, որ կարգում էին նորա համար :

Յունուարի 28ին, առաւօտեան 6 ժամին Միջնի մարդկան հոգին աւանդեց իւր երկնաւոր Հօր ձեռքը:

Այսպէս վերջացուց իւր բազմաբդիւնք կեանքը ամենամեծը թագաւորների մ.ջ, որոնք երբ և իցէ յայտնուել էին աշխարհիս երեսին, իւր կենաց 52 տարեկան հասակումն, անմահ փառքով թագաւորելով Ռուսաց վերայ քառասուն երեք տարի:

Լսաղաղութիւն ուկերացդ, անմահայիշաւատակ Բարերար և Լուսաւորիչ Ռուսաստանի:

Ա. Ե. Բ. Զ.





